

ՇԱԲԱԹՈՐՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ  
ԱՍՏՎԱԾԱՀԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԶԵՂՆԱՐԿ

2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՍՍՅԱԿ

# ՍԿԻԶԲԸԼ

Լ. Զեյմս Գիբսոն

## Բովանդակություն

Դաս 1	29.12-04.01	Յիսուսը Երկնքի և Երկրի Արարիչն է.....	6
Դաս 2	05.01-11.01	Աշխարհի արարումը .....	14
Դաս 3	12.01-18.01	Արարումն ավարտված է .....	23
Դաս 4	19.01-25.01	Աստվածաշնչում ներկայացված արարումը.....	32
Դաս 5	26.01-01.02	Արարումն ու բարոյականությունը.....	40
Դաս 6	02.02-08.02	Արարումն ու մեղանչումը .....	49
Դաս 7	09.02-15.02	Խամրած ապակու միջով.....	57
Դաս 8	16.02-22.02	Յիսուսը հոգում է և սատարում.....	65
Դաս 9	23.02-01.03	Ընտանիքը Եղեմից Եկած պարզեն է.....	73
Դաս 10	02.03-08.03	Կառավարումը և շրջակա միջավայրը .....	82
Դաս 11	09.03-15.03	Շաբաթը Եղեմից Եկած պարզեն է.....	90
Դաս 12	16.03-22.03	Արարումը և Ավետարանը .....	98
Դաս 13	23.03-29.03	Եվ կրկին՝ արարումը .....	106





# ԲՈԼՈՐ ՍԿԻԶԲՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՄ

Բացելով Աստվածաշնչի առաջին գրքի առաջին գլխի առաջին իսկ տողը՝ դուք կնկատեք, որ այնուեղ բառ անգամ չի ասվում ո՛չ մեր մեղքերի համար մահացած Քրիստոսի, ո՛չ էլ մեռելներից Նրա հարույյան կամ երկրորդ գալստյան վերաբերյալ։ Այսուեղ չի հիշատակվում ո՛չ մահացածների վիճակի կամ դատաստանի օրվա, և ո՛չ էլ անգամ յոթերորդ օրվա՝ շաբաթի մասին։

Աստվածաշնչի առաջին բառերը չեն խոսում վերը թվարկվածների մասին, քանի որ այդ բոլոր ուսմունքները և դրանց հետ կապված ճշմարտությունները իմաստ չեն ունենա, եթե կտրվեին նրանից, ինչի մասին պատմում են Աստվածաշնչի առաջին խոսքերը՝ «Ակզրում Աստված աստեղծեց երկինքը և երկիրը»։

Արարումը Սուրբ Գրքի հիմնարար ճշմարտությունն է։ Աստվածաշնյան մնացած ամբողջ ուսմունքը՝ մարմնացումը, խաչը, երկրորդ գալուստը և մյուս դավանաբանությունները, հիմնվում են այն ճշմարտության վրա, որ մեր աշխարհի Տերն է արարել։

Այդ պատճառով արարման թեման շարադրված է ոչ միայն Աստվածաշնչի առաջին էջերում, այլ նաև Մովսեսի առաջին հինգ գրքերում, մարգարեական գրքերում, Սաղմոսներում, Ավետարաններում, առաքյալների թղթերում, Գործք առաքելոցում և Հայտնություն գրքում։ Անիրաժեշտ է ընդգծել, որ գրեթե բոլոր դեպքերում աստվածաբանական համատերստը պահանջում է այդ ճշմարտության բառացի դմբռնում։

Օրինակ, Պողոսը գրում է, որ «մահը բազավորեց Աղամից մինչև Սովուսը՝ Աղամի նման շմեղանչողների վրա էլ, որ օրինակ է նրա, որ գալու էր» (Հռոմեացիս 5.14): Պողոսը հենց այնպես չէ, որ բառացի Աղամին կապում է բառացի Հիսուսի հետ։ Հռոմեացիներին ուղղված ուղերձի հինգերորդ գլխի համատերատն ինքը այդ օղակը կապակցում է փրկության ծրագրի՝ հիմնական ուսմունքի հետ, որը նույնպես մենք հասկանում ենք բառացիորեն։ Մենք ընկած էակներ ենք, ում սպասում է կամ հավիտենական մահ, կամ հավիտենական կյանք՝ բառի բուն իմաստով։

Հիսուսն ինքը մեջբերում էր Ծննդոց Գրքի առաջին և երկրորդ գլուխների բառերը. «Նա էլ պատասխանեց և ասաց նրանց. Չե՞ք կարդացել, թե նա, որ սկզբից ստեղծեց, արու և էզ ստեղծեց նրանց, և ասաց. Սրա համար մարդ կթողնի իր հորը և իր մորը և իր կնոջը կհարի, և երկուսը կլինեն մեկ մարմին» (Մատթեոս 19.4,5): Եթե Հիսուսը արա-

րումն ընկալում էր տառացիորեն, ապա մեր կողմից ինչպիսի՞ անմտություն կլիներ՝ այլ կերպ ընդունել այն:

Հենց մեր «Յոթերորդ օրվա աղվենտիստներ» անվանումը անմիջականորեն ցույց է տալիս տառացի յոթնօրյա արարումը: Թեև ոմանք ցանկանում են մեր աստվածաբանության մեջ ներառել էվոլյուցիայի տեսությունը, Յոթերորդ օրվա աղվենտիստները գիտեն, որ դա անհնարին որ դա կնշանակեր ոչնչացնել այն ամենը, ինչին մենք հավատում ենք: «Յոթերորդ օրվա դարվինիստը» Յոթերորդ օրվա աղվենտիստ չէ և չի էլ կարող լինել:

Այս եռամսյակի դասերը նվիրված են Ծննդոց գրքի առաջին և երկրորդ գլուխներում ներկայացված արարման դավանաբանության ուսումնասիրմանը, ինչպես նաև՝ այդ դավանանքի կապին մեր մի շարք այլ հայացքների հետ, ներառյալ՝ բարոյականությունը, մեղքը, ամուսնությունը, կառավարումը և այլն: Բացի արարման պատմությունը բառացիորեն ընկալելու շեշտադրումից, ձեռնարկում ևս մեկ անգամ ցույց կտրվի, թե ինչպես է Աստվածաշնչի առանցքային լուրջ հիմնվում արարման մասին պատմական ճշմարտության վրա:

Վերցնենք, օրինակ, Ավետարանը: Էվոլյուցիոն մոդելի համաձայն՝ Տերը մարմնանում է մարդանման կապկի մեջ, որն ստեղծվել է սպանությունների սարսափելի, ցավազին շարքի՝ այսպես կոչված թնական ընտրության արդյունքում, և այդ ամենը՝ որպեսզի վերացնի մահը՝ վերջին թշնամուն (տե՛ս Ա Կորնթացիս 15.26): Բայց ինչպե՞ս կարող է մահը լինել թշնամի, եթե դա մարդու արարման համար Աստծոն ընտրած միջոցներից մեկն է: Չէ՞ որ եթե Աստված օգտագործել է էվոլյուցիան, Նա ստիպված է եղել բազում «ուղղագնաց», «հեյդերգյուղան մարդ» և «նեանդերթալցի» ծախսել, որպեսզի վերջապես ստանա իր կերպարին համապատասխանող մարդուն («բանական մարդուն»): Եթե էվոլյուցիան իսկապես տեղի է ունեցել, ապա Հասուք եկել է՝ մարդկությանը փրկելու այն գործընթացից, որի օգնությամբ Աստված ստեղծել է մեզ:

Այստեղ մենք կարող ենք տեսնել, որ աստվածաշնչյան ճշմարտությունների խառնումը ոչ աստվածաշնչյան տեսակետների հետ կարող է տրամաբանական անհերեբություն առաջ բերել, և անկեղծորեն ճշմարտություն որոնողին այս հարցը պետք է անհանգստացնի: Այս եռամսյակի դասերն ուսումնասիրելիս մենք կտեսնենք, թե ինչու արարման բառացի յոթնօրյա շաբաթվա մասին ճշմարտությունն էական նշանակություն ունի այն ամենի համար, ինչին մենք հավատում ենք, և ինչու տվյալ հարցում փոխսպազմը փոխսպազման է հանգեցնում ամեն ինչում, ինչը մեզ դարձնում է այն, ով մենք կանք:

Լ. Ձեր գիտության և կատարման հետազոտական ինստիտուտի (www.grisda.org) վճռորհնուն է (Լուսա Լինդա, Կալիֆոռնիա), արարտագործության և գիտության միջև փոխադարձ կապի թեմայով  
միշտ շարք հոդվածների հեղինակ:

## **ՀԻՍՈՒՍԸ ԵՐԿՆՔԻ ԵՎ ԵՐԿՐԻ ԱՐԱՐԻՉՆ Է**

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 1.1, Երրայիցիս 11.3, Սաղմոս 18.2-4, Հովհաննես 1.1-3, 14,  
Կողոսացիս 1.15, 16, Հովհաննես 2.7-11:

### **Հիշելու համարը**

«Սկզբուն Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդոց 1.1):

Յանկացած իր ստեղծված է ինչ-որ ավելի մեծ մեկի կողմից, քան ինքն է: Այդպիսով, միայն տիեզերքից ավելի մեծ Անձնավորությունը կարող էր արարել տիեզերքը: Եվ այդ Անձը Աստված է, ով մեզ բացգում է Աստվածաշնչի էջերում, Աստված, ում մենք երկրագում և ծառայում ենք, քանի որ, քացի ամեն մնացյալից, Նա մեր Արարիչն է:

Տիեզերքն արարած և ողջ տիեզերական տարածության մեջ գալակտիկաներ ստեղծած Աստված այն նույն Աստվածն է, ով եկավ երկիր, որ ապրի մեր մեջ՝ որպես մարդ և, որ ավելի զարմանալի է, որ Իր վրա կրի մեր մերժերի պատիժը:

Երբեմն մենք լսում ենք ինչ-որ քանի մասին, որ «չափազանց լավն է ճշմարիտ լինելու համար»: Բայց ի՞նչը կարող է ավելի լավ լինել մեզ համար, քան այն հրաշալի ճշմարտության գիտակցումը, որ մեր Արարչի սերն այնքան մեծ է, որ Նա եկավ Քրիստոսի Անձով և Իրեն անքակտելի կապերով կապեց մեզանից յուրաքանչյուրի հետ:

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր կյանքն՝ ի պատասխան այդ զարմանահրաշ ճշմարտության:

### **Միաշաբթի**

**դեկտեմբերի 30**

## **Սկզբում**

**«Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդոց 1.1):**

Այս պարզ համարում բազում խորը ճշմարտություններ են ամփոփված: Ամենաականավոր ճշմարտություններից մեկը ճշմարտությունն է այն մասին, որ տիեզերքն ունի սկիզբ: Թեև այդ զաղափարը այսօր մեզ առանձնապես արմատական չի թվում, այն հակասում է մշտագո

արարչագործության մասին տարածված հայացքին: Ընդհուպ մինչև բաներորդ դարը, երբ լայն տարածում ստացավ «մեծ պայրյունի» տեսությունը, որի արդյունքում իբրև թե ի հայտ է եկեղ կյանքը, այն գաղափարը, որ տիեզերքն սկիզբ է ունեցել, համընդհանուր ճանաչում չուներ: Մինչ այդ շատերը հավատում էին, որ այն միշտ գոյություն է ունեցել: Նրանք չին ընդունում տիեզերքի արարման գաղափարը, քանի որ դա ենթադրում էր Արարչի Անձի գոյություն: (Փաստորեն, «մեծ պայրյուն» անվանումը նպատակ ուներ ծաղրի ենթարկել տիեզերքի արարման մասին պատկերացումը): Բայց այն բանի վկայությունը, որ տիեզերքը սկիզբ է ունեցել, դարձել է այնքան հզոր, որ գրեթե բոլոր գիտնականները համաձայնել են դրան, առնվազն՝ ներկայում (գիտական հայացքները, անգամ նրանք, որոնք նախկինում համարվել են անհերքելի, հաճախ փոփոխվել կամ հերքվել են):

### **Կարդացե՛ք Եբրայեցիս 11.3-ը: Այստեղ ի՞նչ է ասվում Աստծո և տիեզերքի արարման մասին:**

---

Ինչպես և Ծննդոց 1.1-ում, Եբրայեցիս 11.3 համարում մենք խորհրդավոր շատ բան ենք գտնում, ինչ չենք կարող բացատրել՝ ելնելով մեր գիտելիքներից: Սակայն այդ համարն իսկապես խոսում է այն մասին, որ տիեզերքը չի ձևավորվել ավելի վաղ գոյություն ունեցող մատերիայից: Տիեզերքն ստեղծվել է Աստծո Խոսքի գորությամբ, այսինքն՝ ինչպես նյութը, այնպես էլ էներգիան գոյության են կոչվել Աստծո գորությամբ:

Ոչնչից արարումը լատիներեն արտահայտվում է «ex nihilo» (ոչընչից) եզրույթով: Մենք ասում ենք, որ մարդիկ բազում տարատեսակ իրեր են ստեղծել, բայց նրանք չեն կարող ստեղծել ոչնչից: Մենք կարող ենք փոխել ավելի վաղ գոյություն ունեցող նյութի ձևը, բայց ընդունակ չենք արարել «ex nihilo»: Միայն Աստծո գերբնական գորությունն է դրան ընդունակ: ‘Իա Աստծո և մարդկանց ամենաէական տարբերություններից մեկն է, որը հիշեցնում է մեզ, որ մեր գոյությունն իսկ կախված է Աստծոց:

Ծննդոց 1.1-ի «ստեղծեց» բայց փաստորեն ծագում է Եբրայերեն նույնարմատ բառից, որը հիմնականում օգտագործվում է Աստծո ստեղծաբար ակտիվության վերաբերյալ: Միայն Աստված կարող է այդպես արարել, մարդիկ դա ի զորու չեն անել (տե՛ս նաև Հռոմեացիս 4.17):

**Ինչո՞ւ է իր արարչագործությունից անկախ (վերև և դուրս) գոյություն ունեցող գերբնական Արարչի գոյությունը արարման միակ**

տրամաբանական բացատրությունը: Զեր պատասխաններով կիսվե՞ք շաբաթ օրվա դասին:

## Երկուշաբթի

**դեկտեմբերի 31**

### **Երկինքն է քարոզում**

«Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունը իմացնում է նրա ձեռքի գործերը: Օրը օրին խոսք է բխում, և գիշերը գիշերին գիտություն է ցույց տալիս: Լեզու չկա, և խոսք չկա. Նրանց ծայնը լսելի չէ» (Սաղմոս 19.1-3, տե՛ս նաև Հոռմեացիս 1.19,20): Դուք համոզվե՞լ եք այս համարների ծշնարտացիության մեջ: Ժամանակակից գիտությունն ինչպե՞ս է օգնում մեզ՝ Է՛լ ավելի գնահատելու Արարիշ Աստծո զորությունն ու իմաստությունը:

---

---

---

Ամեն աշխարհ չէ, որ ի վիճակի է պահպանել կյանքը: Ավելին, ըստ ամենայնի, աշխարհը պետք է հատուկ կերպով հարմարեցված լինի նրանում կյանքի գոյության համար: Նախ, ցանկացած նյութի «շինարարական մեծ աղյուսները»՝ ատոմները, պետք է բավականաչափ կայուն լինեն ամուր նյութական օրյեկտների ստեղծման համար: Ատոմների կապակցվածությունը կախված է այն ուժերից, որոնք դրանց մասնիկները պահում են միասին: Ատոմներում կան լիցքավորված մասնիկներ, որոնք ձգում և փառում են մեկը մյուսին: Ձգողության և փառման ուժերը պետք է հավասարակշռված լինեն: Եթե ձգողության ուժերը չափազանց ուժեղ լինեին, ապա կձևավորվեին միայն մեծ ատոմներ, և չեր լինի ջրածինը: Եթե գերակշռեին վանման ուժերը, ապա կձևավորվեին միայն փոքրիկ ատոմներ, ինչպես ջրածինը, և չին լինի ածխածինը կամ թթվածինը: Առանց թթվածնի չեր լինի ջուրը, և չեր լինի կյանքը: Ածխածինը, ինչպես հայտնի է, նույնապես միանգամայն կարևոր է կյանքի բոլոր ձևերի համար:

Ատոմները պետք է լինեն ոչ միայն ամուր, այլև՝ ընդունակ փոխազդելու միմյանց հետ, որպեսզի ձևավորվեն հսկայական քանակությամբ տարրեր քիմիական կառուցվածքներ: Որպեսզի տեղի ունենան կյանքի համար անհրաժեշտ քիմիական փոխազդեցությունները, պետք է հավասարակշռություն պահպանվի մոլեկուլները միմյանց կապող ուժերի և մոլեկուլի ճեղքման համար անհրաժեշտ էներգիայի միջնի:

Կյանքի համար մեր աշխարհի այդպիսի ապշեցուցիչ հարմարվածությունը հիացնում է գիտնականներին և նրանցից շատերին ստիպում ընդունել, որ այն ստեղծվել է գիտակից Անձի կողմից:

Աշխարհը նաև պետք է իմաստուն կերպով մտածված լինի, որ պեսզի նրանում գոյություն ունենա կյանքը: Զերմաստիճանների տիրույթը պետք է համատեղելի լինի կյանքի հետ, այդ պատճառով հեռավորությունը Արևից, պատույտի արագությունը և Երկրի մքննորսույթի բաղադրությունը՝ ամեն բան պետք է ճշգտորեն հաշվեկշռված լինի: Պետք է մանրազնին կերպով մտածված լինեն նաև այս աշխարհի բազմաթիվ այլ բաղադրիչներ: Հիրավի, Աստծո իմաստությունը երևում է այն ամենի մեջ, ինչ Նա արարել է:

## **Երեքաբթի**

## **Իունվարի 1**

### **Նրա Խոսքի գորությունը**

Կարդացե՛ք Երեմիա 51.15,16-ը և Սաղմոս 33.6,9-ը: Բացի իմաստությունից, Աստծո ինչպիսի՞ բնութագիր է հիշատակվում արարման մասին պատմող այդ տեքստերում: Այդ հատկությունն ինչպե՞ս է արտահայտվել արարման մեջ: Ո՞րն է այդ ծննարտության նշանակությունն այսօր մեզ համար:

---

Թեև մենք ճշգրիտ չգիտենք, թե Աստված հատկապես ինչպես է արարել, մեզ ասված է, որ Նա դա արել է Իր ամենազոր խոսքով: Տիեզերքի ողջ էներգիան սկիզբ է առել Աստծո խոսքից: Մեր ռեսուրսների ողջ էներգիան սկիզբ է առել Աստծո զորությունից: Տիեզերական ձգողության ողջ ուժը, իր ուղեծրով շարժվող ցանկացած աստղ, և յուրաքանչյուր սև խոռոչ Աստծո զորության արդյունքն է:

Հնարավոր է, որ էներգիայի մեծագույն քանակությունը պարունակվում է հենց աստոմի մեջ: Մենք արդարացնորեն տպավորված ենք միջուկային գենքի հզորությամբ, որում մի փոքր քանակի նյութը վերածվում է ահոելի քանակությամբ էներգիայի: Միևնույն ժամանակ գիտնականները վկայում են, որ ցանկացած նյութ պարունակում է էներգիա: Եթե փոքր քանակի նյութը կարող է այդպիսի էներգիա հաղորդել միջուկային գենքին, մտածե՛ք, թե որքան էներգիա է պահպած մեր ողջ Երկրի մատերիայի մեջ: Բայց դա ոչինչ է՝ տիեզերքի մատերիայի մեջ ամփոփված էներգիայի համենաստությամբ: Իսկ այժմ պատկերացրե՛ք Աստծո զորության հզորությունը, որ արարել է տիեզերքը:

Ծատ գիտնականներ համարում են, որ արարման մեջ Աստված սահմանափակված է «բնության օրենքների» շրջանակներով, բայց այդպիսի տեսակետը չի համապատասխանում Աստվածաշնչին: Աստված սահմանափակված չէ բնական օրենքներով, ընդհակառակը, Նա է դրանք սահմանել: Աստծո զորությունը միշտ չէ, որ հետևում է այն մողելներին, որոնք մենք անվանում ենք «բնության օրենքներ»:

Օրինակ, ամենահիմնարար «բնության օրենքներից» մենք «նյութի և էներգիայի պահպանման օրենքն է»: Այդ օրենքը պնդում է, որ տիեզերքում նյութի և էներգիայի քանակը մնում է անփոփոխ: Բայց ինչպես սի հայտ կգար տիեզերքը, եթե այդ օրենքը լիներ ամսախտելի: Աստծո արարիչ խոսքը կապված չէ գիտության «օրենքների» հետ: Աստված իշխում է Իր արարչագործության վրա և ազատ է մարմնավորելու Իր կամքը:

Որքան հնարավոր է, փորձեք պատկերացնել տիեզերքի չափերը: Խորհե՛ք այն անհավանական զորության մասին, որն անհրաժեշտ է այդ ամենի ստեղծման համար: Մտորե՛ք նաև այն մասին, որ Աստված, ով օժտված է այդպիսի զորությամբ, սիրում է մեզ, և նույնիսկ մահացել է մեզ համար: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել միսիթարություն գտնել այդ զարմանալի ճշմարտության մեջ:

## Զորեցաբթի

## Իունվարի 2

### Հիսուսն Արարիչ է

Կարդացե՛ք Հովհաննես 1.1-3,14-ը, Կողոսացիս 1.15,16-ը, Երայեցիս 1.1,2-ը: Ո՞ւմ են Նոր Կտակարանի հեղինակները ներկայացնում որպես Արարիչ: Դա ի՞նչ է նշանակում ձեզ համար: \_\_\_\_\_

Հովհաննեար Հիսուսի մասին խոսում է որպես Խոսքի («Լոգոս») և Նրան համարում է Աստծուն հավասար: Հիսուսի միջոցով է ստեղծվել ամեն ինչ: Հովհաննեսի օրերում «լոգոս» բառը սովորաբար օգտագործվում էր ստեղծագործական սկզբունքը մատնանշելու համար: Հովհաննեսի ընթերցողները ծանոթ էին «լոգոսի» հայեցակարգին՝ որպես ստեղծագործական սկզբունքի կամ նույնիսկ որպես արարչի: Հովհաննեար նրանց ծանոթ այդ հայեցակարգն օգտագործում է Հիսուսի վերաբերյալ՝ Նրան ցույց տալով որպես ճշմարիտ Արարիչ:

Հիսուսը՝ Բանը, ով մարմնացավ, ով ապրում էր մեր մեջ, ոչ թե

պարզապես ներկա էր սկզբում, այլ տիեզերքի Արարիչն էր: Դա նշանակում է, որ Ծննդոց 1.1 տեքստը մենք կարող ենք կարդալ հետևյալ կերպ: «Սկզբում Հիսուս ստեղծեց երկինքն ու երկիրը»:

Կողոսացիս 1-ին գլխում Պողոսի խոսքերը հաստատվում են Հովհաննեսի խոսքերով, երբ նա Հիսուս Քրիստոսին ընդունում է որպես Արարիչ: Նա է ստեղծել ամեն ինչ: Պողոսն ավելացնում է Հիսուսի և երկու բնութագրեր: Նախ, Նա աներևույթ Աստծո պատկերն է: Մեր մեղաքոր վիճակում մենք չենք կարող տեսնել Հայր Աստծոն, առաջան մենք կարող ենք տեսնել Հիսուսին: Եթե մենք ցանկանում ենք իմանալ, թե ինչպիսին է Աստված, ապա կարող ենք ուսումնասիրել Հիսուսի կյանքը (Հովհաննես 14.9): Երկրորդ, Պողոսը Հիսուսին անվանում է «ամեն ստեղծվածներից առաջ ծնված» (Կողոսացիս 1.15): Տվյալ համատեքստում «ծնված» բառը ցույց է տալիս ոչ թե ծագումը, այլ կարգավիճակը: Առաջնեկն ընտանիքի գլուխն էր և ունեցվածքի ժառանգորդը: Հիսուսն «առաջնեկ» էր նախ՝ որպես Արարիչ, և հետո՝ մարմնացման շնորհիվ Նա մարդկային ընտանիքի օրինական Գլուխն է: Հիսուսը չի ստեղծվել, հավիտենից ի վեր Նա մեկ է եղել Հոր հետ:

Երրայեցիս 1.1,2 համարները կրկնում են նույն միտքը, ինչ և Կողոսացիս բրդի հատվածը: Հիսուսը ամեն ինչի ժառանգորդն է, Նա է ստեղծել աշխարհը: Ավելին, Նա ճշտորեն հայտնում է Հոր Էությունը, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Հիսուսը Աստծո կերպարն է:

**Դուք ի՞նչ կպատասխանեիր հարցին, թե ինչպիսին է Աստված: Ինչի՞ վրա կիհմնվի ձեր պատասխանը:**

## Հինգշաբթի

## Իունվարի 3

### **Արարիչը՝ մեր մեջ**

**Կարդացե՛ք Հովհաննես 2.7-11-ը, 6.8-13-ը, 9.1-34-ը: Այդ համարներն ի՞նչ են ասում Աստծոն արարիչ զորության մասին: \_\_\_\_\_**

Այս հրաշքներից յուրաքանչյուրն օգնում է տեսնել Աստծո զորությունը, որը գերազանցում է Նրա ստեղծած նյութական աշխարհին:

Օրինակ, ի՞նչ քիմիական զործընթաց կպահանջվեր, որպեսզի ջուրը միանգամից վերածվեր գինու: Մեզ հայտնի՝ և ոչ մի: Իսկապես, Աստծո այդպիսի գործողությունը դուրս է գալիս բնության օրենքների՝ առնվազն մեզ հայտնի շրջանակներից:

Զկան և հացերի հրաշքում Հիսուսը հինգ հաց և երկու ոչ մեծ

ձկնիկ վերցրեց և դրանք վերածեց այնպիսի քանակությամբ սննդի, որ բավական եղավ բազում մարդկանց կշտացնլու համար, ինչից հետո դեռ 12 զամբյուղ էլ մնացողը հավաքվեց: Ողջ սնունդը բաղկացած էր ատոմներից և մոլեկուլներից: Վերջում պարզվեց, որ սննդի ատոմներն ու մոլեկուլներն ավելի շատ էին, քան այն ժամանակ, երբ Հիսուսն սկսեց կերակրել ժողովրդին: Որտեղից ի հայտ եկան լրացուցիչ մոլեկուլները, եթե ոչ Աստվածային գերբնական միջամտության արդյունքում:

Այսուհետև, ի՞նչ ֆիզիկական փոփոխություններ տեղի ունեցան կույր մարդու հետ, երբ նա քժշկվեց: Պատաճին ի ծնե կույր էր, այդ պատճառով նրա ուղեղը երբեւ չէր ձևավորել կերպարները, որոնք աչքն ուղարկում է տեսողական նյարդի միջոցով: Նշանակում է, որ նրա ուղեղը պետք է վերափոխվեր, որպեսզի մշակեր մուտք գործող տեղեկատվությունը, ձևավորեր կերպարները և մեկնարաններ դրանց նշանակությունը: Բացի դրանից, ինչ-որ քան կարգին չէր հենց աչքերի հետ:

Հնարավոր է, որ որոշ ֆուտոռեցեալտորային մոլեկուլներ վնասվել էին՝ նրա ԴՆԹ-ում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում: Կամ էլ, հնարավոր է, ծնվելիս որոշ ֆոփոխությունների էին տեղի ունեցել գեներում, որոնք հսկում են աչքի մասերի զարգացումը՝ ցանցաքաղանքը, տեսողական նյարդը, ակնաբյուրեղը և այլն: Կամ, կարող է պատահել տեղի էին ունեցել ինչ-որ մեխանիկական վնասվածքներ, որոնք աչքերին խանգարում էին ճիշտ գործել:

Որոնք էլ լինեին այդ պատահու կուրության պատճառները, Հիսուսի խոսքերը մոլեկուլները տեղադրեցին ճիշտ տեղերում՝ ստեղծելով ֆունկցիոնալ ռեցեպտորներ, նյարդաբջջային կապեր և ուղեղային բջիջներ, որպեսզի աչքի միջով անցնող լույսը ձևավորեր պատկեր, և մարդու կարողանար ճանաչել այն, ինչը նախկինում երթեք չէր տեսել:

Յրաշալի է, երբ իրաշըներ են տեղի ունենում, բայց ո՞րն է վտանգը, եթե մենք մեր հավատը կառուցում ենք միայն դրանց վրա: Ինչի՞ վրա պետք է հիմնվի մեր:

## Յեփագա ուսումնասիրության համար

«Գիտությունը երբեք չի բացատրի արարման աշխատանքը: Ի՞նչ գիտություն կարող է բացատրել կյանքի առեղծվածը: Այն տեսությունը, թե իբրև Աստված չի ստեղծել մատերիան, երբ գոյության էր կոչում աշխարհը, զորկ է որևէ հիմնավորումից: Մեր աշխարհի արարման

ժամանակ Աստված չի օգտագործել նախկինում գոյություն ունեցած նատերիան:

Հակառակը, ողջ նյութականն ու հոգևորն Աստծո առջև հայտնվեց Իր խոսքով և ստեղծվեց Իր իսկ նպատակի համար: Երկինքը և նրա բոլոր զորքերը, երկիրը և այն ամենը, ինչ կա նրա վրա, ոչ միայն Նրա ձեռքի գործերն են, այլև ի հայտ են եկել Նրա շուրջերից ելած խոսքով» (Ե. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հտ.8, 258, 259):

«Աստված մարդկանց չի բացել, թե հատկապես ինչպես է իրականացվել արարման աշխատանքը: Մարդկային գիտությունը չի կարող ներքափանցել Ամենաբարձրյալի առեղծվածների մեջ: Նրա ստեղծագործ զորությունը նույնքան անընդունելի է, որքան և Նրա գոյությունը» (Ե. Ուայթ, Նահապետներ և մարգարեններ, 113):

## Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկեք միաշաբթի օրվա նյութի վերջին հարցի ձեր պատասխանները:
2. Գիտությունը խոսում է այսպես կոչված մարդաբանական համընկնումների մասին (հունարեն «անթրոպոս»՝ մարդ բառից): Խոսքը վերաբերում է բնության մեջ ուժերի անհավատալիորեն ճշգրիտ հավասարակշռությանը, ինչը հնարավոր է դարձնում մարդկային կյանքը: Սակայն ուշադրություն դարձրեք «համընկնումներ» բարի նշանակությանը: Եթե դուք չեք հավատում Աստծուն, նշանակում է՝ այդ գարմանալի համընկնումները վերագրում եք կույր պատահականությանը: Քավատը, որ այդ համընկնումներն Աստծոն ստեղծագործ զորության արդյունքն են, առավել խելամիտ բացատրություն է, քան դրանք պարզ պատահականությանը վերագրելը:
3. Մտորեք Արարչի սիրո մասին, ով ստեղծեց Ադամին ու Եվային, նրանց շրջապատեց հիասքանչ պարտեզով՝ իմանալով, որ ինքը ստիպված կլինի տառապել և Գողգոթայում մահանալ Իր իսկ արարածների ձեռքով: Չնայելով ոչ մի բանի՝ արարելու Աստծո որոշումն ի՞նչ է մեզ ասում Նրա սիրո մասին:
4. Ինչպես կարելի է համեմատել «մեծ պայթյունի» տեսությունը և Ծննդոց 1.1-ում գրի առնված արարման պատմությունը: Չնարավի՞ն է Աստծոն խոսքով տիեզերքի ծագումը նկարագրել որպես «մեծ պայթյուն»: Դուք ի՞նչ խնդիրներ կամ բարդություններ եք տեսնում այդ գաղափարի մեջ: Ինչո՞ւ է վտանգավոր մեր աստվածաբանությունը որևէ գիտական տեսության հետ կապելը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ գիտությունն այդքան փոփոխական է:

## ԱՃԽԱՐՅԻ ԱՐԱՐՈՒՄԸ

**Այս շաբաթվա ուսումնակրույքան համար կարդացե՛ք.**

Ծննդոց 1.1-13, Եսայիս 45.18, Ա Հովհաննես 1.5, Հայոցնույթուն 22.5, Բ Կորնելիացիս 4.6, Բ Պետրոս 3.5, Հոր 38.4-6:

### **Հիշելու համարը**

«Որպիսիք այսպես է ասում Եհովան՝ երկինքն սրեղծողը, նա է Սալված, որ կազմեց երկիրը և արեց նրան՝ հասկապեց նրան. նրան չարեղծեց դաստիարկ, այլ բնակվելու համար սրեղծեց նրան. իս եւ Եհովան, և ուրիշը չկա» (Եսայիս 45.18):

Գիտնականներին ավելի ու ավելի է զարմացնում այն, թե որքա՞ն լավ է երկիրը հարմարեցված այնտեղ կենդանի էակների բնակության համար: Եվ դա զարմանալի չէ, քանի որ մտահղացումն ու նպատակն իրենց հաստատումն են գտնում Աստվածաշնչում՝ սկսած Ծննդոց 1-ից: Սկսելով անձև ու դատարկ մոլորակից՝ առաջին երեք օրերին Աստված երկիր էր ստեղծում բնակության համար, իսկ հետագա երեք օրերին բնակեցնում էր այն: Այս շաբաթվա դասը կենտրոնացած է արարման շաբաթվա առաջին երեք օրերի վրա:

Որոշ գիտնականներ համաձայն չեն այն բանի հետ, որ Աստված բնությունն ստեղծել է որոշակի նապատակով. նրանք համարում են, որ Նա պարզապես նյութական աշխարհին թույլ է տվել՝ «լինել այն, ինչ կա» և զարգանալ՝ նրանում ներդրված բնական գործընթացների շնորհիվ: Այս տեսակետոր համընդիանուր տարածում ունի «թեխստական էվոլյուցիայի»\* տարրեր տեսակների մասին քարոզչությունն իրականացնողների շրջանում: Բայց նման զաղափարները չեն համապատասխանում Սուրբ Գրքին և արարման հարցի մեր ըմբռնմանը: Տիեզերքը սեփական բնատուր կամք չունի: Արարչագործությունը գոյություն չունի Աստծուց անկախ, այն ընտրված է Աստծո կողմից, որպեսզի Նա կարողանա նրա վրա հեղել իր սերը:

\* Թեխստական էվոլյուցիան հայեցակարգ է, որը անորում է, թե Աստծո մասին դասական կրոնական ուսմունքները համատեղելի են Դարվինի կենսաբանական էվոլյուցիայի մասին ժամանակակից գիտական տեսակետի հետ:

## «Անձն ու դատարկ»

«Սկզբում Աստված ստեղծեց Երկինքը և Երկիրը: Եվ Երկիրն անձն ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Շոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդոց 1.1,2): Այս համարներն ի՞նչ են ասում Երկրի մասին՝ նախքան Աստված կսկսեր կյանք ստեղծել նրա վրա:

---

---

Աստվածաշունչն սկսվում է արարման պատմությունից, իսկ այդ պատմությունն սկսվում է այն պնդումից, որ Աստված է Արարիչը: Հետո գալիս է աշխարհի նկարագրությունը, որն Աստված սկսեց նախապատրաստել բնակության համար: Աստվածաշնչյան պատումի սկզբում մոլորակն արդեն գոյություն ունի, բայց այն անձն է, դատարկ, խավար և ջրով ծածկված: Հետագա համարները նկարագրում են, թե ինչպես Աստված նախ աշխարհը դարձնում է բնակության համար պիտանի վայր, իսկ հետո լցնում այն կենդանի էակներով: Տեքստը չի ասում, թե հատկապես երբ են սկսել գոյություն ունենալ երկրի քարերը և ջորը, այլ միայն հայտնում է, որ աշխարհը միշտ չէ, որ պիտանի է եղել կյանքի համար: Աշխարհը կենդանի էակների համար պիտանի է դարձել միայն Աստծո գործողությունների շնորհիվ:

**Եսայիհա 45.18 համարն ի՞նչ է մեզ հայտնում արարման ժամանակ Աստծո նշադրության մասին:** \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Երբ Երկիրը նոր էր երևան եկել, այն պիտանի չէր կյանքի համար: Աստվածաշունչը չի ասում, թե որքան ժամանակ է անցել քարերի ու ջրի ստեղծման և շրջակա միջավայրի, կենդանի էակների արարման միջև: Որոշ հետազոտողներ համարում են, որ դա կարող էր տեղի ունենալ անմիջապես, մյուսները ենթադրում են, որ մեկի և մյուսի միջև շատ ժամանակ է անցել: Ծշմարտությունն այն է, որ մենք դա չգիտենք, և տվյալ տեղեկատվությունը մեզ համար մեծ նշանակություն չունի: Ինչպես էլ լինի, Աստված ստեղծել է Երկիրը, իսկ հետո, երբ անհրաժեշտ է համարել, արարել է կյանքի համար քարենապաստ շրջակա միջավայր:

Կարևորն այն է, որ անկախ նախկինում գոյություն ունեցած մատերիալից՝ Տերը օգտագործել է այդ մատերիան, չնայած որ «նախասկզբնական» վիճակում այն եղել է «քոյսու բարոխու» (անձն ու դատարկ): Հետո Իր խոսքի գորությամբ Նա ստեղծել է մեր՝ ապրելու համար պիտանի աշխարհը:

## **Երկուշաբթի**

## **հունվարի 7**

### **«Եղիցի լույս»**

«Եվ Աստված ասաց՝ Լույս լինի, և լույս եղավ: Եվ Աստված տեսավ լույսը, որ բարի է: Եվ Աստված բաժանեց լույսը խավարից: Եվ Աստված լույսը կոչեց Տերեկ, և խավարը կոչեց Գիշեր. և իրիկուն և առավոտ եղավ՝ առաջին օրը» (Ծննդոց 1.3-5): Այս համարներն ի՞նչ են հաղորդում արարման առաջին օրվա մասին: \_\_\_\_\_

---

---

Տվյալ հատվածից կարելի է մի ամբողջ շարք եզրակացություններ անել:

Նախ, լույսն ի հայտ եկավ ի պատասխան Աստծո հրամանի: Աստված Իր խոսքի միջոցով արդյունավետորեն դեկավարում է արարման գործընթացը:

Երկրորդ, լույսը «բարի» էր: Հարց է ծագում, թե ինչո՞ւ է համարը հայտնում, թե Աստված «տեսավ» լույսը՝ մի՞թե որևէ մեկը կասկածում է, որ Աստված ամեն բան տեսնում է: Այստեղ ընդգծվում է, որ Աստծո ստեղծած լույսը բարի էր անգամ Իր իսկ աշքերում: Մենք գիտենք, որ լույսը բարի է, քանի որ հենց այդպես Աստված գնահատեց այն:

Հետո Աստված Լույսը բաժանեց խավարից: Աստված իշխում է լույսին և խավարին, և դրանք չեն ազդում Նրա գործերի և գիտության վրա (տե՛ս Սաղմոս 139.12): Աստված ժամանակի լուսավոր և խավար հատվածներն անվանեց համապատասխանաբար «ցերեկ» և «գիշեր»: Նա իրավունք ունի անուններ դնել ժամանակահատվածներին, քանի որ ստեղծել է ժամանակը: Լինելով ժամանակի Տերը՝ Աստված նրանով սահմանափակված չէ: Այդ ժամանակը կախված է Նրանից:

Բերված հատվածը վկայում է, որ սահմանվել է խավարի փուլը և լույսի փուլը, որոնք միասին կազմում են օրը: Չատ է գրվել արարման պատմության մեջ օրվա նշանակության մասին: Մենք այդ հարցին ավե-

ի ուշ կվերադառնանք, բայց, այնուամենայնիվ, նշենք, որ առաջին օրը բաղկացած էր խավար և լուսավոր փուլերից ճիշտ այնպես, ինչպես և այսօր:

Սոհասարակ, լույսը Աստծո ներկայության պարտադիր անկապտելի հատկանիշն է: Հարկ չկա ենթադրել, որ լույսն ստեղծվել է արարման առաջին օրը. չ<sup>շ</sup> որ Աստված գոյություն ուներ նախքան երկրի ստեղծումը, իսկ Նորա ներկայությունը միշտ կապված է լույսի հետ (Ա Հովհաննես 1.5, Հայտնություն 22.5): Պարզապես արարման ժամանակ երբեմնի խավար մի մոլորակի լույս պարզուվեց:

**Ինչպես կարող էին գոյություն ունենալ ցերեկն ու գիշերը՝ նախքան այն, երբ պատմության մեջ ի հայտ եկավ արևը:** Մովսեսը ծզգիտ գիտեր արևի և ցերեկվա միջև եղած փոխադարձ կապը: Բայց, չնայելով այդ ակնհայտ գիտելիքին, նա հենց այդպես է գրել առաջին օրը լույսի և խավարի մասին: Ակներևաբար, Աստված նրան արարման վերաբերյալ հասուն գիտություն էր պարզեւել, որը մեզ այժմ անհասկանալի է, գիտություն, որը հնարավոր չէ ստանալ՝ ուսումնասիրելով բնության աշխարհը: Ինչո՞ւ մենք չպետք է զարմանանք այն բանից, որ արարման որոշ տեսանկյուններ առեղծված են մնում:

## **Երկնքի արարումը**

«Եվ Աստված ասաց. Զրերի մեջտեղը հաստատություն լինի, որ ջրերը ջրերից բաժանի: Եվ Աստված շինեց հաստատությունը և բաժանեց հաստատության տակի ջրերը հաստատության վրա եղած ջրերից: Եվ այնպես եղավ: Եվ Աստված հաստատությունը կոչեց Երկինք: Եվ իրիկուն և առավոտ եղավ՝ երկրորդ օրը» (Ծննդոց 1.6-8):

Աստված ստեղծեց երկնակամարը, օժտեց այն որոշակի գործառույթներով և այն անվանեց Երկինք: Երկինքը պետք է ներքևի ջուրը բաժաներ վերևի ջրից: Այսօր, ասելով «Երկինք» բառը, մենք ավելի շուտ այդ հասկացության տակ հասկանում ենք մթնոլորտը, որը մեր շրջակա միջավայրի մի մասն է, և մեր մթնոլորտի սահմաններից դուրս եղած տարածությունը, որտեղ գտնվում են Արևը, Լուսինը և աստղերը:

Մթնոլորտը, ըստ երևույթին, երկնքի մի մասն է, որն ստեղծվել է արարման Երկրորդ օրը: Մթնոլորտը ջրին հնարավորություն է տալիս վե-

ըև բարձրանալ. ջուրը կարող է գոլորշիանալ, ներթափանցել մթնոլորտ և այդպիսով փոխադրվել դեպի երկրի ցանկացած վայրը: Հետո այն կարող է կրկին վերադառնալ երկրի մակերևույթ՝ կամ գոլորշու տեսքով, ինչպես նկարագրված է Ծննդոց 2.6-ում, կամ Էլ՝ անձրևի տեսքով:

Երկնքին ամուն տալով՝ Աստված ցոյց տվեց Իր տիրակալությունը դրա հանդեպ: Ամուն տալը ենթադրում է, որ Աստված այդ ողջ տարածության Իշխանն է: Իսկ տարածությունը ոչ մի կերպ չի սահմանափակում Աստծո գործողությունները, քանի որ Նա ստեղծել և կառավարում է այն: Ինչպես և որ առաջին օրը աշխարհի լուսավորումը, երկնքի ստեղծումն էլ ավարտվել է նախքան երկրորդ օրվա՝ գիշերային խավարի և ցերեկային լույսի հաջորդ փուլի ավարտը:

Չաստ քննարկումներ կան «հաստատություն» բառի շուրջ: Եբրայերեն «ուակիս» բառը երբեմն օգտագործվում է՝ նկարագրելու համար բարակ կոփված մետաղաքերքը, այստեղից՝ «հաստատություն» եզրույթը: Ըննադատները պնդում են. իին հրեաները հավատում էին, որ երկրից վերս կա ամուր մակերևույթ, և քանի որ դա այդպես չէ, ուրեմն աստվածաշնչյան պատումը սխալ է: Սակայն այդպիսի մտահաճումը ճիշտ չէ: «Հաստատություն» բառի օգտագործումը տվյալ համատեքստում ցոյց է տալիս երկինքը՝ որպես մթնոլորտ, և բուն տարածությունը: Հասկանալու համար, թե ինչի մասին է խոսքը, մենք պետք է դիտարկենք միայն անմիջական համատեքստը: Ծննդոց գրքում գրված է, որ բռչունները բռչում են «երկնքի հաստատության երեսին» (Ծննդոց 1.20), իսկ մեկ այլ տեղում ասված է, որ երկնային հաստատությունում կան լուսավորներ (Ծննդոց 1.14): Իհարկե, բռչունները չեն բռչում «ուակիայի» այն մասում, որտեղ գտնվում են լուսավորները:

Ինչպիսին էլ լինեն արարման մասին պատումի առեղծվածները, մի բան հստակ կերպով ուրվագծում է՝ ոչ մի բան պատահական չէ: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր դա իմանալը, հատկապես, երբ շատերը հավատում են, որ հենց պատահականությունն է իհմնական դեր խաղացել մեր արարման մեջ:

## **Տարածություն կյանքի համար**

Կարդացե՛ք Ծննդոց 1.9-13-ը: Փորձե՛ք պատկերացնել Աստծո մեծագույն արարիչ զորությունը, որով Նա իրականացնում է այն, ինչի մասին պատմում է հատվածը: Ինչպե՞ս է պատումը

**տրամաբանորեն շեշտադրում իին հարցը՝ «Ի՞նչն է ավելի շուտ  
եղել՝ հա՞վը,թե՞ ձուն»:**

---

---

Մինչ այդ ժամանակը երկիրը ծածկված էր ջրով: Մարդու ապրելու համար տեղ ստեղծելու նպատակով, ում Աստված նախատեսում էր արարել, Նա փոխեց երկրի մակերևույթը՝ ձևափորելով «ավազաններ», որոնք իրենց մեջ տեղափորեցին ջուրը և ձևափորեցին ծովերը: Դրա շնորհիվ ի հայտ եկան մայրցամաքները: Դա երկրի ֆիզիկական հատկությունների երրորդ բաժանումն էր: (Առաջին բաժանումը լուսի և խավարի միջն էր, երկրորդը՝ վերևի ջրերի և ներքևի ջրերի, երրորդը՝ ցամաքի և ծովերի):

Երրորդ անգամ նոյնապես Աստված անվանում է այն, ինչ բաժանել էր: Յամաքն ստանում է «երկիր» անունը, իսկ ջրերի ժողովը՝ «ծով»: Սա ևս մեկ անգամ ընդգծում է, որ Աստված ողջ տարածության Իշխանն է: Նա զննում է ցամաքի և ծովերի տեղադրությունը՝ հայտարարելով, որ դա «քարի» է:

Երրորդ օրը նշանավորվում է արարման ևս մեկ իրադարձությամբ: Յամաքը դարձավ սնունդ ածեցնելու վայր այն արարածների համար, որոնք ի հայտ եկան ավելի ուշ: Աստված ցամաքից կյանքի է կոչում բույսերին: Կանաչը, խոտերը և պտղատու ծառերը առանձին են հիշատակվում: Նրանք սնննի առյուր պետք է դառնային երկրի բնակիչների համար: Տերատը չի նշում, թե բույսերի քանի տեսակ ստեղծվեց, բայց ցույց է տրված բուսական աշխարհի բազմազանությունը, որը կար ի սկզբանն: Ի նկատի ունենալով այն, ինչ մենք տեսնում ենք այսօր, կարելի է ենթադրել, որ ստեղծվել է կենսածների մի հսկա բազմազանություն: Սուրբ Գիրքը նաև հստակորեն վկայում է այն մասին, որ երկրի վրա չի եղել ոչ մի «նախնի», որից կզարգանային բոլոր բույսերը, ընդհակառակը, հենց սկզբից բուսականությունը գոյություն ունի իր ողջ բազմազանությամբ: Եվոյնություն կենսարանության հիմնական հայեցակարգն այն մասին, որ մեն-միակ բույսը նախնի է դարձել բոլոր մնացածների համար, հակասում է Աստծո խոսքին:

**Նայե՛ք մրգերի, բանջարեղենի և մյուս ուտելի բույսերի հսկայական բազմազանությանը: Ինչպե՞ս է այն վկայում մեր հոգատար Աստծո մասին: Ինչո՞ւ է անմտություն համարել, որ այդ ամենը ձևափորվել է, ինչպես պնդում են Էվոլյուցիոնիստները, պատահական գործընթացների արդյունքում:**

## **Աստծո զորավոր խոսքը**

**Ստորև բերված տեքստերն ի՞նչ են ասում Աստծո խոսքի զորության մասին:**

**Բ Կորնթացիս 4.6** \_\_\_\_\_

**Եսայիա 55.11** \_\_\_\_\_

**Բ Պետրոս 3.5** \_\_\_\_\_

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված արարում էր ոչնչից (Երրայերեն «բարա»՝ Ծննդոց 1.1): Իր խոսքի զորությամբ, առանց որեվէ հակամարտության կամ դիմակայման: Հին աշխարհում արարումն այդպես էին հասկանում միայն հրեաները: Աշխարհի արարման ոչ աստվածաշնչյան պատումների մեծ մասը պատմում է արարման ժամանակ բռնությունների և հակամարտության մասին: Օրինակ, արարման մասին հինքարելոնյան պատմությունը խոսում է Ապսու հրեշի և նրա կին Թիամատի մասին, որոնք լույս աշխարհ բերեցին աստվածների մի սերունդ, որոնց հետո փորձում էին ոչնչացնել: Բայց այդ պատերազմում Թիամատը մահացավ, նրա մարմինը բաժանվեց երկու մասի, որոնցից մեկը դարձավ երկինք, մյուսը՝ երկիր:

Ժամանակակից մարդիկ նույնպես հորինել են արարման պատմություն՝ բռնության օգնությամբ: Դրա համաձայն՝ Աստված կանխամտածված կերպով աշխարհն ստեղծել է սահմանափակ ռեսուրսներով, ինչը պատճառ է դարձել կենդանի էակների միջև հակամարտության, որի արդյունքում առավել քույլ էակները վերացվում էին առավել ուժեղների կողմից: Հստ այդ ժամանակակից պատմության՝ ժամանակի ընթացքում օրգանիզմներն ավելի ու ավելի էին բարդանում, և ի վերջո ընդհանուր նախնուց ծագեցին մարդիկ և բոլոր մյուս կենդանի օրգանիզմները:

Բայց էվոլյուցիայի տեսության «աստվածները» (պատահական մուտացիան և բնական ընտրությունը) այնպիսին չեն, ինչպես Աստվածաշնչի Աստված: Աստվածաշնչի Աստված թույլերի Պաշտպանն է և առատաձեռն Պարզւող՝ հոգատար Իր ողջ արարչագործության հանդեպ: Մահը, տառապանքներն ու մյուս չարիքները չեն բխում Աստծուց, ընդհակառակը, դրանք Նրա բարի կառավարման դեմ ըմբոս-

տուրքյան բնական հետևանքնն են: Եվլոյոցիայի տեսության «աստվածներն» արարման ժամանակ օգտագործում են մրցակցությունը և թույլերի ոչնչացումը: Հենց մահն ու տառապանքներն են նրանց ստեղծագործական միջոցները:

Այսախով, Ծննդոց 1-ը և 2-ը ոչ մի կերպ չեն կարող ներդաշնակության մեջ գտնվել ժամանակակից էվլոյոցիայի տեսության հետ, որն իր էությամբ հակասում է արարման մասին աստվածաշնչյան պատումին:

## **Յեփագա ուսումնասիրության համար**

Թեև Սուրբ Գիրքը հստակ և արտահայտիչ կերպով չի խոսում այդ մասին, սակայն մենք հուսալի աստվածաշնչյան հիմք ունենք հավատալու, որ տիեզերքը գոյություն ուներ շատ ավելի վաղ, քան երկրի վրա ի հայտ եկավ կյանքը: Նախ, Հոր 38.6,7 համարներում Աստված պնդում է, որ աշխարհի արարման ժամանակ բոլոր կենդանի էակները ցնծում էին: Դա ենթադրում է, որ նախքան երկրի արարումը կային էակներ, որոնք բնակեցնում էին տիեզերքը: Ա Կորնթացիս 4.9-ի հորումն այն աշխարհին, որ դիտում է մեզ, կարող է վերաբերել այդ նոյն էակներին: Երկրորդը, օձը Եղեմի այգում էր նախքան Աղամի ու Եվայի մեղանցումը: Հայտնություն 12.9-ում այդ օձն անվանված է երկնքից վայր զգված սատանա: Հիսուսն ասաց, որ Ինքը տեսել է, թե ինչպես է դա տեղի ունեցել (Ղուկաս 10.18): Եզեկիել 28.14,15-ում նկարագրվում է օծված քերովիեն, ով սկզբում կատարյալ էր, բայց ժամանակի ընթացքում ապստամբեց Աստծո դեմ: Դա ենթադրում է, որ իր ապստամբությունից առաջ սատանան որոշ ժամանակ արդեն ապրում էր տիեզերքում: Այսախով, Աստվածաշնչը վկայում է, որ Աղամն ու Եվան չեն եղել առաջին ստեղծված էակները:

«Երբ երկիրը դուրս եկավ Արարչի ձեռքից, այն արտասվոր կերպով գեղեցիկ էր: Երկիրը զարդարում էին լեռները, բլուրներն ու հարթավայրերը, հանդարտ հոսող գետերը, հրաշալի լճերը. լեռները չեին սարսափեցնում իրենց անմատչելի բարձրությամբ և սուսալի անդրւնիներով, ինչպես մեր օրերում է: Արագագար ժայռագագաթները հանգչում էին բերրի հողի շերտի տակ, որը ծածկված էր շքեղ բուսականությամբ: Չկային ո՞չ գարշելի ճահիճներ, ո՞չ անապոտ անապատներ, այլ փարթամ թփուտներն ու քնրուշ ծաղիկներն ամենուր աչք էին շոյում: Ծառերը, որոնք շատ ավելի վեհասքանչ էին, քան մեր օրերում, զարդա-

բում էին բլուրների կատարները: Օդը, որն աղտոտված չէր վնասակար արտանետումներով, մաքուր էր և թարմ: Ամենահիաքանչ պայատների այզիները խամրում են նախաստեղծ երկրի գեղեցկության առջև: Երկնային գորքերը հիացմունքով էին դիտում Աստծո հրաշալի գործերի տեսարանը» (Է. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 44):

## **Հարցեր քննարկման համար**

1. Քնարավորինս շատ ապացույցներ թվարկեք աշխարհի՝ ըստ որոշակի ծրագրի արարման վերաբերյալ:
2. Դուք ի՞նչ փաստարկներ կարող եք բերել այն բանի օգտին, որ էվոլյուցիայի տեսությունը չի հաճապատասխանում արարման մասին աստվածաշնչյան ուսմունքին:
3. Անկասկած, մենք արարման մասին աստվածաշնչյան պատումի մեջ ամեն բան չենք, որ կարող ենք բացատրել: Սակայն ինչո՞ւ դա չի կարող պատճառ լինել՝ ժխտելու այն պատմության իրական լինելը, թե ինչպես Աստված ստեղծեց մեր աշխարհը:

## ԱՐՎՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

**Այս շաբաթվա ուսումնասիրույթան համար կարդացե՛ք.**

Ծննդոց 1, Սաղմու 8.4, Հռումեացիս 8.19-22, Ղևիացոց 11.14-22,  
Ծննդոց 2.1-3, Սարկու 2.28:

**Հիշելու համարը**

«Եվ Ասպված կարարեց յորերորդ օրում իր գործերը, որ արեց, և  
յորերորդ օրը հանգարացավ իր բոլոր գործերից, որ արեց» (Ծննդոց 2.2):

Այս շաբաթվա դասը տայիս է արարման վերջին երեք օրերի և շաբաթօրյա հանգստի վերաբերյալ աստվածաշնչան համառոտ պատումի ակնարկը: Այս պատումը մենք գտնում ենք Ծննդոց 1.14-23-ում, սակայն Աստծո Խոսքի մյուս հատվածներն ել դրան հղումներ ունեն: Սակայն արարման մասին պատմության ամենաապշեցուցիչ առանձնահատկություններից մեկը դրա բաժանումն է արարման օրերին համապատասխան:

Ինչո՞ւ Աստված որոշեց ստեղծել յորնօրյա ժամանակային պարբերաշրջան, որը մենք շաբաթ ենք անվանում: Սուրբ Գիրքն ուղղակիորեն չի խոսում այդ մասին, բայց մենք ինքներս կարող ենք պատասխանը գտնել: Հնարավոր է, որ ամենազլիսավոր պատասխանը շաբաթն է՝ Աստծո և մարդու շփման առանձնահատուկ ժամանակը: Կարող է պատահել, որ Աստված սահմանել է շաբաթը ապահովելու այն ժամանակահատվածը, որը պիտանի է ստվորական աշխատանքի համար, սակայն կանոնավորապես հերթափոխվում է առանձին ժամանակահատվածի հետ, որը մեզ հիշեցնում է Աստծո հետ մեր փոխարարերությունների մասին (տես Մարկոս 2.28-ը): Այդպիսի պարբերականությունը պետք է մարդկանց օգներ հիշել՝ Աստված բոլոր բարիքների ճշմարիտ Պարզեողն է, և մենք լիովին կախված ենք նրանից:

Ինչպիսին էլ որ լինեն պատճառները, մի բան անկասկած է՝ Ծննդոց գրքի առաջին գլխում գրի առնված պատումը վկայում է, որ արարումն ավարտվել է արտակարգ հոգատարույթյամբ և ուներ որոշակի նպատակ: Ոչ մի բան չի բողնվել պատահականության կամքին:

## **Արևը, Լուսինը և ասպողերը**

**Կարդացե՛ք Ծննդոց 1.14-19-ը: Ի՞նչ ստեղծվեց արարման չորրորդ օրը: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ հաղորդումը՝ հակասության մեջ չնտնելով այսօր հայտնի ֆիզիկական աշխարհի օրենքների հետ:**

---

Հավանաբար, չորրորդ օրը քննարկվում է ավելի շատ, քան արարման մյուս վեց օրերը: Եթե Արևն ստեղծվել է չորրորդ օրը, ինչպե՞ս էին որոշվում օրական բոլորաշրջանները արարման առաջին երեք օրերին: Մյուս կողմից, եթե Արևն արդեն գոյություն ուներ, ի՞նչ տեղի ունեցավ չորրորդ օրը:

Արարման չորրորդ օրվա իրադարձությունների վերաբերյալ անորոշությունը ի հայտ է գալիս ոչ թե տրամաբանական հակասության, այլ հավանականությունների մեծաքանակության պատճառով: Սի հավանականությունը կարող է ամփոփվել նրանում, որ Արևն ստեղծվել է չորրորդ օրը, իսկ առաջին երեք օրերը լուսավորվում էին Աստծո ներկայությամբ, կամ լույսը բխում էր մեկ այլ աղբյուրից, այնպիսին, ինչպես գերնոր աստղն է: Հայտնություն 21.23 համարը հաստատում է այդ գաղափարը, եթե ասում է, որ քաղաքն Արևի կարիք չունի, քանի որ այնտեղ ներկա է Աստված: Երկրորդ հավանականությունը բովանդակվում է նրանում, որ այդ օրն Աստված Արևին, Լուսինն և աստղերին օժտեց իրենց հատկություններով: Այս տեսակետը համապատասխանում է Սահմու 8.3-ին: Հրեա գիտնական Կ. Զոն Քոյինզը գրում է, որ Ծննդոց 1.14-ի երրայերես տեքստը բույլ է տալիս այս երկու հնարավորությունները (Տե՛ս C. John Collins, *Genesis. 1.4: A Linguistic, Literary, and Theological Commentary* [Phillipsburg, New Jersey: P&R Publishing Co., 2006], 57):

Երրորդ հնարավորությունն այն է, որ Արևը կարող էր արդեն գոյություն ունենալ, սակայն ծածկված էր ամպերով կամ հրաբխային փոշով, այդ պատճառով մինչև արարման չորրորդ օրը այն չէր երևում կամ լիովին չէր կատարում իր գործառույթները: Կարելի է հասկանալ, թե ինչի մասին է խոսքը, եթե հիշենք Վեներա մոլորակը, որի վրա այսօր նույն բանն է տեղի ունենում:

Տեքստը բերված մեկնարանություններին հստակ հաստատում կամ հերքում չի տալիս, այդ պատճառով մարդիկ տարբեր եզրահանգումներ

Են արել այս հարցի վերաբերյալ: Այստեղ տեղին է հիշել մի լավ կանոն, որը կոչ է անում հարցին ավելի մեծ նշանակություն շտալ, քան տախու է հենց Աստվածաշունչը, և ընդունել, որ մեր ըմբռնումը ասհմանափակ է: Նման խոստովանությունը, հատկապես, արարման հարցերում, չպետք է մեր կողմից ընկալվի որպես ինչ-որ շատ դժվար բան: Ի վերջո, մտածեք՝ որքան գիտական առեղծվածներ կան այսօր, որոնցով խորապես զբաղվում է փորձարարական գիտությունը, բայց դրանք այդպես էլ առեղծված են մնում: Որքան ավելի առեղծվածային է այն, ինչ ծածկված է այդքան հեռավոր անցյալում:

## **Երկուշաբթի**

## **հունվարի 14**

### **Թևավորների ու Զրլողների արարումը**

**Կարդացե՛ք Ծննդոց 1.20-23-ը: Այդ տեքստերում կա՞ ինչ-որ բան, որը պատահականություն է մատնանշում: \_\_\_\_\_**

---

Զքերը և մքնոլորտը բնակեցվեցին արարչագործության հինգերորդ օրը: Ըստերը փոխադարձ կապ են տեսնում արարման երկրորդ և հինգերորդ օրերի միջև: Զքերը մքնոլորտով բաժանվեցին երկրորդ օրը, իսկ հինգերորդ օրը ջուրն ու մքնոլորտը բնակեցվեցին կենդանի էակներով: Արարման իրադարձությունները տեղի են ունենում որոշակի հաջորդականությամբ, որին արտացոլում է կանխամտածված մոդել՝ դրանով իսկ վկայելով Աստծո գործերում հոգատարության և կարգուկանոնի մասին: Այլ խոսքերով՝ արարման մասին պատմության մեջ պատահականության համար տեղ չկա:

Նկատե՛ք, որ ինչպես ջրային կենդանիները, այնպես էլ թռչունները հիշատակված են հոգնակի թվով: Դա վկայում է, որ հինգերորդ օրը ստեղծվել են բազմաթիվ ու բազմազան օրգանիզմներ: Յուրաքանչյուր էակ օժտված էր բազմանալու հատկությամբ: Բազմազանությունն առկա էր հենց սկզբից: Զկար ոչ մի ընդիհանուր նախնի, որից հետագայում կառաջանային բոլոր մյուս տեսակները, բայց յուրաքանչյուր տեսակ ընդունակ էր առաջ բերել բազմազան, իրեն նման էակներ: Օրինակ, սովորական աղավնուց ստացվել են այդ թռչունի ավելի քան 400 նոր տարատեսակներ, նաև հայտնի են ոսկի ձկնիկի առնվազն 27 տեսակներ: Աստված Իր ամեն մի արարածի պարզեւել է սերունդների բազում տարատեսակներ առաջացնելու ներուժ, ինչը լրացնում է արարչագործության բազմազանությունը:

21-րդ համարում ասված է. Աստված տեսավ, որ Իր ստեղծած ամեն բան բարի էր: Դա նշանակում է, որ Աստծո արարած բոլոր էակները համապատասխանում էին Նրա մտահղացմանը, հաճելի էին աչքի համար, չունեին թերություններ և ներդաշնակորեն ընդգրկվում էին այն ամենի մեջ, ինչի համար նախատեսված էր արարչազործությունը:

Չատ կենդանի էակներ չեն, որ մեզ մոտ այդքան հույզեր ու հիացմունք են առաջացնում, որքան բոչունները: Դրանք իսկապես զարմանալի, գեղեցիկ էակներ են, ունեն թերև, բայց միևնույն ժամանակ ամուր, կոշտ և ճկուն փետուրներ: Թափահարող փետուրի մասերը միացած են մանրիկ «քննիկների» բարդ կառուցվածքով, որոնք ապահովում են հուսալի և միաժամանակ թերև ամրակցում: Թոշունի բոքք ստեղծված է այնպես, որ թքվածնով հարստանում է և՛ ներշնչման, և՛ արտաշնչման ժամանակ՝ ապահովելով թքվածնի բարձր մակարդակ, որի անհրաժեշտ է ակտիվ թոփչի ժամանակ: Ավելին, թոշունների որոշ ուլորեր ունեն օդային պարկեր, որոնք ապահովում են թքվածնի շարժը և թերևացնում թշնի մարմինը՝ նպաստելով առավել թերև ու մաներային թոփչին: Թոշունները զարմանահրաշ արարածներ են: Հիշելով թոշունների կառուցվածքի մասին՝ կարդացե՛ք Մատթեոս 10.29-31-ը: Ինչպիսի՞ միսիթարություն եք գտնում այդ խոսքերում:

## **Երեքարթի**

**հունվարի 15**

### **Յամաքային կենդանիների արարումը**

Ծննդոց 1.24-31-ում մենք կարդում ենք, որ ցամաքային կենդանիները և մարդիկ ստեղծվել են վեցերորդ օրը: Արարման երրորդ ու վեցերորդ օրերի միջև դիտվում է ճիշտ նույնպիսի փոխադարձ կապ, ինչպես և երկրորդ և հինգերորդ օրերի միջև, երրորդ օրը ցամաքի ու ծովի բաժանման և վեցերորդ օրը երկրի բնակեցման միջև: Եվս մեկ անգամ մենք տեսնում ենք արարման իրադարձությունների կարգավորված, նպատակաւողված հաջորդականությունը, Աստծուն հատուկ կարգուկանոնը (տես Ա Կորնիացիս 14.33): Ինչպես և հինգերորդ օրը, արարման վեցերորդ օրը բազմարիվ էակներ են ստեղծվել: Արարվել են տարրեր գազաններ, անասուններ և սողուններ:

Յամաքային կենդանիները միանալան նախնի չունեն: Աստված ստեղծել է կենդանի էակների բազում տարատեսակներ:

Ուշադրություն դարձրեք «իր տեսակի պես» արտահայտությանը և այլ նման դարձվածքների Ծննդոց 1.11,21,24,25 համարներում: Ոմանք

զանում են այդ արտահայտություններն օգտագործել՝ հաստատելու համար «կայուն տեսակների» գաղափարը: Այդ գաղափարը վերցված է հունական փիլիսոփայությունից: Հին հույները համարում էին, որ յուրաքանչյուր անհատ անկատար արտացոլումն է անփոփոխ իդեալի, որը հայտնի է որպես «տիպ»: Սակայն տեսակների անփոփոխությունը չի համապատասխանում աստվածաշնչան ուսմունքին այն մասին, որ ողջ բնությունը տառապում է մեղքի անեծքից (Հռոմեացիս 8.19-22): Մենք գիտենք, որ տեսակները փոխավել են, ինչպես այդ մասին ասված է Ծննդոց 3-ում: (Է. Ուայթը գրում էր երկրի «եռակի անեծքի» մասին՝ անեծքը մեղանչումից հետո, Կայենի մեղքից հետո և ջրհեղեղից հետո: Տես Նահապետներ և մարգարեններ, 90): Դրա հաստատումը մենք կարող ենք տեսնել մակարույժների ու գիշատիչների մեջ, որոնք այդքան տառապանքներ ու բռնություններ են պատճառում: «Իր տեսակի նման» դարձվածքի նշանակությունը ավելի լավ է քննարկել ընդհանուր համատեքստում:

**Կարդացե՛ք Ծննդոց 6.20-ը, 7.14-ը, Ղևոնց 11.14-22-ը:**  
**«Իր տեսակի նման» արտահայտությունը կամ այլ համարժեք արտահայտություններ ինչպես են օգնում մեզ՝ հասկանալ նման արտահայտությունները Ծննդոց 1-ում:**

---

«Իր տեսակի նման» կամ դրան համարժեք դարձվածքները պետք չեն հասկանալ որպես վերաբարության ինչ-որ կանոն: Ավելի շուտ, այն ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է կենդանի էակների տարրեր տեսակներին: Աստվածաշնչի որոշ բարգմանություններ օգտագործում են «տարրեր տեսակներ» դարձվածքը, որն ավելի է համապատասխանում համատեքստին: Տվյալ դարձվածքը վերաբերում է ոչ թե տեսակների անփոփոխությանը, այլ ցույց է տալիս վեցերորդ օրն ստեղծված էակների բազմազանությունը: Արարման սկզբից ի վեր ստեղծվել են բազում ամենատարբեր բույսեր ու կենդանիներ:

## **Չորեքշաբթի**

## **Իունվարի 16**

### **Արարումն ավարտված է**

Այն բանից հետո, երբ վեց օր անց արարումն ավարտվեց (մարդու արարումը կղիտարկենք ավելի ուշ), մենք հանդիպում ենք յոթերորդ օրվա մասին առաջին աստվածաշնչան հիշատակմանը:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.1-3-ը: Ուշադրություն դարձրեք առաջին համարին, որում ընդգծվում է Աստծո գործերի ավարտը: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր յոթերորդ օրվա մեր զմբանման համատեքստում:**

---

---

Այս տեքստում հանգստի գաղափարը փոխանցող երրայերեն բառ «շավաբ»-ն է (դադարել, հանգստանա): Այն սերտորեն կապված է «շաբաբ» (երրայերեն «շաբբաբ») բառի հետ և ցույց է տալիս աշխատանքի դադարեցումը գործն ավարտելուց հետո: Աստված չէր հոգնել և հանգստի կարիք չուներ (տե՛ս Եսայիա 40.28): Նա ավարտել էր արարման գործը և այդ պատճառով կանգ առավ: Յոթերորդ օրվա վրա հանգչում է Աստծո առանձնահատուկ օրինությունը: Այդախով, Աստված հատուկ նշանակություն տվեց շաբաթին՝ Իր և մարդկանց միջև փոխհարաբերությունների համատեքստում:

**Կարդացե՛ք Մարկոս 2.27,28-ը: Քիսուսի խոսքերով, ո՞րն է շաբաթվա նպատակը:**

---

Ուշադրություն դարձրեք, որ շաբաթը տրվեց ոչ թե այն պատճառով, որ դրա կարիքն ուներ Աստված, այլ՝ որովհետև դրա կարիքն ուներ մարդը, իսկ Աստված հոգաց նրա կարիքը: Առաջին շաբաթվա ավարտին Աստված հանգստացավ արարման գործերից և Իր ժամանակը նվիրեց արարչագործության հետ շփմանը: Մարդիկ իրենց Արարչի հետ շփման կարիք ունեին, որպեսզի գիտակցեին իրենց տեղը տիեզերքում: Պատկերացրե՛ք այն ուրախությունն ու զարմանքը, որ զգում էին Աղամն ու Եվան՝ հաղորդակցվելով Աստծո հետ և դիտելով Նրա ստեղծած աշխարհը: Հանգստի վերաբերյալ այդ սահմանման իմաստությունը է՛լ ավելի ակնհայտ դարձավ մեղանչումից հետո: Մենք շաբաթօրյա հանգստի կարիք ունենք, որպեսզի տեսադաշտից չկորցնենք Աստծուն, չխրվենք ունայնության և նյութեղենության մեջ:

**Աստված մեզ պատվիրում է մեր ժամանակի մեկ յոթերորդը նվիրել արարման վերաբերյալ մտորումներին: Դա ի՞նչ պետք է մեզ ասի տվյալ ուսմունքի կարևորության մասին: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել Տիրոջ հետ շփման է՛լ ավելի խորն ու հարուստ փորձառություն՝ հանգստանալով շաբաթ օրը, ինչպես դա անում էր Նա ինքը:**

## **Տառացի օրը**

**Կարդացե՛ք Ծննդոց 1.5,8,31-ը: Ինչի՞ց էր բաղկացած արարման օրը: Յամարներում որևէ բան մատնանշո՞ւմ է, որ դրանք տառացի 24-ժամյա օրեր չեն:**

---

Արարման օրերի բնույթը լայն քննարկումների առարկա է: Ոմանք հարց են տալիս՝ դրանք սովորակա՞ն օրեր էին, թե՞ իրենցից ներկայացնում էին անհամեմատ ավելի երկար ժամանակահատվածներ: Համարում բերված արարման օրերի նկարագրությունը տալիս է տրված հարցի պատասխանը: Այդ օրերը բաղկացած էին երեկոյից (խավար ժամանակից) և առավոտից (լուսավոր ժամանակից), ինչպես նաև՝ դրանք հաջորդաբար համարակալված են: Այլ խոսքերով, օրերն այստեղ ներկայացված են շատ հստակ համապատասխանությամբ մերօրյա օրերին՝ երեկոն և առավոտ, խավար և լուսավոր փուլեր: Դժվար է գտնել շաբաթվա օրերի առավել որոշակի ու արտահայտիչ նկարագրություն: Կրկնվող «Եվ երեկոն և առավոտ եղավ» արտահայտությունն ընդգծում է յուրաքանչյուր օրվա տառացի բնույթը:

**Կարդացե՛ք Ղևտացոց 23.3-ը: Տվյալ համարում ո՞ր նշումն է հաստատում այն գաղափարը, որ շաբաթվա բոլոր յոթ օրերը այնպիսին էին, ինչպես և ներկայիս օրերը:**

---

---

Հին իրեաները չեն կասկածում շաբաթ օրվա բնույթին: Նրանց համար դա սովորական տևողությամբ օր էր, որը, սակայն, հատուկ օրինություն ուներ Աստծուց: Ուշադրություն դարձեք Աստծո աշխատանքային վեցօրյա շաբաթվա արտահայտիչ համեմատությամբ մեր աշխատանքային վեցօրյա շաբաթվա հետ և Աստծո ու մեր հանգստի օրվա համեմատությամբ (տե՛ս նաև Ելից 20.9,11): Անգամ շատ հետազոտողներ, ովքեր մխտում են արարման օրերի տառացիության գաղափարը, հաճախ խոստովանում են, որ աստվածաշնչյան հեղինակները արարման օրերը ընկալում էին որպես տառացի օրեր:

**Աստծո հետ մեր փոխարարերությունների համար չափազանց կարևոր է Նրան և Նրա խոսքին վստահելը: Եթե մենք չենք կարող**

Վստահել Աստծո Խոսքին այսպիսի հիմնարար և այսքան հստակ արտահայտված հարցում, ինչպես Ծննդոց գրքում նկարագրված արարումն է, որը տեղի է ունեցել տառացի վեց օրերի ընթացքում, ապա առհասարակ էլ ինչո՞ւմ կարող է արտահայտվել մեր Վստահությունը:

## Յեփագա ուսումնասիրության համար

Ինչպես արդեն ասվել է, աստվածաշնչյան պատումի մեջ շաբաթվա օրերը ներկայացված են համարակալված և բաղկացած են երկու մասից՝ խավար փուլից (Երեկոներ) և լուսավոր փուլից (առավոտներ): Այդ օրերի ամենախելամիտ մեկնարանությունը կարող է լինել միայն այն ըմբռնումը, որ դրանք նույնպիս օրեր էին, ինչպես և ներկայիս օրերը: Զանալով ապացուցել, որ արարման յուրաքանչյուր օրն իրականում իրենից ներկայացնում է 1000 տարի, ոմանք դիմում են այնպիսի տեքստերի, ինչպես Սադմու 90.4-ը և Բ Պետրոս 3.8-ն են: Այդպիսի եզրակացությունը չի հաստատվում տեքստով և ոչ մի կերպ չի լուծում խնդիրը, որն ստեղծվել է նրանց կողմից, ովքեր ենթադրում են, թե այդ օրերը տևել են միլիարդավոր տարիներ:

Այն օրերը, որոնց մասին խոսվում է Ծննդոց գրքում, եթե իրենցից ամքող ժամանակաշրջաններ են ներկայացնում, ապա հարկ է սպասել բրածոների ի հայտ գալուն, որոնք համապատասխանում են այն կենդանի օրգանիզմների հաջորդականությանը, որոնք արարվել են արարման հաջորդական վեց «օրերի» ընթացքում: Այդպիսով, առաջին բրածոները պետք է լինեն բույսերը, որոնք ստեղծվել են երրորդ «օրը»: Հետո պետք է գան ձկներն ու թռչունները: Եվ միայն հետո մենք պետք է հայտնաբերենք առաջին ցամաքային կենդանիներին: Բայց բրածոները չեն համապատասխանում այդ հաջորդականությանը; Զրային բնակիչներն ի հայտ են գալիս բույսերից առաջ, իսկ ցամաքային կենդանիները՝ թռչուններից առաջ: Առաջին բրածո պտղատու ծառերը և այլ ծաղկավոր բույսեր ի հայտ են գալիս այդ բույր խճերից հետո: Միակ ընդհանուր համապատասխանություն այն է, որ և՛ այստեղ, և՛ այնտեղ մարդիկ ի հայտ են գալիս վերջում:

«Արարման յուրաքանչյուր նոր օրվա մասին Սուրբ Գիրքն ասում է, որ նա, բոլոր հաջորդների նման, բաղկացած էր Երեկոյից ու առավոտից» (Ե. Ուայր, Նահապետներ և մարգարեներ, 112):

«Բայց սխալ ենթադրությունն այն մասին, որ առաջին շաբաթվա իրադարձությունների ավարտման համար յոր ահոելի անորոշ ժամանակահատված է պահանջվել, ուղղակի հարված է հասցնում շաբաթվա՝ չորրորդ պատվիրանի հիմունքներին: Այն անորոշ և անհասկանալի է դարձնում այն, ինչ Աստված դարձրեց ակնհայտ: Այդպիսին է անհավատության վատրարագույն տեսակը, որովհետև շատերի համար, ովքեր պնդում են, թե իրենք հավատում են արարման մասին գրվածին, դա քողարկված անհավատություն է» (Ե. Ուայր, Հոգևոր պարզեցներ, հտ. 3, 91):

## **Դարցեր քննարկման համար**

1. Նույնիսկ եթե Ծննդոց գրքում նկարագրվածը չմեկնաբանենք տառացիորեն, երկու տեսանկյուններ ակնհայտ են. արարման մեջ չի եղել ոչ մի պատահականություն և ոչ մի ընդհանուր նախնի, որից առաջացել են բոլոր տեսակները: Սակայն դարվինիստական էվոլյուցիան իր տարբեր տարատեսակներով հենց այդ երկու հիմնադրություններն է սովորեցնում՝ պատահականություն և ընդհանուր նախնի, որից առաջացել են բոլոր տեսակները: Այդ դեպքում ինչպե՞ս ոմանք կարող են Ծննդոցը մեկնաբանել մի տեսության օգնությամբ, որն իր հիմքում հակասում է Ծննդոց գրքի բուն հիմքին:
2. Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ գիտությունը, չնայելով իր ողջ օգուտին, իրենից ներկայացնում է միայն անբացատրելին բացատրելու սույկ թույլ մարդկային փորձեր:
3. Այն ամենը, ինչ կարող է ուսումնասիրել գիտությունը, միայն ընկած աշխարհն է, որը շատ բանում տարբերվում է սկզբնական արարչագործությունից: Ինչո՞ւ է կարևոր միշտ հիշելը այդ մասին:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԱՐՈՒՄԸ

**Այս շաբաթվաս ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 2, Սակրենու 19.4-6, Հոր 38.1-21, 42.1-6, Եսայիս 45.18,  
Գործը առաքելոց 17.22-31:

### **Հիշելու համարը**

«Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ հավիպենական ավելիք ունեիր, որ ավելապահներ երկրի վրա բնակվողներին, և ամեն ազգի և ցեղի և լեզվի և ժողովովի: Եվ մեծ ծայնով ասում էր. Վախեցե՛ք Ասրծուց և փառք բարե նրան, որովհետի նրա դարասպանի ժամբ եկավ. և երկրպագեցե՛ք երկնքը և երկիրը և ծովը և ջրերի աղբյուրները սրելողին» (Հայունություն 14.6,7):

Ծննդոց 1.1-2.3 հատվածը հիմք է ծառայում արարման մասին շատ աստվածաշնչյան համարների համար: Ծննդոց առաջին գլխին որոշ հղումներ միանգամայն ակնիայտ են, որիշները անուղղակի են: Անուղղակի հղումները հաճախ որոշ բառեր և մտքեր կրկնում են՝ առանց համարին ուղղակի հղման, օրինակ՝ «Կորնթացիս 4.6-ը՝ «Որովհետև Աստված, որ ասաց, թե՝ խավարից լույս ծագի, ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար՝ Հիսուս Քրիստոսի դեմքում»: Ահա և ուղղակի հղում Եքրայեցիս 4.4-ում. «Որովհետև մի տեղ յոթերորդ օրվա համար այսպես է ասում. Եվ Աստված յոթերորդ օրը հանգիստ առավ իր բոլոր գործերից» (մեջբերված է Ծննդոց 2.2-ը):

Այս շաբաթ մենք կդիտարկենք Ծննդոց գրքի պատումի տարբեր աստվածաշնչյան հղումներ և ցույց կտանք, որ մյուս աստվածաշնչյան հեղինակները այն հասկանում էին որպես մարդու ծագման տառացի նկարագրություն:

## **Արարումը Ծննդոց 2-ում**

**«Սրանք են երկնքի և երկրի ծնունդները նրանց ստեղծված ժամանակ, այն օրը, որ Եհովա Աստված երկնքն ու երկիրը արեց» (Ծննդոց 2.4):**

Ծննդոց 1-2.3-ում մենք համդիպում ենք առաջին պատումին այն մասին, թե ինչպես էր Աստված արարում մեր աշխարհը: Այն ձևավորում է բոլոր մյուս ճշմարտությունների հիմքը, որոնց մենք որպես քրիստոնյաներ հավասում ենք:

Բայց արարման մասին պատումը դրանով չի ավարտվում: Ակած Ծննդոց 2.3-ից մինչև այդ գիշի վերջը մենք տեսնում ենք լրացողիչ մանրամասներ, հատկապես՝ Աղամի ու Եվայի արարման վերաբերյալ: Այսպիսով, մենք պետք է Ծննդոց 2.4-ը հասկանանք որպես ներածություն Աղամի ու Եվայի արարման առավել մանրակրկիտ պատմության, որը համառոտակի ընդհանրացված է Ծննդոց 1.26-29-ում: Որոշ ժամանակակից հետազոտողներ համարում են, որ Ծննդոց գրքի առաջին և երկրորդ գլուխները հակասում են միմյանց, բայց Մովսեսի և մյուս աստվածաշնչյան հեղինակների համար դա անակնկալ կլիներ: Եթե այդ պատմությունները հակասեին մեկը մյուսին, Մովսեսը երթեք չեր գրի դրանք, հատկապես՝ իրար այդքան մոտ: Այդ համարներում հակասություն չկա, դրանց հակասություն են ավելացնում ընթեղցողները:

**Կարդացե՛ք Մատթեոս 19.4-6-ը: Ինչպե՞ս է Հիսուսը հաստատում Ծննդոց 1-ի և 2-ի պատմական արժանահավատությունը: \_\_\_\_\_**

---

Ապահարզանի վերաբերյալ փարիսեցիների հարցին ի պատասխան՝ Հիսուսը մեջբերում է Ծննդոց 1.27-ը և 2.24-ը՝ այդպիսով ցոյց տալով, որ Ինքն այդ երկու ճշմարտությունները դիտում է միևնույն պատմական իրադարձության՝ աշխարհի և մարդու արարման համատեքստում: Ել որքա՞ն ապացույցներ են մեզ հարկավոր, որ Ծննդոց 1-ը և 2-ը իրենցից ներկայացնում են ներդաշնակ պատում արարման՝ դավանարանության և ուսմունքի մասին, որը ձևավորում է մեր գոյության և նշանակության հիմքը: Մենք երկրի վրա ենք ոչ պատահաբար, մենք այստեղ ենք, որովհետև մեր բախտը բերել է՝ մենք Աստծո պատկերով էակներ ենք, իսկ Ծննդոց 1-ում և 2-ում տրված պատումը արարման մասին մեր ծագման վերաբերյալ Աստծո հատությունն է:

Կարդացե՛ք Ծննդոց 2-ը: Այս գլուխն ինչպե՞ս է օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալու, թե ինչ է նշանակում լինել Աստծո կերպարով ստեղծված և ազատ կամքով օժտված մարդ:

## **Արարումը Սաղմոսներում**

Կարդացե՛ք Սաղմոս 8-ը: Դուք ի՞նչ փոխադարձ կապեր եք գտնում այս սաղմոսի և Ծննդոց 1-ին գլխի միջև: \_\_\_\_\_

Կարդացե՛ք Սաղմոս 104-ը: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է այդ սաղմոսը փառաբանում Աստծուն Նրա մեծության համար, որ դրսևորվում է արարման և նախախնամության մեջ: Սաղմոս 104-ի ստորև առաջարկված համարներում նմանություններ գտեք Ծննդոց 1-ի հետ:

Համար 2 \_\_\_\_\_

Համարներ 5-7 \_\_\_\_\_

Համարներ 7-9 \_\_\_\_\_

Համար 14 \_\_\_\_\_

Համար 19 \_\_\_\_\_

Համար 25 \_\_\_\_\_

Նկատե՛ք, թե ինչպես տվյալ սաղմոսի թեմատիկ հաջորդականությունը համանման է Ծննդոց 1-ի թեմատիկ հաջորդականությանը: Բանաստեղծական կերպարների համախումբը վառ կերպով ներկայացված է համարներում, և այս լուրի մեջ հստակորեն դիտվում են Աստծո գորությունը, իմաստությունն ու բարությունը, ինչպես նաև՝ ողջ արարչագործության կախվածությունը Արարչից: Սաղմոսներում ոչ մի բան ցույց չի տալիս, թե Ծննդոց գրքի պատումը հարկ չկա տառացիորեն ընկալել:

Ուշադրություն դարձրեք առաջարկվող սաղմոսների հետևյալ օրինակներին, որոնք համապատասխանում են Ծննդոց 1-ին գլխին:

Սաղմոս 24.1,2 \_\_\_\_\_

Սաղմոս 33.6 \_\_\_\_\_

Սաղմոս 74.15,16 \_\_\_\_\_

Սաղմոս 89.11 \_\_\_\_\_

Սաղմոսները լի են Արարչի փառաբանությամբ: Երբեմն այդ փառաբանությունը արտահայտված է Ծննդոց 1-ը հիշեցնող լեզվով, այլ տեղերում հանդիպում են առավել ընդհանուր արտահայտություններով, բայց, բոլոր դեպքերում, արարման նկարագրությունը համապատասխանում է Ծննդոց 1-ին և մեզ հիշեցնում է Ծննդոց գորի հիմնարար դերի մասին՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր մեր ծագման ըմբռնման հարցում:

## **Արարումը Հորի գրքում**

**Կարդացե՛ք Հոր 38.1-21-ը: Ուշադրություն դարձրեք արարման թեմային ստորև բերված համարներում:**

**Համարներ 4-7** \_\_\_\_\_

**Համարներ 8-11** \_\_\_\_\_

**Համար 12** \_\_\_\_\_

**Համար 16** \_\_\_\_\_

**Համար 19** \_\_\_\_\_

Կարևոր է հիշել Հորի կյանքի հաճամանքների մասին: Այդ նահապետը մեծագույն ողբերգություն էր ապրում և վիրճում էր հասկանալ, թե ինչպես այդպիսի բան կարող էր պատահել իրեն՝ Աստծո հավատարիմ հետևողին: 38-ից ընդհուած մինչև 41-րդ գլուխը Հորին ցավ պատճառող հարցերին ի պատասխան՝ Տերը խոսում է Իր ստեղծագործ զորության մասին:

**Ուշադիր կարդացե՛ք Հորի պատասխանը Տիրոջը Հոր 42.1-6-ում: Ինչո՞ւ Հորը հենց այդ կերպ պատասխանեց: Մենք նրա պատասխանից ի՞նչ դասեր կարող ենք քաղել, որոնք կօգնեն մեզ՝ վստահելու Աստծուն մեր անձնական ողբերգությունների մեջ:** \_\_\_\_\_

Արարման առեղծվածները բացատրելու Հորի անընդունակությունը նրան բերեց Աստծո մեծության ընդունմանը և Նրա նկատմամբ վստահությանը՝ շնայելով տեղի ունեցած ամեն ինչին: Մենք նույնպես հասկանում ենք, որ ընդունակ չենք պատասխանելու արարման հետ կապված շատ հարցերի, այդ պատճառով Հորի օրինակը պետք է դրդի մեզ՝ բոլոր պարագաներում վստահելու Նրան: Կյանքի շատ հարցերի մենք այդպես էլ պատասխան չենք գտնի երկրի վրա, բայց մեզ սպավում է

հավիտենությունը, և այդ ժամանակ մենք կլսենք այն ամենի բացատրությունը, ինչն այժմ անբացատրելի է թվում:

Արարման հրաշքների շնորհիվ, որոնք մարդիկ այսօր հասկանում են շատ ավելի լավ, քան կարող էր դրանք հասկանալ Հորը, մենք պետք է սովորենք հավատ ընծայել Աստծո մեծ սիրուն և զորությանը:

**Մենք, որ ապրում ենք Յիսուս Քրիստոսի խաչելությունից հետո,** այսօր Արարչին գիտենք ծիշտ այնպես, ինչպես մեր խաչված Փրկչին: Յորբն այդպիսի գիտելիք չուներ, գոնե այն չափով, ինչ չափով ունենք մենք: Որքա՞ն ավելի մենք պետք է վստահենք Աստծո բարությանը մեր հանդեա՝ իմանալով, թե որքան շատ բան է Նա արել մեզ համար:

## **Արարումը մարգարեական գրքերում**

«Որովհետու այսպես է ասում Եհովան՝ Երկինքն ու Երկիրը ստեղծողը, նա է Աստված, որ կազմեց Երկիրը և արեց նրան՝ հաստատեց նրան, նրան չստեղծեց դատարկ, այլ բնակվելու համար ստեղծեց նրան. Ես եմ Եհովան, և ուրիշը չկա» (Եսայիա 45.18):

Եսայիա 45.18 տեքստը բացահայտում է Աստծո մտադրությունը՝ տեղ պատրաստել մարդու բնակության համար, այսպիսով՝ կյանքի համար Երկրի պիտանի լինելը պատահականություն չէ:

Քննարկե՛ք Երկրի մի քանի հատկություններ, որոնք այն մարդու ապրելու համար հարմար տեղ են դարձնում՝ ի տարբերություն Արեգակնային համակարգի մյուս մոլորակների: Նախ, ջրի առատությունը: Մարսի վրա դիտվում են ջրի ակտիվության որոշ նշաններ, սակայն ո՞չ այդ, ո՞չ էլ մեզ հայտնի մյուս մոլորակներում մշտական ջրամբարներ չկան, ինչպես Երկրի վրա: Երկրի մյուս եզակի առանձնահատկությունը մթնոլորտի բաղադրությունն է, որը պարունակում է մոտ 21 տոկոս թթվածին և 78 տոկոս ազոտ: Մյուս մոլորակների մթնոլորտում գերակշռում է կա՞մ ածխարքու գազը, կա՞մ հելիումը, և միայն Երկրի մթնոլորտն է պիտանի կյանքի համար: Երկրի վրա ջերմաստիճանի տատանումների սահմանները հարմար են կյանքի համար՝ ի տարբերություն Արեգակնային համակարգի մյուս մոլորակների:

Երկրի և Արևի հեռավորությունը, մթնոլորտի բաղադրությունը, Երկրի կշիռը, նրա պտույտի արագությունը, օրվա և գիշերվա որոշակի

տևողությունը՝ այս բոլորը և շատ այլ գործոններ երկիրը դարձնում են մեզ հայտնի մոլորակներից միակ պիտանին կյանքի համար:

**Ստորև բերված համարներն ինչպես են հաստատում ծննդոց**

**1-ում նկարագրված իրադարձությունները:**

**Եսայիա 44.24** \_\_\_\_\_

**Եսայիա 45.12** \_\_\_\_\_

**Երեմիա 51.15,16** \_\_\_\_\_

**Ամովս 4.13** \_\_\_\_\_

**Յովնան 1.9** \_\_\_\_\_

**Զաքարիա 12.1** \_\_\_\_\_

Խորհեցե՛ք մեր ծագման մասին: Ինչո՞ւ է այդքան կարևոր ծիշտ հասկանալ այդ հարցը, եթե մենք ցանկանում ենք ինանալ, թե ով ենք, ինչու ենք գտնվում այստեղ և ինչի վրա կարող ենք հուսալ աշխարհում, որն ինքնին ոչ մի հույս չի ներշնչում:

## ***Հինգամբթի***

## ***հունվարի 24***

### **Արարումը Նոր Կրտակարանում**

Կարդացե՛ք Գործք առաքելոց 17.22-31-ը: Ի՞նչ հաճամանք-ներում հնչեց Պողոսի քարոզը: Դիմելով այդ ուսյալ մարդկանց՝ առաջալն առաջին հերթին ինչի՞ մասին սկսեց խոսել (*համարներ 24, 25*): Ի՞նչ ասաց Պողոսը Արարիչ Աստծո և մարդկանց փոխ-հարաբերությունների մասին (*համարներ 26-28*): \_\_\_\_\_

Անկարած, տվյալ լսարանը ներառում էր փիլիսոփաների երկու խոսմք՝ ստոիկներին և էպիկուրյաններին: Ստոիկները համամիտ էին բնության մեջ մտադրության իրական լինելուն, այն դեպքում, եթե էպի-կուրյանները ժիստում էին դա: Ո՞չ սրանք, ո՞չ մյուսները գիտություն չունեին ճշմարիտ Աստծո մասին, բայց նրանց փաստարկները բնության մեջ մտադրության առկայության վերաբերյալ հար և նման են շատ ժամանակակից փաստարկների:

Այստեղ կարևոր է նկատել, որ հեթանոս մտածողներին իր վկայության մեջ Պողոսը շեշտադրում է այն ճշմարտությունը, որ Աստված ամեն ինչի Արարիչն է, մարդկության Արարիչը: Պողոսը թիւ ընդհանրություններ ուներ իր ունկնդիրների հետ, այդ պատճառով նա միանգամից դիմում է այն բանին, ինչն, այնուամենայմիվ, ընդհանուր էր նրանց համար՝

նրանց բուն գոյությանը, և ելնելով այդ անվիճելի իրականությունից՝ նա ձգում էր կառուցել իր փաստարկները: Այսպիսով, մենք կրկին տեսնում ենք, որ արարումը Սուրբ գործի կարևորագույն թեմաներից մեկն է:

Կարդացե՛ք հետևյալ համարները. *Մաղրենս 19.4-6, Մարկոս 2.27, Ղուկաս 3.38, Հովհաննես 1.1-3, Բ Կորնեացիս 4.6, Երրայեցիս 4.4, Հակոբոս 3.9, Բ Պետրոս 3.5, Հուդա 11, 14: Հիացնում է այն, որ այս նորկտակարանյան հեղինակներից յուրաքանչյուրն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հղում է կատարում Ծննդոց գրքում արարման պատմությանը: Դա ևս մեկ անգամ վկայում է, թե աստվածաշնչյան հեղինակների կողմից որքան ընդունված էր Ծննդոց գրքում տրված՝ մեր ծագման մասին պատումը:*

**Կարդացե՛ք Յայտնություն 4.11-ը և 10.5,6-ը: Երկնային էակներն ի՞նչ են ասում Աստծո ստեղծագործ գորության մասին:**

---

Արարումը պատահականություն չէր. այն տեղի է ունեցել Աստծո կամքով: Երկրորդ հատվածում հատակ հղում կա Ելիս 11-ին: Եվս մեկ անգամ (ինչպես և Հովհաննես 1.1-3-ում) Հովհաննեաը ցույց է տալիս իր տեղյակ լինելը արարման պատմությանը և դրա հանդեպ հավատը: Մեր կողմից անմտություն կլինի այլ կերպ վարվելը:

## **Ուրբաթ**

## **Իունվարի 25**

### **Յեփագա ուսումնասիրության համար**

Աստվածաշունչը գիրք է Աստծո և մարդկանց ու մեր աշխարհի հետ Նրա փոխարարերությունների մասին: Արարման շաբարվա իրադարձությունները եզակի են և գերբնական: Դրանք չեն մտնում գիտական հետազոտության ոլորտը երկու պատճառով: Նախ, դրանք եզակի են: Այդ իրադարձությունները տեղի են ունեցել միայն մեկ անգամ: Գիտության համար շատ դժվար է հետազոտել դրանք, քանի որ դրանք չեն կարող կրկնվել և ենթարկվել թեստավորման: Երկրորդ, արարման իրադարձությունները գերբնական են: Դրանք չեն երել Աստծո կողմից արարման իրականացման բնական արդյունքը, այլ Նրա հասուկ նպատակաուղղված գործողություններն են: Գիտությունը գործ ունի միայն պատրաստի նյութի հետ և չի ընդունում ոչ մի բացարություն, որոնք կապված են Աստծո անմիջական միջամտության հետ (գոնեն, այդպես է այժմ): Քանի որ արարման իրադարձությունները եզակի են

և գերբնական, դրանք գտնվում են գիտության հասանելիության սահմաններից դուրս: Դա կարևոր է գիտակցել, քանի որ մարդու կողմից իր ծագման ըմբռնումն ազդում է նրա եռարյան և նույնականացման վերաբերյալ նրա հայացքների վրա: Մեր ծագման ըմբռնումն այնքան կարևոր է, որ Աստված այդ թեման տեղադրել է Աստվածաշնչի առաջին տեղում, և աստվածաշնչյան լուրը իմանված է արարման վերաբերյալ պատումի պատմականության վրա: Պնդել, որ մենք կարող ենք իմանալ մեր երկրի պատմությունը գիտության օգնությամբ՝ նույնն է, թե ասել, որ այդ պատմությունը կարելի է բացատրել առանց Աստծո ուղղակի միջամտությունը հաշվի առնելու: դա մոլորդություն է, որը տանում է ել ավելի մեծ մոլորդության:

«Մարդիկ ջանալու են արարման գործը, որն Աստված երբեք չի բացահայտել, բացատրել բնական պատճառներով: Բայց մարդկային գիտությունը չի կարողանա բացահայտել երկնքի Աստծո գաղտնիքները և բացատրել ամենազոր ուժի հրաշք արարման ահոելի աշխատանքը ավելի վաղ, քան այն կկարողանա բացատրել Աստծո ծագումը» (Ե. Ուայթ, Հոգևոր պարզեներ, հտ. 1, 89):

## **Յարցեր քննարկման համար**

1. Արարումն Աստվածաշնչի գլխավոր թեմաներից մեկն է: Կա՞ որևէ վկայություն, որ Աստվածաշնչի հեղինակները տարբեր հայացքներ են ունեցել արարման վերաբերյալ, կամ որ նրանցից որևէ մեկը կասկածել է Ծննդոց գրքի որոշ հատվածների ճշմարիտ լինելուն: Ինչո՞ւ է կարևոր այդ հարցին պատասխանելու:
2. Ի՞նչ փաստարկներ են բերում մարդիկ՝ բացատրելով, թե ինչու իրենք չեն հավատում, որ բնությունն ինքը վկայում է Արարշի մտահղացման նասին:
3. Յիսուսը հաստատեց Մովսեսի գրքերի հեղինակությունը (Պուկաս 16.29-31), այդ թվում նաև՝ արարման նասին պատմությունը (Մարկոս 2.27,28, Մատթեոս 19.4-6): Յիսոնված լինելով վերն ասվածի, ինչպես նաև Յիսուսի օրինակի վրա՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր դիրքորոշումը արարման պատմության վերաբերյալ:

## ԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

*Ծննդոց 2.16,17, Ծննդոց 1.26-28, Հակոբոս 3.9, Գործը առաքելոց 17.26, Առակաց 14.31, Մարքոս 5.44-48, Հայոցություն 20.11-13:*

### **Հիշելու համարը**

«Եվ Եղովա Ասպարագը պատվիրեց մարդում՝ ասելով. Պարսեզի ամիսն ծառից համարժակ կեր, բայց բարու և չարի զիկության ծառից մի՛ կեր, որովհետիւն նրանից կերածդ օրը մահով պիտի մեռնեն» (Ծննդոց 2.16,17):

Մարդիկ սիրում են խոսել մարդու իրավունքների մասին: Այն ժամանակից, երբ գրվել է Ազատությունների մեծ խարսխան (1215 թ.), Մարդու և քաղաքացու իրավունքների հոչակագիրը (1789 թ.), և մինչև ՍՍԿ-ի վերջին հոչակագրերը, զարգանում է այն գաղափարը, որ մարդիկ օժտված են որոշակի «անկապտելի» իրավունքներով, որոնք ոչ ոք չի կարող խլել նրանցից: Դրանք մերն են այն բանի հիման վրա, որ մենք մարդ ենք (զոնե այլպես է ասում տեսությունը):

Բայց մնում են հարցեր՝ ի՞նչ իրավունքներ են դրանք: Ինչպես մենք կարող ենք դրանք որոշել: Կարո՞ղ են այդ իրավունքները ձևափոխվել, և եթե այս, ապա ինչպե՞ս: Ինչո՞ւ մենք՝ դրանք մարդիկ, անպայման պետք է ունենանք այդ իրավունքները:

Օրինակ, որոշ երկրներում կանաց չեր բույլատրվում մասնակցել քվեարկություններին ընդհուած մինչև քսաներորդ դարը (որոշ ժողովուրդներ մինչ այժմ մերժում են այդ իրավունքը): Այդ դեպքում կառավարությունն ինչպե՞ս կարող է պարզել մարդկանց ինչ-որ բան, ինչն արդեն հանդիսանում է նրանց «անկապտելի իրավունքը»:

Մրանք բարդ հարցեր են, որոնց պատասխաններն անխօնիորեն կապված են մարդու ծագման՝ այս շաբաթվա դասի թեմայի հետ:

## ՄԵՐ ԿԱԽՎԱԾՈՒՂԵՅՈՒՆՆ ԱՐԱՐՀԻԳ

Ծննդոց 2.7-ում պատմվում է այն մասին, թե ինչպես Աստված արարեց Աղամին, ընդ որում՝ մյուս արարձներից առանձին: Տեքստը մարդուն ներկայացնում է որպես մտավորական բարոյական էակ, և ոչ թե որպես կենդանի: Համարում նշված չեն մանրամասները, բայց մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպես է Աստված ձեռքը վերցնում երկրի հողը, որպեսզի դրան տա մտածված ձևն ու չափերը; Որևէ մեկը կարող է մտածել, թե տիեզերքի մեծ Իշխանը չէր կռանա և չէր աղտոտի ձեռքերը՝ կերտելով մարդուն, սակայն Աստվածաշունչը պատկերում է այնպիսի Արարջի, ով խորապես ներգրավված է արարման գրձերացի մեջ և սերտորեն փոխգործակցում է Իր արարածների հետ: Չէ՞ որ Ծննդոց 2.7-ում օգտագործված «շինել» բառը (Եբրայերեն՝ «յացառ») տառացիորեն նշանակում է ձևավորել, կերտել: Սուրբ Գիրքը պատմում է բազում դեպքերի մասին, երբ Աստված հաճույքով փոխգործակցում էր Իր արարածների հետ: Որպես օրինակ կարելի է բերել այնպիսի հատվածներ. ինչպես Ելից 32.15,16-ը, Դուկաս 4.40-ը, Հովհաննես 9.6-ը: Խսկապես, Քրիստոսի մարմնացումը մարդկային մարմնով և Նրա ամենօրյա կյանքը Իր ստեղծած աշխարհում, որը գործնականում նման է մերին, հերքում է այն հասկացույթունը, որ Աստված չէր կռանա, որպեսզի «ձեռքերը աղտոտի» մարդու համար:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.16,17-ը: Աստված ինչպիսի՞ պատվեր տվեց Աղամին: Ո՞րն է այդ պատվերի եռթյունը:**

---

Սենք կարող ենք հարցնել, թե Աստված իրավունք ունե՞ր կանոնական սահմանել Աղամի ու Եվայի համար: Այդ իրավիճակը համեմատե՛ք ընտանիքի իրավիճակի հետ, որտեղ կա փորձիկ երեխա: Ծնողները երեխայի համար ապահովում են բնակարան և կյանքի համար անհրաժեշտ ամեն բան: Նրանք սիրում են իրենց երեխային և կենտրոնացված են նրա վրա, ինչը լավագույնն է նրա համար: Նրանց ոչ փորձը և իմաստությունը կարող են երեխային ազատել շատ դժբախտություններից, եթե նա, իր հերթին, հնազանդություն դրանուի: Որոշ երեխաների համար դժվար է հնազանդվել ծնողներին, բայց հաճընդհանուր ճանաչում ունեցող նորմ է այն փաստը, որ քանի դեռ երեխան կախված է ծնողներից, նա պարտավոր է ընդունել նրանց կանոնները: Ծիշտ նույն

կերպ մենք էլ միշտ կախված ենք մեր երկնային Հորից, ով պահպանում է մեր կյանքը և մեզ տալիս է անհրաժեշտ ամեն ինչ, այդ պատճառով էլ մեզ համար ճիշտ կիհնի ընդունել Նրա առաջնորդությունը: Քանի որ Նա սիրո Աստված է, մենք կարող ենք հավատ ընծայել, որ Նա միշտ գործելու է հօգուտ մեզ:

**Կարդացե՛ք Սաղմոս 95.6,7-ը և Սաղմոս 100-ը: Սաղմոսերգուն ինչպես է արտահայտում մեր կախվածությունն Աստծուց: Այդ կախվածությունն ի՞նչ պարտականություններ է դնում մեզ վրա, հատկապես՝ այլ մարդկանց վերաբերմամբ:**

---

---

## **Երկուշաբթի**

## **հունվարի 28**

### **«Աստծո պատկերով»**

**Կարդացե՛ք Ծննդոց 1.26-28-ը: Աստված ի՞նչ առանձնահատկությամբ օժտեց մարդուն, ինչը պակասում է կենդանիներին: \_\_\_\_\_**

---

Ի՞նչ է նշանակում «Աստծո պատկերով»: Այս հարցն անթիվ քննարկումներ և տարբեր կարծիքներ է առաջ բերել: Բայց բուն աստվածաշնչյան համարներում կարելի է գտնել տվյալ արտահայտության ըմբռնման բանալին: Նախ, ուշադրություն դարձրեք, որ Աստծո պատկերով ստեղծված լինելը ենթադրում է, որ մենք պետք է որոշակի ննանություն ունենանք Աստծուն: Աստծո պատկերի մի կարևոր տեսանկյունն այն է, որ Աստված մարդուն իրավունք է պարզենել՝ իշխել մնացյալ արարածներին: Քանի որ Աստված ամեն բանի իշխանն է, Նա մարդուն փոխանցել է իշխանության մի մասը՝ նրան պարզելով ձկներին, բռչուներին և կենդանիներին իշխելու իրավունքը:

Նաև ուշադրություն դարձրեք, որ Աստված մտածել էր մարդուն ստեղծել «Սեր» պատկերով, այսինքն՝ պատկերն արտացոլում է Աստվածության հոգնակիությունը: Տերև ստեղծել է մարդկանց՝ տղամարդուն և կնոջը: Աստծո պատկերը լիովին արտացոլվում է ոչ թե մեկ մարդու, այլ փոխարարերությունների մեջ: Ինչպես որ Աստվածությունը փառավորվում է երեք Անձերի փոխարարերություններում, այնպես էլ մարդու մեջ Աստծո պատկերը դրսևորվում է տղամարդու և կնոջ փոխարարերություններում: Փոխարա-

բերություններ կառուցելու ունակությունը Աստծո պատկերի մի մասն է: Խսկ փոխհարաբերությունները, բնականաբար, ենթադրում են պատասխանատվություն, ինչն անխստելիորեն կապված է բարոյականության հետ: Հետևաբար, արդեն այստեղ մենք տեսնում ենք, որ բարոյականության արմատները գտնվում են արարման պատմության մեջ:

**Կարդացե՛ք Ծննդոց 9.6-ը և Յակոբոս 3.9-ը: Գաղափարը, որ մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով, ինչպե՞ս է սերտորեն կապված բարոյականության հայեցակարգի հետ:**

---

Մարդիկ մի հազարամյակ չեն, որ գլուխ են կոտրում բարոյականության հարցի վրա: Բայց նախքան կհաջողվի գլուխ հանել, թե ինչպիսին պետք է լինի բարոյականությունը, բարոյականության գաղափարն ընդհանուր առմամբ բազում խորը խնդիրներ է վեր հանում: Ինչո՞ւ, ի տարբերություն երկրի մյուս բոլոր էակների, մարդիկ օժտված են խղճով և ճիշտը վխալից տարբերելու ունակությամբ: Արարածները, որոնք ստեղծված են, ըստ եռթյան, բարոյականությունից շատ հեռու նյութից (քվարկներից, գլյուտններից, էլեկտրոններից և այլն), ինչպե՞ս կարող են ինչ-որ բան իմանալ բարոյական հայեցակարգերի մասին: Պատասխանը կարելի է գտնել Աստվածաշնչի առաջին գլուխներում, որոնք բացահայտում են, որ մարդիկ բարոյական էակներ են՝ ստեղծված «Աստծո պատկերով»:

## **Երեքաբթի**

**Իունվարի 29**

### **Մի արյուն**

Ծննդոց 2.23-ում Ադամն իր կնոջն անվանում է «Եվա» (երրայերեն՝ *իսավա*): Այդ բառը կապված է երրայերեն *իսայս* բայի հետ, որը նշանակում է «ապրել», «կյանք առնել»: Այդ պատճառով «Եվա» անունը կարող է բարգնանվել «Կյանք տվող կին»: Եվայի անունը խոսում է այն մասին, որ նա բոլոր մարդկանց նախամայրն է: Մենք ամենքս մի ընտանիք ենք՝ բարիս բուն իմաստով:

**Կարդացե՛ք Գործը առաքելոց 17.26-ը: Պողոսն ինչպե՞ս է ողջ մարդկության եղբայրությունը կապում արարման հետ:** Համեմատե՛ք Մատթեոս 23.9-ի հետ:

---

---

Ենք միավորված ենք նրանով, որ բոլորը ծագել են մեկ կնոջց՝ Եվայից, և մեկ տղամարդուց՝ Ադամից: Բայց մեր ճշմարիտ Հայրը, Արարիչը, Կենսատուն Աստված է: Այդ փաստը մարդկային հավասարության հիմքն է: Խորհեք, թե որքան կփոխվեին մարդկային փոխարարերությունները, եթե բոլոր մարդիկ ընդունեին այս կարևոր ճշմարտությունը: Եթե մեզ ապացոյց է հարկավոր, թե որքան ենք մենք ընկել, որքան է մեղքն աղավաղել մեզ, ապա կարող ենք դա տեսնել այն տխուր փաստի մեջ, որ հաճախ մարդիկ միմյանց ավելի վատ են վերաբերվում, քան կենդանիներին:

**Կարդացե՛ք Առակաց 14.31 և 22.2-ը: Այս տեքստերն ինչպե՞ս են օգնում մեզ՝ հասկանալ փոխադարձ կազը բարոյականության և այն փաստի միջև, որ մեզ Աստված է արարել:**

---

---

---

Մարդկությունը բաժանվում է տարրեր գործոններով՝ քաղաքական, ազգային, էքնիկական, տնտեսական: Տնտեսական գործոնը, հավանաբար, ամենածանրակշիռներից է (թեև ոչ այնքան, որքան նախատեսում էր Կարլ Մարքսը. աշխարհի աշխատավորներն այդպես էլ երրեք չմիացան, հակառակը, նրանք միմյանց հետ պատերազմում էին ազգային և տարածքային-տնտեսական պատճառներով): Այսօր, ինչպես և միշտ, աղքատները և հարուստները հաճախ միմյանց վերաբերվում են կասկածով և արհամարհանքով: Որքա՞ն հաճախ են այդ զգացմունքները հանգեցրել բռնության և նույնիսկ պատերազմների: Աղքատության պատճառները և այդ խնդրի լուծումը առաջվա ննան մեզ փակուղի են մտցնում (դեռև Մարքսի 26.II), բայց մի քան անվերապահորեն բխում է Աստծո Խոսքից. հարուստ թե աղքատ, մենք ամենքս ունենք արժանապատվություն, որը մեզ է պատկանում ծագման իրավունքով:

**Դարվինիզմի ժողովրդականացումից հետո որոշ մարդիկ սկսեցին արդարացնել հարուստների կողմից աղքատների շահագործումը՝ «սոցիալական դարվինիզմի» հիման վրա: Տվյալ գաղափարի իմաստը հետևյալն է. եթե բնաշխարհում ուժեղները հարթում և շահագործում են թույլերին, ապա ինչո՞ւ նույն սկզբունքը չի կարող տեղ գտնել տնտեսության մեջ: Կարելի՞ է այդ գաղափարը համարել ևս մեկ օրինակ նրա, թե ինչու ծագման հարցի ծիշտ ընթացումը միանգամայն կարևոր է բարոյականության հարցի ընթացուման մեջ:**

## **ՄԵՐ ԱՐԱՐՀԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աստված մեզ արարել է Իր պատկերով. դա նշանակում է, որ մենք պետք է ներկայացնենք նրա բնավորությունը: Այսինքն, որքանով հնարավոր է մարդու համար, մենք պետք է լինենք այնպիսին, ինչպիսին Նա է: Ուշադրություն դարձրեք՝ Աստծուն և մասն լինելու (բնավորությամբ Աստծուն նման դառնալու) և Աստված լինելու ցանկության միջև հսկայական տարբերություն կա: Բայց Աստծուն նման լինելու, այսինքն՝ Նրա բնավորությունն արտացոլելու համար մենք պետք է ճիշտ հասկանանք այդ բնավորությունը:

**Կարդացե՛ք Մատթեոս 5.44-48-ը: Այս համարներն ի՞նչ են ասում Աստծո բնավորության և այն մասին, թե ինչպես մենք կարող ենք մեր կյանքում արտացոլել Նրա բնավորությունը: \_\_\_\_\_**

---

**Կարդացե՛ք Ղուկաս 10.29-37-ը: Եվ կրկին, այստեղ ի՞նչ է ասվում Աստծո բնավորության և այն մասին, թե ինչպես դա պետք է արտացոլվի մարդու կյանքում: Տես նաև Փիլիպեցի 2.1-8-ը: \_\_\_\_\_**

---

Հիսուսի պատմած պատմության մեջ երկու մարդ են պատկերված երկու անհաջող խմբերից: Բայց Հիսուսը ցույց տվեց, որ նրանք մտերիմներ են: Յուրաքանչյուրը մյուսի առջև պատասխանատվություն էր կրում, և Աստծուն հաճելի էր տեսնել, որ նրանց տարբերությունները մի կողմ են բողնված, և մեկը մյուսին վերաբերվում է բարությամբ և կարեկցանքով: Ինչպիսի հակադրություն կա Աստծո Թագավորության սկզբունքների և սատանայի կառավարման սկզբունքների միջև: Աստված ուժեղներին կոչ է անում հոգ տանել բույերին, այն դեպքում, եթե սատանայի սկզբունքները պահանջում են ուժեղներից՝ ոչնչացնել բույերին: Աստված ստեղծել է բարի փոխարարերությունների աշխարհ, բայց սատանան այնքան է աղավաղել այն, որ շատերն այս աշխարհում ողջ մնալը համարում են ամենախելամիտ վարքը: Եթե մարդն ի հայտ է եկել բնական ընտրության դաժան գործընթացի արդյունքում (որում ուժեղները դուրս են մղում բույերին), ապա նա ինչո՞ւ պետք է այլ կերպ վարվի: Եթե մենք ընդունում ենք այդ կարծիքը, ապա սեփական շահերն առաջ մղելը նրանց հաշվին, ովքեր չեն հաղթահարել «բնական

ընտրությունը», մեզ համար դատնում է ոչ թե պարզապես նորմա, այլ Աստծուն հետևելու և Նրա կողմից սահմանված բնության պահանջ:

**Մեր ծագման ըմբռնումը է՛լ ինչ կերպ կարող է ազդել բարոյականության մասին մեր պատկերացումների վրա:**

## Հինգամբթի

## հունվարի 31

### Բարոյականությունն ու պատասխանադրվությունը

Նախորդ դասին մենք դիտարկեցինք Աթենքում Պողոսի քարոզը (Գործը առաքելոց 17.16-31): Յետևե՛ք նրա փաստարկների ընթացքին՝ ուշադրություն դարձնելով քարոզի ավարտին: Ինչո՞ւ է այդքան կարևոր այն եզրակացությունը, որին հանգեց առաքյալը, հատկապես՝ ինչ վերաբերում է ծագման և բարոյականության հարցին:

---

Աթենացիներին Պողոսի քարոզն սկսվեց արարման թեմայից և ավարտվեց դատաստանի թեմայով: Ըստ Պողոսի՝ աշխարհն ու նրանում եղած ամեն ինչ ստեղծած Աստված սահմանել է մի օր, որում դատելու է աշխարհը: Լինել բարոյական՝ նշանակում է պատասխանատվություն կրել, և մեզանից յուրաքանչյուրը պատասխան է տալու իր արարքների և խոսքերի համար (Կոհեն Ժողովող 12.13, 14, Մատթեոս 12.36, 37):

**Կարդացե՛ք Հայտնություն 20.11-13-ը և Մատթեոս 25.31-40-ը:**  
Ի՞նչ հստակ ուսմունք է շարադրված այս համարներում, և ինչպես է այն կապված բարոյականության հետ:

---

---

Բոլոր մարդիկ, ովքեր երբեւ ապրել են երկրի վրա, Աստծո ներկայությամբ հանդիպելու են դատաստանի ժամանակ: Հիսուսի առակում մարդկանց երկու խմբերի միջև եղած տարբերությունն այն է, թե ինչպես էին նրանք վերաբերվում կարիքավորներին: Արարջի համար միևնույնը չէ, թե ինչպես են իր արարածները վերաբերվում իրար, հատկապես՝ կարիքի մեջ գտնվողներին: Երկնքում տեղ չկա բնական ընտրության սկզբունքի համար, այն հակասում է աշխարհի Աստծո ընավորությանը:

Աստվածաշունչը հստակ կերպով սովորեցնում է, որ մի անգամ Աստված Ինքը կվերականգնի արդարությունը, որն այսօր այնքան պա-

կասում է աշխարհին: Ավելին, դատաստանի գաղափարը ենթադրում է բարոյական Օրենքի առկայություն՝ մի՞թե Աստված կդատեր և կպատժեր, եթե մինչ այդ տված չիներ բարոյական չափորոշչներ, որոնց մարդիկ կկարողանային հետևել: (Տե՛ս Հակոբոս 2.12, Բ Կորնթացիս 5.10):

**Մտորե՛ք դատաստանի իրական և անխուսափելի լինելու մասին:** Մենք ինչպե՞ս կարող ենք վստահ լինել դատաստանում մեր գործի ելքի մասին: Ինչո՞ւ են դրա համար մեզ անհրաժեշտ Բարի լուրը և Քրիստոսում փրկության խոստումը:

## Ուրբաթ

## Քիելորվարի 1

### **Յեղագա ուսումնասիրության համար**

Ըստ Սուրբ Գրքի՝ Աղամը եղել է առաջին մարդը, ում ստեղծել է Աստված հողի փոշոց: Բարոյականության ակունքների մեր ըմբռնումը հիմնված է Աղամի ծագման վրա: Բարոյականության աստվածաշրնչյան հայեցակարգը անբաժանելի է արարման մասին աստվածաշնչյան ուսմունքից:

Աղամին որպես առաջին մարդ ընդունելը նույնպես հերքում է այն գաղափարը, որ ինչ-որ բրածոներ եղել են Աղամի կամ այլ մարդկանց նախնիները: Որտեղի՞ց հայտնվեցին այդ բրածոներն ու մնացորդները: Գոյություն ունեն տարբեր ենթադրություններ: Նախ, մարդանման բրածոները, հնարավոր է, եղել են մարդիկ, ովքեր ունեցել են նորմալ միտք, բայց ոչ ստանդարտ կառուցվածք: Մեկ այլ ենթադրություն ամփոփվում է նրանում, որ մարդիկ կարող էին այլանդակվել կենսակերպի, շրջակա միջավայրի կամ այլ գործոնների պատճառով: Երրորդ հնարավորությունը ենթադրում է, որ գունված բրածոները կարող էին լինել սատանայի միջնորդավորված փորձերի արդյունքը՝ արարածներին աղավաղել մեզ անհայտ կերպով: Եվս մեկ հնարավորություն ենթադրում է, որ դրանք առհասարակ եղել են ոչ թե մարդիկ, այլ միայն մարդանման էակներ: Տարբեր մարդիկ գերադասում են տարբեր բացատրություններ, բայց, քանի որ մենք ուղղակի ապացույցներ չունենք այս հարցը փակելու համար, ավելի լավ է այս թեմայով մտորումներին դոգմատիկ քնույթ չհաղորդել: Բրածոներին չեն գտնում նրանց ամրացված ցուցանակներով, ասենք՝ «Արտադրվել է Չինաստանում, 500 միլիոն տարի առաջ»: Երկրային պատմության մեր ըմբռնումը, որը միանգամայն ոչ միանշանակ է գիտական շրջանակներում, մեզ տալիս է միայն կմախքը,

որի շրջանակներում մենք բացատրում ենք բրածոները, սակայն մեր բացատրություններն ապացույցներ չունեն:

## **Նարցեր քննարկման համար**

1. Խորհեք, թե ինչ կպատահեր, եթե չլիներ Աստված, ով մարդուն պարգևել է բարոյական Օրենքը: Որտեղի՞ց կհայտնվեին բարոյական սկզբունքները: Շատ մարդիկ, թեև չեն էլ հավատում Աստծուն, այնուամենայնիվ, որոշակի բարոյական սկզբունքներ ունեն: Բացի Աստծո Օրենքից, ինչի՞ հիման վրա մարդը կարող է զարգացնել բարոյական նորմերը: Ենթադրաբար, դա ինչի՞ կարող էր հանգեցնել: Ո՞ր բացարձակ թերությունը կընութագրեր բոլոր արդյունքները:
2. Արարման վերաբերյալ մեր տեսակետն ինչպե՞ս է ծևավորում մեր կարծիքը այնպիսի խնդիրների վերաբերյալ, ինչպես եվրանազիան, կլոնավորումը, հղիության արհեստական ընդհատումները և այլն:
3. Տեղաբնակը, ով կամավոր կերպով համաձայնել էր ուղեցույց լինել Դախառուի նացիստական համակենտրոնացման ճանքարում, եքսկուրսիան սկսեց Զարլզ Դարվինի էվոլյուցիոն տեսության վերաբերյալ զրույցից՝ ենթադրելով, որ հենց այդ տեսությունն է բույլ տվել Դախառուի և այլ նման վայրերի գոյությունը: Ո՞րն է դատողությունների նման շղթայի ակնհայտ տրամաբանությունը: Ինչո՞ւմ այն կարող է սխալ դուրս գալ:

## ԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԵՂԱՆՉՈՒՄԸ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 3.1-15, Մալրենու 4.3-10, Կողոսացիս 2.20-23, Հովհաննես 3.17, Հայունություն 14.6, 7:

### **Հիշելու համարը**

«Եվ Ես քշնամություն եմ դնում քո և կնոջ մեջպես, քո սերնդի և նրա սիրնդի միջպես, նա քո գլուխը ջախջախի, և դու նրա գարշապարը իսպյիս» (Ծննդոց 3.15):

Մի կատակերգակ դերասան հաճախ խաղում էր Ձերալդինայի՝ նախարարի կնոջ դերը: Մի անգամ կինը տուն եկավ նոր քանկարժեք շրջազգեստով: Նրա ամուսինը (ում դերը նույն դերասանն էր խաղում) զայրացավ: Իսկ Ձերալդինան ի պատասխան գոչեց. «Սատանան ստիպեց ինձ գնել այս զգեստը: Ես չէի ուզում գնել այն, բայց սատանան ինձ հանգիստ չէր տախիս»:

Հեղինակը ենթադրում էր, որ դա պիտի որ ծիծաղելի լիներ: Բայց մեր աշխարհը և նրանում քագավորող չարիքը վկայում են, որ սատանան կատակ բան չէ:

Որոշ մարդիկ սատանայի գոյության գաղափարն ընկալում են որպես հնագույն նախապաշարմունք, որին չարժե լրջորեն վերաբերվել: Սակայն Սուրբ Գիրքը որոշակիորեն ասում է՝ թեև սատանան պարտված քշնամի է (Հայտնություն 12.12, Ա Հովհաննես 3.8), նա, այնուամենայնիվ, գունվում է այստեղ՝ երկրի վրա, և ցանկանում է Աստծո արարածներին հնարավորինս շատ վնաս ու ավերածություն պատճառել:

Այս շաբաթ մենք կը նարկենք սատանայի առաջին հարձակումը և կփորձենք այդ դեսպիցի որոշակի դասեր քաղել, որպեսզի, ենթարկվելով նրա հարձակումներին, կարողանանք հուսալ մեզ խոստացված Քրիստոսի հաղթանակին:

## «Բայց օձը ավելի խորամանկ էր»

Կարդացե՛ք Ծննդոց 3.1-ը: Այստեղ ինչպե՞ս է նկարագրված օձի կերպարանը ընդունած սատանան:

Օձի խորամանկությունն ի հայտ է զալիս նրանում, թե ինչպես է նա գայթակղում: Նա բացեիրաց հարձակում չի ձեռնարկում, այլ փորձում է կնոջ ներքաշել գրուցի մեջ: Ուշադրություն դարձրեք, որ օձի խոսքերն առնվազն երկու կասկած են բովանդակում: Նախ, նա հարցնում է, թե իսկապե՞ս Տերը որոշակի հայտարարություն է արել: Երկրորդ, նա իր հարցը կառուցում է այնպես, որ կասկածի տակ դնի Աստծո մեծահոգությունը: Նա փատացի հարցնում է. «Սի՞թե Աստված իսկապես ինչ-որ բան է բացենում ձեզանից: Սի՞թե ձեզ չի կարելի ուտել այգում եղած բոլոր ծառերից»: Նպատակաուղղված կերպով աղավաղելով Աստծո հրահանգները՝ օձը կնոջը դրդում է ուղղել ասկածը և այդպիսով հաջողությամբ խոսքի է բռնվում նրա հետ: Նրա ուզմավարությունն իսկապես խորամանկ է:

Իհարկե, սատանայի մարտավարությունը չպետք է զարմացնի մեզ: Հիսուսը նրան անվանել է ստախոս և ստության հայր (Հովհաննես 8.44): Հայտնություն 12.9-ում ասված է, որ սատանան նպատակ ուներ մողոքեցնել ողջ տիեզերքը, իսկ դա նշանակում է, որ ոչ մեկը, անգամ Յոթերորդ օրվա աղվենտիստ քրիստոնյաները, անվտանգության մեջ չեն: Սիանգամայն ակնհայտ է, որ սատանան իր խորամանկության և նեճագության մի փոքր մասն անգամ չի կորցրել: Նա առաջվա նման օգտագործում է այն նույն ուզմավարությունը, որի օգնությամբ հաջողությամբ գայթակղել էր Եվային: Նա հարցականի տակ է դնում Աստծո Խոսքը և Նրա մտադրությունները՝ հուսալով կասկածներ սերմանել և մեզ ներքաշել «Երկխոսության» մեջ: Նրա խարդավանքներին դիմակայելու համար մենք պետք է արքուն լինենք (Ա Պետրոս 5.8):

Յամենատե՛ք Մատթեոս 4.3-10-ը Ծննդոց 3.1-ի հետ: Սատանան ինչպե՞ս էր փորձում Յիսուսի նկատմամբ կիրառել այդ նույն հնարքը, բայց ինչո՞ւ այն չազդեց: Անապատում սատանայի հարձակումներին Յիսուսի պատասխաններից մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել: Սատանան ինչպե՞ս է ջանում միևնույնն այսօր անել մեզ հետ:

## **Կինը և օձը**

**Կարդացե՛ք Ծննդոց 3.2,3-ը: Կինն ի՞նչ պատասխանեց օձին:**  
**Ի՞նչ սխալներ նա գործեց:** \_\_\_\_\_

«Հրեշտակները Եվային նախազգուշացրել էին՝ այզում առօրյա աշխատանքների ժամանակ չհեռանալ ամուսնուց, քանի որ նրա հետ կնոջը փորձության ենթարկվելու ավելի քիչ վտանգ կապառնար: Բայց, իր հաճելի աշխատանքով կլանված, նա աննկատ հեռացավ ամուսնուց: Երբ Եվան նկատեց, որ միայնակ է մնացել, նա վերահս վտանգի ինչ-որ մոայլ կանխազգացում ունեցավ, բայց շուտով իրենից վանեց առաջացած վախը՝ որոշելով, որ ինքը բավականաշախ խելացի և ուժեղ է, որպեսզի տարբերի չարը և դիմակայի նրան: Նա մոռացավ հրեշտակների նախազգուշացումները և շուտով հայտնվեց արգելված ծառի առջև՝ դրան նայելով հետաքրքրասիրության և հիացմունքի խառը զգացմունքով: Ծարից կախված պատուիները հիասքանչ էին, և Եվան տարակուսում էր, թե ինչու Աստված արգելեց ուտել դրանք:

Փորձիչի համար հարմար պահը հասավ... «Ուտելով այդ ծառից, - ասում էր սատանան, - դուք կկարողանաք ներքափանցել զոյության բարձրագույն ոլորտները և Է՛լ ավելի շատ գիտելիքներ ծեռք բերել»: Հետո, ասես ի հաստատումն իր խոսքերի, նկատեց, որ ինքը նույնպես փորձել է արգելված պտուղները և դրա շնորհիվ ծեռք է բերել խոսելու ընդունակություն... Եվ միայն այն պատճառով, որ այդ պտուղներն օժտված են իմաստություն և զորույթուն հաղորդելու հրաշալի հատկությամբ, Աստված նրանց արգելել է նրանց ոչ միայն ուտել, այլև անգամ դիպչել դրանց» (Ե. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 54):

**Ինչպես ենք մենք գայթակղվում՝ անել այն, ինչի մասին նախագուշացվել ենք: Ինչպես մենք կարող ենք դիմակայել այդպիսի գայթակղություններին:**

## **Խարված ակներևով**

**Կարդացե՛ք Ծննդոց 3.4-6-ը: Եվայի ո՞ր եզրակացությունները նրան հասցրեցին անկման: Մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել**

**այդ փորձառությունից, որոնք կօգնեն մեզ՝ գլուխ հանել ցանկացած փորձությունից, որոնք հանդիպում են մեր ծանապարհին:**

---

Սատանան հաջողությամբ Եվային ներքաշում է երկխոսության մեջ և կասկածեր ցանում այն բանի վերաբերյալ, թե ինչ և ինչու ասաց Աստված: Հետո նա հայտնում է Եվային, որ Աստված չի պատմում ողջ ճշմարտությունը, ինչպես նաև՝ հայտարարում է պտուղներն ու տելու արգելվի դրդապատճառները: Համաձայն սատանայի բացառությունների՝ Աստված նրանցից ինչ-որ լավ բան է թաքցնում՝ Աղամին ու Եվային բույլ շտաբով բացահայտել իրենց բոլոր հնարավորությունները: Այժմ սատանան հենավում է իր նախորդ հարցի վրա այն մասին, թե իսկապե՞ս Աստված նրանց բույլ չի տալիս ուտել ծառերի պտուղներից:

Եվան հենավում է երեք պահի վրա, ինչը նրան հանգեցնում է եզրակացության. ուտելով պտուղը՝ ինքն օգուտ կստանա: Նախ, նա տեսնում է, որ ծառը լավ է ուտելու համար: Թեև Աղամն ու Եվան նախազգուշացված էին, որ չուտեն այդ պտուղներից, կինը նկատում է, որ «ծառը լավ է ուտելու համար»: Խորհեք զգացողությունների և «Այսպես է ասում Տերը» խորքերի հականարտության մասին:

Երկրորդ պատճառը, որը Եվային դրդեց ուտել պտուղը, այն էր, որ այն հաճելի էր աչքի համար: Անշուշտ, այզու բոլոր պտուղներն ել հիասքանչ էին, սակայն ինչ-որ պատճառով Եվային հատկապես դուր եկավ սատանայի առաջարկած պտուղը:

Պտոյի՝ իմաստություն պարզեցելու ենթադրյալ հատկությունը դարձավ երրորդ պատճառը, որ Եվան փափագեց ուտել պտուղը: Օճը համոզեց նրան, որ պտուղն ուտելով՝ նա ավելի մեծ գիտելիք կստանա և Աստծո նման կդառնա: Ցավալի է, բայց Եվան չիիշեց այն մասին, որ ինքն արդեն նման էր Աստծուն (Ծննդոց 1.27):

Մեզ ասված է, որ Եվան խարվեց, իսկ Աղամը՝ ոչ (Ա Տիմոթեոս 2.14): Եթե Աղամը խարված չէր, ինչո՞ւ նա կերավ պտուղը: Աղամը գիտակցարար չինազանդվեց Աստծուն՝ գերադասելով հետևել Եվային, ոչ թե Աստծուն: Այսօր մենք հաճա՞ն ենք նման վարքի ականատես լինում: Որքա՞ն հեշտությամբ մենք կարող ենք ենթարկվել շրջապատողների խորքերին ու զործերին ենթարկվելու գայթակղությանը, թեև դրանք լիովին հակասում են Աստծո Խորքին: Աստծուն ենթարկվելու փոխարեն՝ Աղամը ենթարկվեց Եվային, և դա դուր բացեց այն մղձավանջի առջև, որը հայտնի է որպես մարդկային պատմություն (տե՛ս Հռոմեացիս 5.12-21):

## **Ճնորին ու դապը Եղեմում Մաս առաջին**

Ծննդոց 3-ում տեղի ունեցած մեղանչումից հետո Stերը մարդկանց է դիմում հարցերով. «Որտե՞ղ ես... Ո՞վ պատմեց քեզ, թե դու մերկ ես: Արդյոք այն ծառից, որի համար քեզ պատվիրեցի, որ նրանից չուտես, կերա՞ր... Դա ի՞նչ ես արել» (Ծննդոց 3.9,11,13):

Այս հարցերին հետևում է Աստծո առաջին հաստատական հայտարարությունը, Նրա կողմից փաստերի առաջին մեջքերումը: Ի՞նչ է ասում Աստված՝ դիմելով օճին, և ո՞րն է Նրա խոսքերի նշանակությունը: *Տես Ծննդոց 3.14, 15:*

---

---

Խորիե՛ք տեղի ունեցածի իմաստի և հետևանքների մասին: Ընկած աշխարհին Աստծո առաջին դեկլարատիվ հայտարարությունը փաստորեն իրենից ներկայացնում է սատանայի, և ոչ թե մարդու դատապարտումը: Եվ նոյնիսկ սատանայի այս դատապարտման մեջ Աստված մարդկությանը տախս է հույս և Ավետարանի խոստումը (*համար 15*): Սատանայի հանդեպ մեղադրական դատավճիռ կայացնելով՝ Նա հույս է հոչակրու մարդկության համար: Չնայելով նրանց մերքին՝ Stերն անմիջապես Աղամին ու Եվային բացահայտում է փրկագննան խոստումը:

Նաև ուշադրություն դարձրեք, որ միայն այդ խոստումից հետո, միայն շնորհի ու փրկության հույսից հետո, որ տրված է 15-րդ համարում (որը հայտնի է նաև որպես «առաջին ավետարանական խոստում»), Stերը հնչեցնում է Աղամի ու Եվայի դատավճիռը. «Եվ կնոջն ասաց. Շատ պիտի շատացնեմ քո հղության ցավերը, և ցավով զավակ ծնես... Եվ Աղամին ասաց. Որովհետև դու լսեցիր քո կնոջ խոսքին...» (Ծննդոց 3.16,17):

Այ՛ անտեսեք հետևյալ պարագամ՝ նախ զալիս է փրկության խոստումը, հետո զալիս է դատը: Դատն ընթանում է միայն Ավետարանի համատեքստում, այլ կերպ ասած՝ դատը ենթադրում է դատապարտում, բայց Սույրք Գիրքը հստակ կերպով ասում է. «Որովհետև Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ աշխարհին դատի, այլ որ աշխարհը նրանով փրկվի» (Հովհաննես 3.17):

Ինչո՞ւ է կարևոր միշտ մտորել այն մասին, որ Աստծո նպատակը մեզ փրկելն է, և ոչ թե դատապարտելը: Ինչպե՞ս է մեր կյանքում մեղքը երեմն մթագնում այդ կարևորագույն ծշմարտությունը: Այլ խոսքերով՝ ինչպե՞ս է մեղքը մեզ Աստծուց հեռացնում:

## Ճնորիը և դափը Եղեմում Երկրորդ մաս

Ծննդոց 1-ում և 2-ում Աստված դեկլարատիվ պնդումներ (կամ հրամաններ) է արտասանում, այնպիսիք, ինչպես՝ «Լուսավորներ լինեն երկնքի հաստատությունում... Երկիրը շնչավոր կենդանի հանի իր տեսակի պես... Լավ չէ, որ մարդը մենակ լինի»: Այս բոլոր հրամանները վերաբերում են արարմանը և այդ արարչազործության մեջ մարդկության բնակեցմանը: Ինչպես մենք երեկ տեսանք, Աստվածաշնչում զրի առնված հաջորդ հաստատական հայտարարությունը հանդիպում է Ծննդոց 3.14,15-ում: Այնտեղ Աստված մարդկությանն առաջարկում է Ավետարանը:

Եվ այսպես, Սուրբ Գրքում Աստծո առաջին պնդումները վերաբերում են արարմանը, իսկ հետո՝ փրկագննանք, և այդ փրկագնումն ի հայտ է գալիս բուն դատաստանի համատեքստում: Այդպես էլ պետք է լիներ: Ի վերջո, ո՞ր կլիներ Ավետարանի նպատակը, ինչո՞ւմ կամ փոփփեր «Բարի լուրը», եթե չլիներ դատը, չլիներ դատապարտումը, որից անհրաժեշտ է փրկագնել: Ավետարանի հայեցակարգն ինքը կըրում է դատապարտման գաղափարը, բայց այդ դատապարտումը մենք ստիպված չենք լինի վերապրել: *Սա Բարի լուր է:*

Թեև մենք խախտել ենք Աստծո Օրենքը, և թեև Աստված դատելու է օրինախախտներին, Քրիստոս Հիսուսում բոլորը, ովքեր ընդունել են Նրա քավշարար զոհը, ազատված են դատապարտումից, որն անխոսափելիորեն կրերի դատաստանը:

Արարում, Ավետարան ու դատ՝ այս թեմաները հանդիպում են Աստվածաշնչի ոչ միայն առաջին, այլ նաև վերջին էջերում: Կարդացե՛ք Հայտնություն 14.6,7-ը: Այս համարներն ինչպե՞ս են կապված Ծննդոց գրի առաջին երեք գլուխների հետ: Ի՞նչ զուգահեռներ կարելի է տեսնել այդ համարներում: \_\_\_\_\_

Հայտնություն 14.6,7-ում Աստված ներկայացված է որպես Արարիչ, դա նաև Ծննդոց գրքի առաջին երեք գլուխների հիմնական թեման է: Հայտնություն 14-ում, ինչպես և Ծննդոց 3-ում, նախ հնչում է «հավիտենական Ավետարանը», իսկ հետո՝ դատի մասին հաղորդումը: Այստեղ խոսվում է դատի մասին, բայց ոչ ավելի վաղ, քան Ավետարանի մասին: Եվ այսպես, մեր լորի հիմքը այսօր պետք է լինի շնորհը՝ բարի լորը ահա թե ինչի մասին. թեև մենք արժանի ենք դատապարտնան, սակայն մենք կարող ենք արդարացվել, մաքրվել և ներվել Հիսուսի միջոցով: Առանց Ավետարանի մեր ճակատագիրը կլիներ այնպիսին, ինչպես և օձի ու նրա սերնդի ճակատագիրը, և ոչ թե այնպիսին, ինչպես կնոջը և նրա սերնդինը: Ապշեցուցիչ է, որ այդ մեծ լորը հնչում է արդեն Եղեմում՝ ընկած աշխարհին ուղղված Աստծո առաջին իսկ բառերում:

## **Ուրբաթ**

## **Վիերովարի 8**

### **Յեփագա ուսումնասիրության համար**

«Աստված մեր նախածնողներին տվել էր սնունդ, որը նա սահմանել էր ողջ մարդկային ընտանիքի համար: Արարված էակներից որևէ մեկի կյանքը խելք հակասում է Նրա ծրագրին: Եղեմում չպետք է մահ լիներ» (Է. Ուայթ, Խորհուրդներ եկեղեցու համար, 228):

«Սատանան աստվածային օրենքը ներկայացնում է որպես շահախնդության օրենք: Նա պնդում է, որ անհնար է ենթարկվել օրենքի պատվիրաններին: Մեր նախածնողների անկման և մեղքի բոլոր դառը հետևանքների մեղքը նա զցում է Արարչի վրա՝ մարդկանց դրդելով Աստծուն վերաբերվել որպես իրենց մեղքի, տառապանքների ու մահվան մեղավորի: Հիսուսը պետք է բացահայտեր այդ խարեւությունը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 24):

«Բայց մարդը չքողնվեց իր ընտրած մեղքի հետևանքների քմահաճույքին: Սատանայի դատավճռում կար փրկագննան հույսը... Այդ դատավճռը, որ արտասանվեց առաջին մարդկանց ներկայությանը, նրանց համար խոստում դարձավ: Նախքան փշերի ու տատասկների, ծանր աշխատանքի ու դաշնուրյունների մասին լսելը, որոնք դառնալու էին իրենց ճակատագիրը, Աղամն ու Եվան լսեցին խոսքեր, որոնք նրանց սրտերում հույս առաջացրին: Այն ամենը, ինչ նրանք կորցրել էին՝ ենթարկվելով սատանային, նրանց կվերադարձվի Քրիստոսի զոհի միջոցով» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 27):

## **Հարցեր քննարկման համար**

1. Դասարանի հետ քննարկեք երկուշաբթի օրվա դասի վերջին հարցերը: Մենք որտե՞ղ կարող ենք ուժ փնտրել փորձությունների դեմ պայքարելու համար:
2. Եվան, անտեսելով Աստծոն հստակ պատվերը, վստահեց իր զգացմունքներին: Ինչո՞ւ ենք մենք հաճախ նույն կերպ վարվում:
3. Խորհեք արարման պատմության և բնական դաժանությունը որպես Աստծոն նախասկզբնական ստեղծարար գործընթացի մի մասը ներկայացնող էվոլյուցիոն գաղափարների միջև եղած տարբերությունների մասին: Ինչո՞ւ ծագման մասին այդպիսի հակադիր հայցընթերը հնարավոր չէ միավորել՝ առանց աղավաղելու աստվածաշնչյան ճշմարտությունների հստակ իմաստը: Ինչո՞ւ է արարման հարցի ծիշտ ընթանումը կարևոր մեղանչումը ծիշտ հասկանալու համար:
4. Որոշ մշակույթներում ընդունված է սատանայի իրական գոյության գաղափարն ընկալել ոչ այլ կերպ, քան անհեթերություն, ուրիշները, ընդհակառակը, չափազանց շատ ուշադրություն են դարձնում չար ուժերին ու հոգիներին: Ի՞նչ կարելի է ասել ձեր մշակույթի մասին: Ի՞նչ միտումներ կան, և ինչպե՞ս դուք կարող եք սովորել ծիշտ հավասարակշռություն պահել այն գերբնական պայքարի իրական լինելու հարցում, որին մենք մասնակցում ենք:

## ԽԱՄԱԾ ԱՊԱԿՈՒ ՄԻԶՈՎ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Հոր 12.10, Ա Կորնթացի 6.19,20, Ծննդոց 3.17, Հովհաննիս 12.31, Ա Կորնթացի 1.18-21:

**Հիշելու համարը**

«Որովհելու այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծոն առաջ, որովհելու գրված է, թե իմաստուններին բռնում է իրենց իորրագիլության մեջ» (Ա Կորնթացի 3.19):

Աստվածաբան Ուիլյամ Փալեյը 1802 թվականին գրել է «Բնական աստվածաբանություն» գիրքը, որում ապացուցում էր, որ մարդիկ, դիտելով բնությունը, կարող են ավելի լավ հասկանալ Աստծո բնավորությունը: Նա շատ է գրել այն մասին, որ կենդանիների համար բնական է դրսնորել հոգատարություն և այլ դրական որակներ, որոնք դրել է Արարիչը: Հնարավոր է, որ Փալեյը շափազանցնում էր կենդանիների որոշ հատկանիշներ, քանի որ հաշվի չեր առել մեղանշման և մեղքի ազդեցությունը, քայլ, ընդհանուր առմանք, նրա փաստարկները երբեք չեն հերքվել, ինչ չի կարելի ասել բազում աղմկահարույց հակառակ հայտարարությունների մասին:

Ի տարբերություն Ուիլյամ Փալեյի՝ Չարլզ Դարվինը համարում էր, որ բնությունն ստեղծած Աստծուն չի կարելի լավ և բարի անվանել: Ապացուցելով իր տեսակետը՝ նա իրքի օրինակ բերում էր մակարույժին, որը ներսից ուսում է իր տիրոջը, և մկան հետ խաղացող կատվին: Նրա համար այդ օրինակները վկայությունն էին նրա, որ գոյություն չունի սիրող Արարիչ Աստված:

Թեև ակնհայտ է, որ Փալեյն ավելի մոտ էր ճշմարտությանը, քան Դարվինը, այս շաբաթ մենք կփորձենք տեսնել, թե ինչ է ասում Աստվածաշունչը բնության մեջ Աստծո մասին հայտնվածի և շիայտնվածի վերաբերյալ:

## **Աստծո Երկիրը**

Մի առակում պատմվում է, թե ինչպես մի գիտնական որոշեց, որ իրեն Աստված պետք չէ: Նա հայտարարեց, որ ինչպես Աստված, ինքն էլ կարող է մարդ ստեղծել: Աստված ասաց. «Ծա՛տ լավ, փորձի՛ր»: Գիտնականն սկսեց հողը թմբել, բայց Աստված կանգնեցրեց նրան. «Սպասի՛ր: Նախ ստեղծի՛ր քո հողը»:

Թեև սա միայն առակ է, եռոյթունը պարզ է. միայն Աստված կարող է արարել ոչ մի բանից: Աստված ստեղծել է տիեզերքի բոլոր նյութերը՝ ներառյալ մեր մոլորակը, այն ամենը, ինչ մենք ունենք, և հենց մեզ: Նա ամեն բանի օրինական Տիրակալն է:

**Ո՞րն է այն հիմնական լուրը, որ մեզ է հղվում բերված տեքստերից:** Այդ լուրն ի՞նչ է ասում այն մասին, թե ինչպես մենք պետք է վերաբերվենք աշխարհին, միմյանց և Աստծուն: Սաղմոս 24.1,2, Սաղմոս 50.10, Եսայիհ 43.1,2, Ա Կորնթացիս 6.19,20:

---

Մի հանրահայտ քրիստոնեական օրիներգ սկսվում է հետևյալ բառերով. «Սա իմ Հոր աշխարհն է»: Սա իսկապես մեր Հոր աշխարհն է, բանի որ Նա է ստեղծել այն: Սեփականության իրավունքի առավել օրինական պահանջ չկա, քան այն փաստը, որ դու ինչ-որ բանի ստեղծողուն ես: Աստված ստեղծել է տիեզերը, այդ պատճառով տիրապետում է նրան, երկնքին, երկրին և այն ամենին, ինչ կա նրանցում:

Աստված պարզապես չի տիրում աշխարհին, Նա նաև հավակնում է տիրապետության՝ երկրի վրա ապրող յուրաքանչյուր կենդանի էակի նկատմամբ: Ուրիշ ոչ որ կյանք արարելու հատկություն չունի: Աստված հանդիսանում է ողջ արարչագործության միակ Արարիչը և բացարձակ Իշխանը: Մեր գոյությունը լիովին կախված է Աստծոց: Մենք չենք կարող Աստծուն առաջարկել ոչինչ, բացի մեր հավատարնությունից. ամեն մնացյալն առանց այդ էլ պատկանում է Նրան:

Ավելին, մենք Աստծուն ենք պատկանում ոչ միայն նրան համար, որ Նա է արարել մեզ, այլ նաև, ինչն ավելի կարևոր է, որովհետև Նա փրկագնել է մեզ: Եվ չնայած Աստծո իրաշալի պարզեցն՝ մարդու կյանքն աղավաղված է մեղքով և ավարտվում է մահով՝ մի հեռանկար, որը կյանքը զրկում է ամեն իմաստից ու նպատակից: Կյանքն իր իսկական կերպարանքով այնքան էլ հիասքանչ չէ: Մեր միակ հույսը փրկա-

գնման զարմանալի խոստումն է, միակ բանը, ինչը կարող է կրկին ամեն բան «ուղղի» դարձնել: Այսպիսով, մենք Քրիստոսին ենք պատկանում արարման և փրկագնման իրավունքով:

## **Ընկած աշխարհը**

Սի բան անկասկած է. այն աշխարհը, որում մենք հիմա ապրում ենք, արմատապես տարբերվում է այն աշխարհից, որը դուրս էր եկել Տիրոջ ձեռքից արարման շաբաթվա ավարտին: Իհարկե, գեղեցկության և ձևավորման հզոր ապացույցներ գոյություն ունեն գրեթե ամենուր: Սակայն մենք մեղքից աղավաղված էակներ ենք, որ ապրում ենք մեղքից աղավաղված աշխարհում և փորձում ենք հասկանալ այն: Դեռևս նախքան ջրհեղեղը մեղքն իր կործանարար ազդեցությունն էր բողել աշխարհի վրա: «Նոյի օրերում երկրի վրա ընկած էր կրկնակի անեծք, որը դարձել էր Աղամի մեղքի և Կայենի գործած սպանության արդյունքը» (Ե. Ուայթ, Պայքար և արիություն, 32):

**Ի՞նչ կերպ է անհծովել երկրը և որո՞նք են այդ անեծքների հետևանքները: Ծննդոց 3.17, 4.11, 12, 5.29:** \_\_\_\_\_

---

Աղամի մեղքի պատճառով երկրի անեծքն ընկավ բուսական աշխարհի վրա, և արդյունքում սկսեցին փշոտ բույսեր ու մոլախոտեր աճել: Ողջ արարչագործությունն իր վրա կրում է մեղքի անեծքը: Վերը Ե. Ուայթից բերված մեջբերումը միանշանակորեն հաստատում է, որ Կայենի անեծքը չահմանափակվեց միայն նրանով, այլ ընկավ ողջ աշխարհի վրա:

Ցավոք, մեղքի անեծքները դրանով չափարտվեցին, քանի որ աշխարհի վրա ևս մեկ անեծք ընկավ, որը նրա վրա անջնջելի հետք բողեց: Դա, իհարկե, համաշխարհային ջրհեղեղն էր: «Եվ Եհովան անուշ հոտք հոտսուեց, և Եհովան ասաց իր սրտում. Այլևս չեմ անիծի երկիրը մարդու պատճառով, որովհետև մարդի սրտի խորհուրդը չար է իր մանկությունից, և այլևս չեմ զարկի բնավ ոչ մի կենդանու, ինչպես արի» (Ծննդոց 8.21):

Ջրհեղեղը խախտեց արարման ժամանակ Աստծո կողմից հաստատված ոռոգման համակարգը՝ երկրի որոշ վայրերից պոկելով հողը և տանելով այլ վայրեր: Անգամ հիմա անձրևները շարունակում են

լվանալ հողը՝ զրկելով այն բերրիությունից և անշեղորեն իջեցնելով բերքատվությունը։ Աստված Իր ողորմությամբ խոստացել է կրկին չանձեն երկիրը, բայց մեր ժառանգած հողը շատ է տարբերվում այն հարուստ, բերրի հողից, որն սկզբում ստեղծել էր Աստված։

**Կարդացե՛ք Հոռմեացիս 8.19-22-ը։ Այս համարներն ինչպե՞ս են Վերաբերում այն բանին, ինչ մենք տեսնում ենք այսօր։ Մենք ի՞նչ հույս կարող ենք քաղել դրանցից։**

## **Երեքարթի**

## **փեղորվարի 12**

### **Այս աշխարհի իշխանը**

**«Եվ Տերն ասաց սատանային. Որտեղից ես գալիս: Եվ սատանան պատասխանեց Տիրոջը և ասաց. Երկրի վրա շրջելուց և նրանում ման գալուց» (Յոթ 1.7):**

**«Արթուր Եղեք, հսկում արեք, որովհետև ձեր ոստիս թշնամին՝ սատանան, գոռող առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա» (Ա Պետրոս 5.8):**

Մենք գիտենք, որ աշխարհը Աստծուն է պատկանում արարման և փրկագննման իրավունքով։ Բայց մենք նաև չափուոք է մոռանանք մեծ պայքարի, սատանայի և նրա ցանկության մասին՝ Վերահսկել հնարավոր ամեն բան։ Թեև խաչի վրա նրա հանդեպ անվիճելի հաղթանակ է տարվել, նա հանգիստ ու լուս չի հեռանում։ Նրա զայրույթն ու կործանարար ուժը թեև զապկում են Աստծո կողմից, սակայն երբեք չարժե դրանք թերագնահատել։ Նաև չարժե մոռանալ, որ ինչ դժվարություններ ու ապրումներ էլ ծագեն, հիմնական պայքարը հանգում է միայն երկու անձերի՝ Քրիստոսի և սատանայի վրա։ Չեզոք տարածք չկա։ Ինչպես մենք գիտենք, շատերն այս աշխարհում զինվորագրվել են թշնամուն, անցել են նրա կողմը, այդ պատճառով զարմանալի չեն, որ մեր աշխարհն այսպես խեղված է։

**Կարդացե՛ք Հովհաննես 12.31-ը, 14.30-ը, 16.11-ը, Եփեսացիս 2.2-ը, 6.12-ը։ Թշնամու իրական լինելու և ուժի մասին ի՞նչ կարևոր ծշմարտություն է բովանդակվում այս համարներում։ \_\_\_\_\_**

---

Հորի գրքում կիսաբացվում է վարագույրը, որը թաքցնում է մեծ պայքարի իրական լինելը, և ցույց է տրվում, որ սատանան խսկապես ի վիճակի է հսկայական վճառ պատճառել մարդուն և բնության աշխար-

հին (տե՛ս Հոր 1, 2): Ինչ էլ ենթադրվի «այս աշխարհի իշխան» արտահայտության ներքո, ակնհայտ է, որ այս դերում սատանան առաջվանման հզոր կործանարար ազդեցություն է գործում երկրի վրա: Այս ծշմարտությունն օգնում է մեզ գիտակցել, որ բնաշխարհը դաժանաբար աղավաղվել է, և մեզ անհրաժեշտ է միանգամայն զգույշ լինել՝ բնությունից դասեր քաղելով Աստծոն մասին: Ի վերջո, տեսե՛ք, թե որքան սխալ էր աշխարհի վիճակը մեկնարանում Դարվին:

**Ձեր կյանքի ո՞ր ոլորտներում եք դուք ակներևաբար տեսնում սատանայի կործանարար ազդեցությունը: Ինչո՞ւ են խաչն ու Աստծոն Խոսքի խոստումները ձեզ հույս պարգևում:**

## **Չորեքշաբթի**

## **Մելոդիա 13**

### **Աշխարհի «իմաստությունը»**

Սենք՝ մարդիկս, անհավանական գիտելիք ու անհամար քանակության տեղեկատվություն ենք ստացել, հատկապես՝ վերջին երկու հարյուր տարվա ընթացքում: Սակայն գիտելիքն ու տեղեկատվությունը դեռևս իմաստություն չեն: Ի տարբերություն մեր նախորդների՝ մենք ստացել ենք նաև բնաշխարհի առավել լայն ըմբռնում: Բայց «առավել լայն ըմբռնումը» նոյնպես իմաստության հոմանիշ չէ:

**Կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.18-21-ը, 3.18-21-ը: Ինչպե՞ս են այդ համարներում ներկայացված և սրանից գրեթե երկու հազար տարի առաջ գրված մեծ ծշմարտությունները դրսկորվում մեր ժամանակներում և ժամանակակից համատեքսում:** \_\_\_\_\_

---

Մարդն իր իմաստակությունների մեջ հաճախ մարտահրավեր է նետում Աստծո Խոսքին: Խոսքը կվերաբերի Հիսուսի հարությանը, արարմանը թե ցանկացած այլ իրաշրի, մարդկային «իմաստությունը» (անգամ հաստատված գիտական «փաստերով») հիմարություն է դառնում, եթե հակասում է Տիրոջ Խոսքին:

Այսօր գիտության հիմնական միտումը, հատկապես՝ մարդու ծագման հարցերում, զուտ բնապաշտական հեռանկարն է: Թեև անցյալի շատ հանճարեղ գիտնականներ, այնպիսիք, ինչպես Նյուտոնը, Կեպլիերը, Գալիլեյը, հավատացյալ մարդիկ են եղել և համարել են, որ իրենց աշխատանքն օգնում է բացատրել Աստծո արարչագործությունը (Կեպլիերը մի անգամ գրել է. «Աստված իմ, ես մտածում եմ Ձո՞ւ մտքերով՝ Ձո՞ւ

հետքով»), այսօր գիտական աշխարհի որոշ ներկայացուցիչները ծաղրում են նման զգացմունքները:

Իսկ ուրիշները նոյնիսկ փորձում են Աստվածաշնչում նկարագրված հրաշքները բացատրել նրանով, թե իբր դրանք եղել են սովորական երևոյթներ, պարզապես այն ժամանակվա մարդիկ չեն իմացել քնության օրենքների մասին և ամեն բան ընկալել են որպես ի վերուստ միջամտություն: Օրինակ, գոյուրյուն ունեն բազում քնապաշտական տեսություններ, որոնք փորձում են Կարմիր ծովի բաժանումը ներկայացնել որպես աստվածային հրաշքի հետ ոչ մի առնչություն չունեցող մի բան: Սրանից մի բանի տարի առաջ մի «գիտնական» ենթադրեց, որ Մովսեսը քնրանյութեր էր ընդունում, այդ պատճառով գաղափարն այն մասին, որ Աստված նրան քարե տախտակների վրա տվել է Տասր պատվիրանները, լոկ նրա զգայախարպությունն է:

Որքան էլ անմիտ են թվում նման հայտարարությունները, եթե մարդը հերքում է Աստծուն և ամեն գերբնականը, նա ջանում է ամեն բան իր ձևով բացատրել: Այստեղից բխում է այն «անմտությունը», որի մասին այնքան հստակորեն մարգարեաբար գրել է Պողոսը:

## Հինգշաբթի

## Վեպրվարի 14

### Հավափի աչքերով

8-րդ սաղմոսը ամենասիրված սաղմոսներից մեկն է: Դավիթը՝ որպես հավատավոր մարդ, արարման մեջ տեսնում է Տիրոջ մեծությունն ու սերը: Ի՞նչ հատուկ դասեր քաղեց Դավիթն արարչագործությունից, ինչպես այդ մասին գրված է Սաղմոս 8-ում: Նաև հաշվի առնելով այն, ինչ մենք արարման մասին գիտենք այսօր Լուսնի, աստղերի և այլնի մասին, ի տարբերություն նրա, ինչ հայտնի էր այն ժամանակ, ինչո՞ւ պետք է Դավթի խոսքերը մեզ է՛լ ավելի զարմանալի թվան: \_\_\_\_\_

---

---

Սիայն վերջին հարյուր տարում մենք իսկապես սկսել ենք գիտակցել տիեզերական տարածության անվերջությունը և, հետևաբար, մեր ֆիզիկական ոչնչությունը նրա համեմատությամբ: Անհնար է պատկերացնել մի մարդու, ով, նման Դավթին, պատկերացում ունենար այն մասին, թե որքա՞ն մեծ է «երկինքը», եթե դա նրան բացված չլիներ ի

Վերուստ: Եթե նա երկյուղած դող էր զգում այն ժամանակ, որքա՞ն ավելի այդպիսի դող պետք է զգանք մենք՝ ինանալով, որ չնայած տիեզերքի անվերջությանը՝ այդ տիեզերքի Արարիշը՝ Աստված, մեզ սիրում է սիրով, որը մենք անգամ ի զորու չենք հասկանալ:

**Կարդացե՛ք Սաղմոս 19.1-3-ը: Դավիթն ի՞նչ էր տեսնում երկընքում:**

---

Ծատերը, նայելով աստղերին, գիտակցում են Աստծո մեծությունը և մարդկության ոչնչությունը, այդ պատճառով Նրան փառք են տալիս Իր հոգատարության համար: Ուրիշները կենտրոնացած են բնության մեջ եղած չարիքի խնդրի վրա և Աստծուն մեղադրում են նրանում, ինչն իրականում իրենց սեփական որոշումների ու սատանայի գործունեության արդյունքն է:

Հավատավոր մարդու համար արարչագործությունն իսկապես վկայում է Աստծո հոգատարության մասին, թեև մենք շրջապատված ենք սատանայի ստեղծած չարիքով: Սակայն նույնիսկ այնպիսի հզոր վկայությունը, ինչպիսին արարված աշխարհն է, ոչ լիակատար հայտնությունն է, հատկապես՝ եթե հաշվի առնենք մեղանշման և նրա բերած անեծքի հետևանքները:

**Կարդացե՛ք Յովիաննես 14.9-ը և մտածե՛ք խաչված Յիսուսի մասին: Ինչո՞ւ Գողգոթայի խաչը մեզ համար միշտ պետք է լինի Աստծոն էռության և բնավորության գլխավոր հայտնությունը:**

**Ուրբաթ**

**Մելորվարի 15**

## **Յեփագա ուսումնասիրության համար**

«Ես նախազգուշացվեցի (1890 թ.), որ այն ժամանակից սկսած, մենք մշտական վեճեր ենք ունենալու: Այսպես կոչված գիտությունն ու կրոնը հակադրվելու են միմյանց, քանի որ սահմանափակ մարդիկ չեն կարողանա հասկանալ Աստծոն ամենազորությունն ու մեծությունը: Ինձ ներկայացվեցին Սուրբ Գրքի այս խոսքերը. «Եվ հենց ձեզանից մարդիկ վեր կլենան, որ ծոյն բաներ կխստեն, որ աշակերտներին իրենց նույնից քաշեն» (Ե. Ուայթ, Բժշկական ծառայություն, 98):

### **Յարցեր քննարկման համար**

1. Խորհե՛ք երկրի «Եռակի անեծքի» մասին (Ե. Ուայթ, Յոգևոր պարզեցներ, հու. 3, 88) (անեծքը Արամի մեղանշման պատճառով, Կայենի մեղքի

հետևանքով և անդրջիեղեղյան աշխարհի մեղսավորության պատճառով): Այդ անեծքների ընդհանուր արդյունքը, բազմապատկված հազարամյակներով, նշանակում է, որ ժամանակակից աշխարհը կտրականապես տարբերվում է սկզբում Աստծո կողմից ստեղծված աշխարհից: Հետևաբար ինչո՞ւ մենք՝ ժամանակակից աշխարհի բնակչներս, պետք է գտույց լինենք առաջին աշխարհի վերաբերյալ մեր եղակացություններում:

2. Խորհեցեք գիտության կատարած աշխատանքի նասին, հատկապես՝ կյանքի ծագման ոլորտում: Գոյություն չունեն ցուցանակներ, որոնք կրացատրեին այն, ինչ մենք տեսնում ենք: Գիտությունը զուտ մարդկային հայտնագործություն է, իսկ մարդկային միտքը սահմանափակ հնարավորություններ ունի և հակված է հակադրվել Աստծոն հեղինակությանը: Ավելին, սատանայի ազդեցությունն ուժեղ գգացվում է բնության մեջ, այնպես որ շատ բան նրանից, ինչ մենք տեսնում ենք, անհամատելելի է Աստվածաշնչում աստվածային ինքնահայտնությանը: Այդ պատճառով շատ կարևոր է ավելի շատ վստահել Սուրբ Գրքին, քան գիտությանը, հատկապես՝ այնպիսի բացառիկ իրադարձությունների վերաբերյալ, ինչպիսին մեր աշխարհի արարումն է:
3. Մենք չենք հասկանում Սուրբ Գրքի ու այսպես կոչված գիտության միջև հակասությունների բոլոր տեսանկյունները, բայց Աստված անհամեմատ ավելի իմաստուն է, քան մենք, և մենք պետք է հասկանանք, որ արարումն իր մեջ կրում է անհամենատ ավելին, քան երբեք կարող է հայտնաբերել գիտությունը: Ինչո՞ւ մենք չպետք է զարմանանք որոշ անհամապատասխանություններից, որոնք առկա են Աստվածաշնչում նկարագրված գերբնական իրադարձությունների և գիտական մատերիալիստական մոտեցման միջև:
4. Եվս մեկ անգամ կարդացեք է. Ուայրից վերը բերված մեջբերումը: Մենք ի՞նչ կերպ ենք տեսնում այդ խոսքերի կատարումը մեր եկեղեցում: Մենք ինչպես կարող ենք հաղթահարել այդպիսի լուրջ վտանգները մեր առաքելության և լուրի համար՝ չգիշելով մեր դիրքերը արարմանը և Սուրբ Գրքին վերաբերող հարցերում: Մենք ինչպես կարող ենք այդ ընթացքում եկեղեցին որպես «անվտանգ վայր» պահել նրանց համար, ովքեր պայքարում են այդ դժվարին խնդիրների դեմ:
5. Կարդացեք Հոռոմեացիս 11.33-ը և Հոր 40.1,2-ը: Որքանո՞վ է մարդկային իմաստությունը հուսալի՝ Աստծո մտահղացումները հասկանալու փարձերում: Մենք ի՞նչ դիրքորոշում պետք է ունենանք այն դժվարությունների վերաբերյալ, որոնց բախվում ենք՝ ջանալով համաձայնեցնել գիտությունը և Սուրբ Գիրքը:

## ՅԻՍՈՒՍԸ ՅՈԳՈՒՄ Է ԵՎ ՍԱՏԱՐՈՒՄ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Երրայիցիս 1.3, Կողոսացիս 1.16, 17, Հոր 42, Մալրենս 5.45, 6.25-34,  
10.28:

### Հիշելու համարը

«Եվ իմ Ասպարագ լրացնի չեր ամեն կարուղությունն իր հարսկության  
չափով՝ փառքով քրիստոս Հիսուսում» (Փիլիպիցիս 4.19):

Աստված այնքան ճշգրիտ է ստեղծել ու պահում Իր արարածներին, որ ոմանց դա հանգեցրել է այն մտքին, թե տիեզերքը մի մեխանիզմ է, որին Աստված բոյլ է տվել գործել ինքնուրույն:

Սակայն ավելի լավ է տիեզերքը համեմատել ոչ թե մեխանիզմի, այլ երաժշտական գործիքի հետ, որն Աստված օգտագործում է՝ հնչեցնելու ցանկալի «մեղեղին»: Այսինքն՝ Նա մշտապես սատարում է Իր արարածներին:

Տիեզերքում ոչինչ գոյություն չունի Աստծուց անկախ: Նա է ստեղծել այն ամենը, ինչ արարված է: «Ամեն ինչ նրանով եղավ, և առանց նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհաննես 1.3): Ավելին, Նա պահում է Իր ստեղծած ամեն բան: Ապշեցուցիչ է, որ Տիեզերքն ստեղծողն ու պահողը խաչվել է հանուն մեզ:

«Պողոս առաքյալը Սուրբ Հոգու ազդեցության ներքո քրիստոնության մասին գրում է, որ «ամեն բաները նրանով և նրա համար ստեղծվեցին: Եվ նա ամենից առաջ է, և ամեն բան նրանով է հաստատ» (Կողոսացիս 1.16, 17): Զեռքերը, որոնք աշխարհները պահում են կարգավորված շարժումը և անդադրում գործունեությունը Աստծո ողջ տիեզերքում, այդ ձեռքերը խաչին գամվեցին հանուն մեզ» (Ե. Ուայր, Դաստիարակություն, 132):

## Ասդված սաժարում Է

**Կարդացե՛ք Եբրայեցիս 1.3-ը և Կողոսացիս 1.16,17-ը: Ո՞րն է Հիսուսի դերը տիեզերքում կյանքի պահպանման հարցում:** \_\_\_\_\_

---

Իր գորությամբ Հիսուսը շարունակում է պահպանել տիեզերքի գոյությունը: Տիեզերքն ինքնուրույն չէ, նրա գոյությունը կախված է աստվածային կամքի մշտական դրսնորումից: Այդ փաստը հերքում է դեիզմի տեսությունն այն մասին, որ Աստված ստեղծել է աշխարհն ու թռել, որ այն զարգանա ինքնուրույն, առանց Արարչի որևէ հետազա միջամտության: Աստվածաշունչը բացառում է նման տեսությունները:

Աստված նաև չի գտնվում արարչագործության ներսում՝ մշտապես ստեղծելով այն, ինչպես պնդում են պանթեիզմի (Աստված և տիեզերքը միևնույնն են) կամ պանենթեիզմի (Աստված գտնվում է տիեզերքում, ինչպես եթե այն լիներ Նրա սեփական մարմինը) կեղծ տեսությունները: Աստված ոչ մի կերպ կախված չէ տիեզերքից: Նա եղել և շարունակում է մեռալ անկախ դրանից: Տիեզերքը կախված է Աստծոց, Աստված կախված չէ տիեզերքից:

**Կարդացե՛ք Ա Կորնթացիս 8.6-ը և Գործը առաքելոց 17.28-ը:  
Պողոսն ինչպե՞ս է նկարագրում մեր փոխադարձ կապը Հիսուսի հետ:** \_\_\_\_\_

Ամեն ակնքարք, օրեցօր մենք կախված ենք Աստծո սատարող գորությունից: Նրա սիրո շնորհիվ մենք շարունակում ենք գոյություն ունենալ, աշխատել, շփվել: Դա հատկապես ակնհայտ է նրանց կյանքում, ովքեր իրենց նվիրել են Աստծուն, ովքեր ապրում են, ինչպես ասում է Պողոսը, «Քրիստոնում» (Բ Կորնթացիս 5.17, Եփեսացիս 2.10: *Ուշադրություն դարձրեք արարմանը հղումներին այդ համարներուն*): Սակայն փրկությունը մերժողները նույնպես կախված են իրենց կյանք պարզելող սատարող ուժից: Դամիելլ հստակ կերպով ընդգծեց այդ միտքը, երբ Բաղդասար բազավորին ասաց. «Աստծուն, որի ձեռքին է քո շունչը, և որինն են քո բոլոր ճանապարհները, չփառավորեցիր» (Դանիել 5.23):

**Այս ամենն ի նկատի ունենալով՝ մենք ինչպե՞ս ենք հասկանում ազատ կամքի և ընտրության ազատության իրական լինելը: Մեր**

գոյության այդ բաղադրիչներն ինչո՞ւ են այդքան կարևոր մեր հավատի համար:

## **Առարգածեռն Պարգևողը**

Ծննդոց 1.29,30 տեքստերը ցույց են տալիս, որ ստեղծելով կենդանի էակներին, Աստված հոգաց նրանց սննդի մասին: Խոտը, մրգերը, սերմերը սնունդ էին մարդկանց և կենդանիների համար: Գոյություն չունին զիշատչությունը կամ պայքարը հանուն ռեսուրսների: Առարգածեռն Պարգևողը բավականաչափ սնունդ էր ստեղծել յուրաքանչյուրի համար, որպեսզի բոլորը կարողանային սնվել առանց բռնության դիմելու անհրաժեշտության:

Ինչպիսի՝ հակադրություն էվոլյուցիայի տեսության առաջարկած գոյության մոդելի հետ, որը պնդում է. մարդկային կյանքը և առհասարակող գոյություն ունեցող կյանքը առկա է բացառապես զիշատչության և առավել հարմարվածների գոյատևման բռնի գործընթացի շնորհիվ: Ծննդոց գրքի առաջին գլուխներում ոչ մի նման բան չկա: Հակառակը, դրանք բացահայտում են մեզ այն աշխարհը, որն սկզբում եղել է դրախտ: Աստվածաշնչում այսպիսի խոսքեր են գրված. «Եվ Աստված տեսավ բոլորն, ինչ որ արել էր, և ահա շատ բարի էր» (Ծննդոց 1.31):

**Կարդացե՛ք Ծննդոց 2.8,9-ը: Այս հատվածում ի՞նչ է ասվում Ադամի ու Եվայի կարիքների համար Աստծո հոգածության մասին:**

---

Մենք արդեն ասել ենք, որ Աստված սնունդ էր ստեղծել Իր բոլոր արարածների, այդ թվում՝ նաև մարդու համար: Չարունակությունը կարդալով՝ մենք տեսնում ենք, թե ինչպես է Արարիչն անում հաջորդ քայլը: Նա ոչ միայն սնունդ տվեց ամեն կենդանի արարածի, այլ նաև Ադամի ու Եվայի համար պատրաստեց հատուկ այգի, որտեղ աճում էին գեղեցիկ ծառեր, որոնք համեղ պտուղներ էին տալիս (լրեն Ծննդոց 2.9): Այդ հիաքանչ այգին, որում կար բազմազան սնունդ, վկայում էր Աստծո անսահման առատածեռնության, սիրո ու շնորհի մասին: Դա շնորհի պարզ էր. չէ՞ որ Ադամն ու Եվան ոչ մի այնպիսի բան չէին արել, որպեսզի վաստակեին այն, քայլ անհատույց հարուստ պարզ ստացան:

Ինչպես ասվել է նախորդ դասին, մենք շատ հեռու ենք գնացել սկզբնական արարչագործությունից: Մեր աշխարհը շատ խիստ վնաս-

ված է: Փաստորեն, երկրի վրա անվնաս մնացած որևէ բան չկա: Բայց նույնիսկ այդ ողջ անկատարության մեջ առկա է Աստծո սիրո հզոր վկայությունը:

«Բնությունը ուժ է, սակայն բնության Աստված սահմանափակված չէ իր հզորության մեջ: Նրա գործերը վկայում են Նրա բնավորության մասին: Նրանք, ովքեր Աստծո մասին դատում են Նրա գործերով, ոչ թե նշանավոր մարդկանց ենթադրություններով, Նրա ներկայությունը կտեսնեն ամեն ինչում» (Ե. Ուայթ, Ժամանակի նշանները, 1884 թ. մարտի 13): Նայե՛ք բնությանը: Մենք ինչպե՞ս ենք տեսնում «Նրա ներկայությունը ամեն ինչում»:

## **Բնական չարիքը**

Ամենալուրջ հարցերից մեկը, որին բախվում են սիրող Աստծուն հավատացողները, չարի խնդիրն է ոչ թե մարդկանց կողմից դրսևրվող չարի, այլ այսպես կոչված բնական չարիքի խնդիրը: Նկատի են առնը-վում բնական աղետները (ջրհեղեղները, փոքրիկները, երաշտները, երկրաշարժերը և այլն), որոնք շատ ցավ ու տառապանք են պատճառում ոչ միայն մարդկանց, այլ նաև կենդանիներին:

Ինչպե՞ս հասկանանք այդ ամենը: Ի վերջո, եթե Աստված իշխում է ստեղծագործությանը, ինչը՝ են այդպիսի բաներ տեղի ունենում:

Աստվածաշնչյան ամենահին գրքերից մեկը՝ Հորի գիրքը, բացահայտում է, թե ինչպես այդ (և այլ) հարցերը Հորի համար ցավազին իրականություն դարձան (տե՛ս դաս 4):

**Կարդացե՛ք Յոթ 42-ը: Ի՞նչ հարցերի է պատասխանում այդ գլուխը: Ի՞նչ հարցեր են մնում անպատասխան:** \_\_\_\_\_

Հորի գիրքը կարևոր ճշմարտություններ է բացահայտում մեծ պայքարի մասին (տե՛ս նաև Հայտնություն 12.12), որոնք օգնում են մեզ՝ հիմք ձևավորել չարի ծագման ըմբռնման համար: Սակայն մեծ պայքարի սցենարը չի բացատրում չարի ի հայտ գալու յուրաքանչյուր դեպք: Փաստորեն, եթե չարը հնարավոր լիներ բացատրել, հնարավոր կլիներ նաև արդարացնել այն, իսկ մենք երբեք չենք կարողանաւ անել դա: Մեծ պայքարը կարող է լուսաբանել չարի խնդիրի շատ կողմեր, բայց դա միշտ չէ, որ պատասխանում է չարի դրսևրման յուրաքանչյուր առանձին դեպքի մասին հարցերին:

Հորբ չէր հասկանում, չենք հասկանում և մենք, երբ տեսնում ենք այդպիսի աղետալի կորուստներ: Թեև Աստված խոսում էր Հորի հետ, Նա պատասխաններ չտվեց նրա հարցերին, չբացարձի տեղի ունեցածի պատճառը, Նա պարզապես հիշեցրեց Հորին՝ շատ բաներ նա ի վիճակի չէ ըմբռնել, նա պետք է վստահի Աստծուն, ինչ և Հորը արեց: Մենք նման փորձառություն ենք ապրում, երբ պատասխան չենք ստանում մեր հարցերին: Բայց Հորի պատմությունն իրականում օգնում է մեզ՝ հասկանալ չարի բնույթը և ցույց է տալիս, որ Աստված գիտի մեր ապրումների մասին:

Կարդացե՛ք Ե. Ուայթից մեջբերումը դասի սկզբում: Այդ մեջբերումն ինչպե՞ս է օգնում մեզ՝ ավելի լավ հասկանալ չարի հարցը, չէ՞ որ մեզ հայտնի է, որ Աստված նույնպես դաժան տառապանքներ կրեց դրա պատճառով:

## Չորեքշաբթի

## Վեպրվարի 20

### **Կառավարելով աղավաղված արարչագործությունը**

Կարդացե՛ք Մատթեոս 5.45-ը և Սաղմոս 65.9,10-ը: Ինչպե՞ս է գործում Աստված՝ սատարելու համար իր արարածներին: Դա ի՞նչ է ասում մեզ արարված աշխարհի հարցում Աստծո շահագործվածության մասին:

Սեզ ծանոթ են արևի լույսն ու անձրևը, և գիտնականները նկարագրում են այդ երևույթներին ուղեկցող գործընթացները: Բայց գիտությունը չի կարող բացատրել ամեն բան: Դրա հետևում կանգնած է Աստված, ով անդադար հոգում է իր արարածների կարիքները: Մենք կարող ենք չհասկանալ Նրա ճանապարհները, սակայն գիտենք, որ Նա վերահսկում է ամեն բան: Ինչպես վարժ երաժիշտը, նվագելով իր գործիքը, այնքան իհասքան հնչյուններ է արտաքերում, որ մեր ուշադրությունը սևեռված է ավելի շատ երաժշտությանը, քան հենց երաժշտին, այդպես էլ Աստված արարչագործությունը կառավարում է այնպես, որ մենք հաճախ տեսնում ենք բուն կարգուկանոնը և զարմանում ենք արարչագործության վեհությամբ: Միևնույն ժամանակ, մենք կարող ենք չգիտակցել, որ այդ ամենի հետևում կանգնած է Աստված, ով կառավարում է Տիեզերքը իր կամքով, որպեսզի ամեն բան գործի ներդաշնակ՝ իրեն սիրող ների համար ի բարին (Հոռմեացիս 8.28):

**Ի՞նչ ընդհանուր երևույթ է հիշատակվում հետևյալ տեքստերում՝ Ծննդոց 8.1, Ելից 10.13, Թվոց 11.31:**

Քամին սովորական բնական երևույթ է, և մենք, ընդհանուր առմամբ, հասկանում ենք, թե ինչից է այն առաջանում: Բայց այդ տեքստերում քամին ի հայտ է գալիս հատուկ հանգամանքների կապակցությամբ: Մենք կարող ենք դրանք բնութագրել որպես «կանխորոշված քամիներ»: Դրանք ի հայտ են գալիս հատուկ ժամանակ և հատուկ վայրերում՝ հատուկ նպատակներով: Թեև դրանք կարող են բնական թվականում ունենալ ամստեսանելի Պատճառ, որն իր նպատակներն իրականացնում է Իր կամքին համապատասխան՝ օգտագործելով Նրա նպատակների իրականացման համար ստեղծված բնությունը:

Դ. Թագավորաց 20.9-11 տեքստերում մենք համդիպում ենք Աստվածաշնչի ամենաարտաստվոր իրաշըներից մեկի նկարագրությանը: Արևի և երկրի փոխազդեցությունը և դրանով պայմանավորված՝ օրվա երկարությունը, թվում է, բնության մեջ ամենակայուն երևույթներն են դիտարկումների ողջ ժամանակահատվածում: Պատկերացրեք ներկայիս գիտական հասարակության արձագանքը, եթե նման իրադարձություն տեղի ունենար մեր օրերում: Սակայն մենք պետք է հարցնենք. «Եհովայի համար դժվար բան կա՞ արդյոք» (Ծննդոց 18.14): Այդ իրաշընը, ինչպես և շատ ուրիշները, վկայում են, որ ոչ ամեն ինչ է մեզ հայտնի, և ամենին էլ ոչ ամեն բան ենք մենք հասկանում արարչագործության և տիեզերքում Աստծո գործերի մասին: Այդ պատճառով էլ այդքան կարևոր է անձամբ ճանաչել Աստծուն և անձնական փորձառությամբ զգալ Նրա սիրո իրական լինելը: Այդպես մենք սովորում ենք վստահել Նրան՝ շնայելով այն բանին, ինչ մեզ անհասկանալի է:

## **Հինգամբթի**

## **փեղորվարի 21**

### **Յոգալով խեղված արարչագործության մասին**

**«Մտիկ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ոչ էլ հընձնում, և ոչ՝ ամբարների մեջ ժողովում, և ծեր երկնավոր հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք նրանցից ավելի լավ եք» (Սատրեռու 6.26):**

Նույնիսկ այն բանից հետո, երբ Աղամն ու Եվլանչեցին և արդին չեն կարող գտնվել Եղեմում, Աստված հոգաց նրանց ամենօրյա կարիքները: Մեղքն իր հետ նոր կարիք բերեց՝ հազուստի անհրա-

**ԺԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ:** Աղամն ու Եվան փորձում էին իրենց հսմար հազուստ պատրաստել, սակայն թգենու տերևները վաս հումք էին դրա համար: Ինչ-որ ավելի լավ բան էր անհրաժեշտ, և Աստված նրանց կաշվե հազուստ հազցրեց: (Մենք այդ հազուստի իմաստի մասին կխորհենք մեկ այլ դասում): Գլխավորն այն է, որ Աստված հոգաց նրանց կարիքները՝ չնայելով այն բանին, որ նրանք մեղանչել էին: Սա Աստծոն շնորհի ևս մենք օրինակ է, ով մեզ պարզեցում է ամեն անհրաժեշտը, թեև մենք արժանի չենք դրան:

**Կարդացե՛ք Մատթեոս 6.25-34-ը:** Ի՞նչ կարևոր լուր է հաղորդում Աստված այդ համարներում: Մենք ինչպես կարող ենք հասկանալ դա՝ այն ողբերգությունների ու փորձությունների համատեքստում, որոնք մեր կյանքի անբաժան մասն են:

Այս խոսքերը լի են միսիթարությամբ, և մենք պետք է դրանց հուսանք ամբողջ սրտով, հոգով ու մտքով, հատկապես՝ տառապանքների, կորուստների ու կարիքի ժամանակ: Հխուսը մահացել է մեր վիոլիստին, ոչ թե շուշանների ու թռչունների: Մենք կարող ենք վստահ լինել մեր հանդեպ Նրա սիրուն՝ շնայելով այն հանգամանքներին, որոնք երբեմն, ինչպես մենք ամենք գիտենք, լինում են սարսափելի: Ամենուրեք մենք տեսնում ենք քաղց, երաշտ, ջրհեղեղներ, համաճարակներ ու մահ, և քրիստոնյաները նույնպես ապահովագրված չեն այդ ողբերգություններից:

Աստված Իր ժողովրդին շքեղ կյանք չի խոստացել, որում չի լինի տառապանք, բայց Նա խոստացել է հոգ տանել մեր կարիքների մասին և ամրացնել մեզ, որպեսզի մենք կարողանանք դիմակայել փորձություններին: Մենք չենք կարող պարզապես մոռանալ մեծ պայքարի իրողության և այն մասին, որ գտնվում ենք ընկած աշխարհում:

**Կարդացե՛ք Մատթեոս 10.28-ը:** Այդ համարը, ինչպես նաև այսօրվա համար առաջարկված մյուս համարները ինչպես են օգնում մեզ՝ գլուխ հանել կյանքի դաժան իրողությունից:

## Ուրբաթ

## Վեպրվարի 22

### **ՅԵՎԱԳԱ ՈԼՍՈՒՄՆԱՍԻՐՈՎԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

«Եվ, այնուամենայնիվ, գիտնականները ենթադրում են, թե իրենք ի վիճակի են հասկանալ Աստծո իմաստությունն այն բանում, ինչ Նա արարել է կամ կարող էր արարել. Աստծուն Նրա խև օրենքներով

սահմանափակելու գաղափարը լայն տարածում է գտել: Մարդիկ կա՞մ հերքու են Աստծո գոյությունը, կա՞մ համառորեն իրաժարվում են ինչ-որ բան իմանալ Նրա մասին, կա՞մ էլ ցանկանում են բացատրել ամեն բան՝ անգամ մարդկային սրտի վրա Սուրբ Հոգու ազդեցությունը: Նրանք ոչ երկյուղածություն ունեն Նրա անունից, ոչ վախ՝ Նրա գորությունից: Նրանք չեն հավատում գերբնականին, չեն հասկանում ոչ Աստծո օրենքները, ոչ Նրա անվերջ զորությունը, որ զործում է իրենց մեջ՝ Նրա կամքի կատարման համար: Սովորաբար «բնության օրենք» հասկացությունը ենթադրում է այդ օրենքներից նրանք, որոնք մարդիկ ի վիճակի են եղել հայտնազործել, և որոնք կառավարում են ֆիզիկական աշխարհը: Բայց որքան սահմանափակ են նրանց գիտելիքները, և որքան անընդգրկելի է այն ոլորտը, որտեղ Արարիչը կարող է զործել իր սեփական օրենքներին համաձայն՝ շատ հեռու գնալով մահկանացու էակների ըմբռնման ու բանականության շրջանակներից» (Ե. Ուայր, Նահապետներ և մարգարեներ, 114):

Կարդացեք նաև Ե. Ուայր, Վկայություններ եկեղեցու համար, հտ. 8, 259-261, «Բնության օրենքները» գլուխը:

### **Հարցեր քննարկման համար**

1. Ուշադիր կարդացեք վերը բերված մեջբերումը Ե. Ուայրից: Ինչի՞ մասին է այստեղ խոսվում: Ժամանակակից գիտնականները հենց այդպիսի՞ տեսակետներ ունեն, որոնց մասին խոսում է Մարգարեական Հոգին:
2. Ժամանակակից գիտությունը նշանակալիորեն առաջ է շարժվել բացատրելու հնարավորության մեջ, թե ինչու են տեղի ունենում կան տեղի չեն ունենում այս կամ այն երևույթները: Խնդիրը ոչ թե «բնական միջոցներն» ու «բնության օրենքներն» են, այլ գաղափարն այն մասին, որ այդ միջոցների ու օրենքների հետևում ոչ ոք չկա, և առհասարակ, ոչ մի գերբնական ուժ էլ գորություն չունի: Ի՞նչն է սխալ այդ տեսակետում: Ինչո՞ւ է այն անմիտ (չէ՞ որ այդ օրենքները նույնպես ինչ-որ մեկը պետք է սահմաներ), և չի համապատասխանում Աստվածաշնչի հիմնարար ուսմունքին:
3. Ինչո՞ւ է երաժշտական գործիքի կերպարը ի զորու տալ արարչագործության հետ Աստծո փոխարաբերությունների առավել ճշգրիտ պատկերը, քան այդ կարող է անել մեխանիզմի կերպարը:
4. Սուրբ Գրքից Է՞լ ինչ օրինակներ դուք կարող եք բերել, երբ Աստված հասուկ իրադարձություններ եր կյանքի կոչում, որոնք մենք կարող ենք ընկալել որպես «բնության ուժեր»: Տե՛ս, օրինակ, Գ Թագավորաց 19.11.12-ը:

## ԸՆՏԱՆԻՔԸ ԵՂԵՄԻՑ ԵԿԱԾ ՊԱՐԳԵՎ Է

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 2.18-25, Մարկոս 10.7-9, Եփեսացիս 5.22-25, Մալքրեոս 5.27-30, Բ Կորնիացիս 3.18:

**Հիշելու համարը**

«Եվ Եփովա Աստվածն ասաց. Լավ չէ, որ մարդը մենակ լինի. Արա մասն մի օգնական չինեմ իրեն հարմար» (Ծննդոց 2.8):

Մոռե՛ք երջանիկ ամուսնության և սիրող ընտանիքի օրինությունների մասին: Որքա՞ն երջանիկ են նման փորձառություն ունեցող մարդիկ: Յավոք, շատ մարդկանց համար ամուսնությունը դարձել է ավելի շատ ցավ ու ցասում, քան ուրախություն ու խաղաղությունը բերող փորձառություն: Սակայն այն դրա համար չէ սահմանվել, այդպես չանուք է լիներ: Այդքան շատ ամուսնությունների ողբախի վիճակը ակներևորեն ու անհերքելիորեն հաստատում է այն ետքնարացի մասին, որ մարդկությանը պատճառել է մեղքը:

«Աստված տոնում էր առաջին ամուսնությունը: Այդպիսով, ամուսնական օջախը նոյնապես ստեղծվել է տիեզերքի Արարչի կողմից: «Ամուսնությունը ամեն կողմանն պատվական է [բող լինի]» (Եբրայեցիս 13.4): Այն ամենաառաջին պարզեներից մեն է, որ Աստված տվել է մարդկանց: Ամուսնությունը եղել է այն երկու սահմանումներից մեկը, որ Ադամը դրախտի դարպաններից դուրս տարավ անկումից հետո: Եթք ամուսնության մեջ դեկապարվում են աստվածային սկզբունքներով և հնագանդվում են դրանց, այդ ժամանակ այն օրինություն է դառնում, օգնում է պահպանել բարոյական մաքրությունը և մարդկային ցեղի երջանկությունը: Այդպիսի ամուսնությունը բավարարում է հասարակական պահանջները և մարդուն վեհացնում է ֆիզիկապես, մտավորապես ու բարոյապես» (Ե. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 46):

Որքա՞ն իրաշախի իդեալ է: Այս շաբաթվա դասը դիտարկում է երջանիկ ամուսնության որոշ սկզբունքներ:

## «Լավ չե»

Աստված մեր աշխարհն ստեղծել է ոչնչից՝ Իր խոսքի գերբնական գորությամբ: Արարման մասին պատումի մեջ ամեն փուլը զնահատվում է «բարի է» բառերով: Ամեն ինչի ավարտին հնչում է «շատ բարի է» արտահայտությունը (Ծննդոց 1.31):

**Սակայն այդ ողջ իրաշագեղության մեջ կար ինչ-որ բան, որի մասին ասված է՝ «լավ չե»:** Կարդացե՛ք Ծննդոց 2.18-ը: Ի՞նչն էր, որ «լավ չեր», և ինչո՞ւ: Ի՞նչ է մեզ ասում այս տեքստը: \_\_\_\_\_

---

Աստված արարման բոլոր փուլերը՝ մինչև Ադամի արարումը, զնահատում էր «բարի է» բառերով: Այդ պահին Ադամը միակ մարդն էր: Թեև նա ստեղծվել էր Աստծո պատկերով, սակայն միայնակ չէր կարող լիովին արտացոլել Աստծո պատկերը, քանի որ Աստված գոյություն ունի Աստվածության մյուս Անձերի հետ փոխհարաբերության մեջ: Աստված Իր մեջ ներառում է Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Այդ պատճառով Ադամն իր նմանի կարիք ուներ, ում հետ կկարողանար կառուցել փոխադարձ սիրով և համագործակությամբ լի փոխհարաբերություններ, որոնք կարտացողին Աստվածության ներսում առկա սիրով լի փոխհարաբերությունները:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.19-21-ը:** Ո՞ր գործողությունից հետո է Աստված քուն բերում Ադամի վրա և հետո կնոջն ստեղծում նրա մարմնից: Նախորդ գործողությունն ինչպե՞ս կարող է Ադամի համար կապված լինել կնոջ ստեղծման հետ: \_\_\_\_\_

---

---

Ակնհայտորեն, պատասխանը կարելի է գտնել 20-րդ համարի վերջին դարձվածքի մեջ: Անուն տալով կենդանիներին՝ Ադամը պետք է նկատեր, որ ի տարբերություն իրեն՝ միակ մարդու, նրանք բոլորն ունեն զույգեր, որոնք բաղկացած են արական և իգական սեռերից: Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված հենց սկզբից մտադիր էր Ադամին կին տալ: Հնարավոր է՝ Տերը ցանկանում էր, որ Ադամն զգա այդ զերմ ցանկությունը, զգացողությունը, որ իր կյանքում ինչ-որ բան պակասում է, որպեսզի ավելի ուշ ըստ արժանվույն զնահատեր այն պարզել, որ Տերը մտադիր էր տալ նրան՝ կնոջը:

Ուշադրություն դարձրեք ողջ արարչագործությանը տրված «բարի է» գնահատականի և Աղամի միայնակության վերաբերյալ արված «լավ չէ» հայտարարության միջև եղած հակասությանը: Ի՞նչ է դա մեզ ասում փոխհարաբերությունների արժեքավորության մասին: Դուք ի՞նչ կարող եք անել՝ ձեզ համար կարևոր փոխհարաբերությունների ամրապնդմանը նպաստելու համար:

## **Երկուշաբթի**

## **Վեպրվարի 25**

### **Աղամի օգնականը**

Ծննդոց 2.20 տեքստը, որտեղ Աղամն անուններ է տալիս կենդանիներին, օգնում է տեսնել, թե մարդը որքան է տարբերվում մյուս երկրային արարածներից: Աղամին նման ոչ մի կենդանի չկար: Անգամ կապիկների մեջ շտոնվեց մարդուն նմանը, որովհետև Աղամը կապիկի նման չէր: Մեզ համար կարևոր է իշխել այդ մասին, քանի որ մեր հասարակության մեջ շատերը հավատում են, որ մարդիկ պարզապես «առաջադիմած» կապիկներ են: Մենք կապիկներ չենք, և կապիկը ոչ մի կերպ չէր կարող դառնալ Աղամի օգնականը, ինչպես և այսօր նա չի կարող մեզ համար փոխարինել մարդու հետ փոխհարաբերություններին:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.21, 22-ը: Աստված ինչպե՞ս օգնական արարեց Աղամի համար: Ինչո՞ւ դա նշանակություն ունի:** \_\_\_\_\_

---

Նման նրան, ինչպես Աստված անձամբ կերտեց Աղամի մարմինը հողի փոշոց, այնպես էլ Նա անձամբ կերտեց Եվայի մարմինը՝ դրա համար վերցնելով Աղամի կողոսկրերից մեկը: Աստծուն Եվայի ստեղծման համար անհրաժեշտ չէր Աղամի կողոսկրը: Նա կարող էր կնոջն ստեղծել ճիշտ այնպես, ինչպես և Աղամին, կամ էլ մի խոսքով գոյության կոչել նրան: Բայց Աստված պատճառ ուներ՝ Եվային ստեղծել հենց Աղամի կողոսկրից: Եթե տղամարդն ու կինը ստեղծվեին միանգամայն առանձին, դա կարող էր նշանակել, որ Էռթյամբ նրանք միմյանցից բացարձակապես անկախ էակներ են: Բայց երկու մարդկանց մեջ մարմնի ընդհանուր մասը ցույց է տալիս, որ երկուսը միավորվել էին՝ մեկ մարմին դառնալու համար:

Ստեղծելով Եվային՝ Աստված նրան քերեց Աղամի մոտ, որպեսզի կինը դառնար նրա օգնականը (*համար 18*): Եվան ստեղծվել էր Աղամից (*համար 22*) և պարզնվեց նրան (*համար 22*): Գործընթացը, որի միջո-

ցով Աստված ստեղծեց Եվային, հստակ կերպով վկայում է, որ Նա կարող էր Աղամին պարզել ցանկացած ընկերոջ, ում կարիքը նա ուներ: Այս հանգամանքը կարևոր է դառնում ավելի ուշ, եթե Աղամը բախվում է փորձությանը՝ Եվայի հետ մեկտեղ համտեսե՞լ արգելված պտուղը, թե՝ ճգնաժամային իրավիճակում վստահել Աստծուն: Աղամը Աստծուն վստահելու համար բավականաչափ հիմքեր ուներ, և դա էլ ավելի ծանրացրեց նրա մեղքը:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.23-ը: Աղամն ի՞նչ ասաց Եվային: \_\_\_\_\_**

---

Տեսնելով Եվային՝ Աղամն այնքան հուզվեց, որ այդ պահին սկսեց բանաստեղծորեն խոսել: Դա Աստվածաշնչի առաջին բանաստեղծությունն է, այն արտահայտում է Աղամի վերաբերմունքն իր կնոջ հանդեպ և նրանց փոխհարաբերությունների սերտությունը: Կինը պետք է հավասար լիներ ամուսնուն՝ ևս մեկ տեսանկյուն, որը խախտվեց մեղքի պատճառով:

## **Երեքաբթի**

## **Կիելրվարի 26**

### **Իրեալական ամուսնությունը**

Գրող Վիլյամ Ֆոլքները մի անգամ ամուսնությունն անվանել է «սխալմունք» և գրել, որ «դրանում խաղաղությունը պահպանելու միակ միջոցը... մնալ առաջին և միակ կնոջ հետ, բայց նրանից հնարավորինս հեռու մնալ՝ հուսալով, որ դու նրանից ավելի երկար կապրես»: Սա մի ցավալի մեկնարանություն է, որը բնորոշում է շատ ամուսնությունների վիճակը:

**Կարդացե՛ք Մարկոս 10.7-9-ը: Աստվածաշնչյան ո՞ր տեքստերն էր մեջբերում Հիսուսը այդ հատվածում: Լավ ամուսնության ի՞նչ բնութագիր են պարունակում Հիսուսի խոսքերը: \_\_\_\_\_**

---

Սեփական ընտանիք ստեղծելու նպատակով ծնողներին քողնելու առավելություններն այնքան լավ հայտնի են, որ հազիվ թե հարկ լինի դրանք հիշատակել: Ամուսինների հարազատների հետ խնդիրները հանգեցնում են ամուսնական տարածայնությունների: Դեպի երջանիկ ընտանիք տանող առաջին քայլերից մեկը ամուսինների անկախության նկատմամբ հարգանքն է, որն արտահայտվում է ծնողներից առանձին

ապրելու ծգտման մեջ, եթե միայն այդպիսի հնարավորություն կա: Այն դեպքերում, եթե դա հնարավոր չէ, միևնույն է, անհրաժեշտ է հարզանք դրսորեկ ամուսնության մասնավոր, ինտիմ տեսանկյան հանդեպ:

Սիարանությունը լավ ամուսնության արտահայտություններից մեկն է: Սիարանությունը չի նշանակում, թե զուգընկերներից յուրաքանչյուրը չպետք է օգտագործի իր բանականությունը, նրանք պետք է միասնական լինեն միմյանց և իրենց միության համար լավագույնն անելու նպատակի մեջ:

Հիսուսը նաև ընդգծում էր ամուսնության անխախտելիությունը: Ամուսնությունը չի ենթադրում պատահական փոխարարերություններ, որոնք ցանկության դեպքում հնարավոր է պահպանել կամ խօսել: Դա պարտավորություն է ողջ կյանքի համար: Մարդիկ, ովքեր իրենց պատրաստ չեն զգում նաև պարտավորության համար, պետք է այդ քայլը հետաձգեն այնքան, մինչև որ պատրաստ կլինեն:

**Կարդացե՛ք Եփեսացիս 5.22-25-ը: Այդ համարներն ինչպե՞ս են բացահայտում լավ ամուսնության սկզբունքները: \_\_\_\_\_**

---

Ամուսնու արտոնությունն այն է, որ սիրո ծառայության մեջ իրեն նվիրի կնոջը, ինչպես և Քրիստոսն Իրեն նվիրեց եկեղեցուն: Կինն, իր հերքին, պետք է հարզի ամուսնուն և համագործակցի նրա հետ՝ ընդհանուր նպատակներին հասնելու համար: Ահա լուծումը տարածայնությունների դեպքում, որոնք մեղքը մտցնել է ամուսնական փոխարարերությունների մեջ: Անշահախնդիր սիրուն ի պատասխան՝ կլինի հարզանք, սեր և երկուստեք երջանկություն: Մեր տները կարող են դառնալ երկնքի կանխավայելունը:

## Չորեքշաբթի

## Վեկորվարի 27

### **Պաշտպանելով արժեքավորը**

Մարդկանց հանդեպ Աստծո սիրո մեծագույն օրինակներից մեկը կարելի է տեսնել մարդկային մտերմիկ, ինտիմ հարաբերությունների մեջ: Դա խկապես Աստծո հրաշալի պարզեներից է: Բայց, ինչպես և մյուս պարզեները, այն չի տրվել առանց պայմանների: Աստված որոշակի կանոններ է սահմանել: Նա Իր կամքն արտահայտել է չափազանց հստակորեն. ինտիմ հարաբերությունները պետք է լինեն ամուսնու և կնոջ, տղամարդու և կնոջ միջև, և բացառապես միայն ամուսնության

համատեքստում: Հարաբերությունների ցանկացած այլ ձևերը մեղք են համարվում:

**Կարդացե՛ք Մատթեոս 5.27-30-ը: Տեսե՛ք, թե որքան լրջորեն է Յիսուսը Վերաբերվում այն հարցերին, որոնց մասին խոսում է: Վերջին հաշվով, ի՞նչ է դրված խաղաքարտի վրա: \_\_\_\_\_**

---

Որքան էլ մեզ դուր գա (և դա ճիշտ է) ուշադրություն նվիրելը շնորհին և ներմանը, որ մեղավորներին պարզեցն է Հիսուսը, մենք չենք կարող մոռանալ քարոյականության քարձը չափանիշները, որոնցով Նա ապրում էր և որոնք քարոզում էր: Դժվար է պատկերացնել, թե ինչպես Հիսուսը կարող էր նախազգուշացնել սեռական անքարոյականության մասին առավել խիստ, քան շարադրված է այդ մի քանի համարում: **Հանե՞լ աչքը: Կորի՞ ձեռքը: Եթե դա է պահանջվում մաքրությունը պահպանելու համար, նշանակում է՝ արժե դա անել, հակառակ դեպքում դուք կարող եք կորցնել հավիտենական կյանքը:**

«Բնոլոր նրանք, ովքեր հայտարարում են, թե հնազանդվում են Աստծո օրենքին, եթե զատ լինեին անօրենությունից, իմ հոգին հանգիստ կլիներ. բայց նրանք ազատ չեն: Անզամ նրանցից ունանք, ովքեր պնդում են, թե պահում են Աստծո բոլոր պատվիրանները, գործում են շնորհյան մեղքը: Ես ի՞նչ կարող եմ ասել՝ արքնացնելու համար նրանց կոշտացած զգայունակությունը: Խստորեն պահպանվող քարոյական սկզբունքները հոգու միակ պաշտպանությունն են» (Ե. Ուայթ, Խորհուրդներ առողջ կենսակերպի մասին, 621, 622):

Որքան էլ զորեղ լինեն Յիսուսի վերը բերված նախազգուշացումները, մենք պետք է նաև իիշենք այն կնոջ պատմությունը, ով բռնվել էր շնորհյուն գործելիս (Յովհաննես 8.1-11): Մենք ինչպես կարող ենք ճիշտ հավասարակշռություն պահպանել Յիսուսի պատվիրած չափանիշներին հետևելու և մեղավորի հանդեպ գթասրտություն ու կարեկցանք դրսնորելու միջև, ինչպես ցույց է տրված այս պատմության մեջ:

**Հինգշաբթի**

**Կիելովարի 28**

## **Ամուսնությունը՝ որպես եկեղեցու այլաբանական պարկեր**

Աստվածաշունչն ուսումնասիրող մարդկանց քաջ հայտնի է, որ

ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարաններում ամուսնությունը ծառայում է որպես Աստծոն և Նրա ընտրյալ ժողովրդի միջև փոխհարաբերությունների խորհրդանշ: Այդ պատճառով, օրինակ, մի շարք դեպքերում Աստվածաշունչն օգտագործում է անհավատարիմ կնոջ կերպարը՝ ցույց տալու համար Աստծուց հեռանալը, որ տեղ էր գտել Հին Իսրայելում: Ելից գրքում գրված է, որ Տերն Իր ժողովրդին արգելել էր սերտ հարաբերությունների մեջ մտնել շրջապատող հերանուսների հետ, քանի որ վերջիններս շատ անբարդյական մարդիկ էին և կարող էին խրայելացիններին հեռացնել ճշմարիտ ուղուց:

**Կարդացե՛ք Ելից 34.14-16-ը:** Տերն ի՞նչ կերպար է օգտագործում այս հատուկ նախազգուշացման մեջ: Ինչպե՞ս պետք է այդ կերպարը հասկանալ այն համատեքստում, որ Աստծոն ժողովուրդն ասես «ամուսնացած է» Նրա հետ: Տես Երեմիա 3.14:

---

---

---

---

---

---

Եկեղեցու՝ Քրիստոսի հարսնացուի կերպարը, ցույց է տալիս հավատացյալների միասնությունը և նրանց միարանությունը Քրիստոսի հետ, հատկապես՝ երբ դիտարկվում է ամուսնության համար աստվածաշնչյան իդեալի համատեքստում՝ մեկ տղամարդ և մեկ կին, ովքեր միավորվել են սիրառատ անշահախնդիր փոխհարաբերություններով:

**Կարդացե՛ք Եփեսացիս 5.28-32-ը և Յայտնություն 19.5-9-ը:** Ի՞նչ են սովորեցնում այդ համարները:

---

---

---

---

---

---

Այս տեքստերում իդեալական ամուսնության փոխհարաբերությունները համեմատվում են Աստծոն և Իր ժողովրդի փոխհարաբերությունների հետ: Աստված Իր ժողովրդին հրավիրում է սերտ փոխհարաբերություններով միավորվել Իր հետ: Դա զարմանահրաշպատկեր է, որը ցույց է տալիս Իր ժողովրդի խնդիրներով Աստծոն շահագրգովածությունը և Նրա ցանկությունը՝ փոխհարաբերություններ պահպանել մեզ հետ:

**Դուք ի՞նչ որոշումներ կարող եք ընդունել՝ Աստծուն, ինչպես նաև Աստվածաշնչում ներկայացված ամուսնության իդեալին**

**մոտենալու համար: Ինչո՞ւ այդ ընտրությունը միայն դուք կարող եք անել:**

## **Հետագա ուսումնասիրության համար**

Բարոյականության ճիշտ ըմբռնումը, հատկապես՝ ինտիմ փոխհարաբերություններում, շատ բանով կապված է մեր ծագումը ճիշտ ըմբռնելու հետ: Օրինակ, էվոլյուցիայի վիլխտփայությունը սեռականության և բարոյականության փոխադարձ կապի համար օբյեկտիվ հիմք չի տալիս: Կենդանիները տարրեր «զուգավորման համակարգեր» ունեն: Որոշ տեսակների բնորոշ է «բազմականությունը» և անկանոն կապերը: Միայն շատ քիչ տեսակներ են «միամուսնական», բայց ծագումնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ շատ տեսակներ, որոնց մենք հանարում ենք մոնոգամ, իրականում այդպիսին չեն: Շատ տեսակների էզը կարող է տարրեր հայրերից ծագեր ունենալ: Առանց Արարջի տված բարոյականության օբյեկտիվ ստանդարտի՝ մենք սեռական փարզը որպես բարոյական կամ անբարոյական գնահատելու ոչ մի հիմք չենք ունենա: Դա կարելի է պատկերել նույնասեռական կապերը խրախուսելու ժամանակակից միտումով: Ամուսնությունը կարելի է ճիշտ ըմբռնել միայն արարման լույսի ներքո:

«Ինչպես Հին, այնպես էլ Նոր Կոտակարանում ամուսնական հարաբերությունների պատկերն օգտագործվում էր՝ անձնավորելու համար Քրիստոսի և Նրա ժողովրդի միջև սիրառատ սրբազն միությունը: Հիսուսին հարսանեկան արարողությունը հիշեցնում էր, որ կզա այն երջանիկ օրը, երբ Ինքն Իր հարսնացուին՝ սուրբ ժողովրդին, կտանի Հոր տունը, փրկազմվածները Փրկչի հետ միասին կնատեն Գառի հարսանիքի խնջույքին» (Ե. Ուայք, Դարերի փափազը, 151):

### **Հարցեր քննարկման համար**

1. Դարվինիզմը ժխտում է արարման աստվածաշնչյան տեսակետը:  
Դարվինիզմը սեռական վարքի որևէ կանոն առաջարկո՞ւմ է, և ոդքանո՞վ է դա հակադրվում աստվածաշնչյան իդեալին:
2. Թվարկե՛ք հաջող ամուսնությունների և երջանիկ ընտանիքների մի քանի աստվածաշնչյան օրինակ: Թվե՛ք անհաջող ամուսնությունների և դժբախտ ընտանիքների մի քանի աստվածաշնչյան օրինակ և:
3. Կարդացե՛ք առաքինի կնոջ նկարագրությունը Առակաց 31.10-31-ում:

- Ինչպիսի՞ն պետք է լինի նրա ամուսնու բնավորությունը:
4. Ինչպե՞ս ձեր Եկեղեցին կարող է դառնալ այն վայրը, որը նպաստում է ամուսնության ամրապնդմանն ու պահպանմանը: Ի՞նչ գործնական քայլեր կարող է ձեռնարկել ձեր Եկեղեցին՝ այդ նպատակին հասնելու համար:

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Սաղմու 8, Ծննդոց 2.15, Հայրնություն 4.11, Ելից 20.8-11, Ա Կորնիքացիս 3.16:

### **Հիշելու համարը**

«Եվ Ասպիս օրինից նրանց, և Ասպիս ասաց նրանց. Աճեցիք և շարացե՛ք, և լցրե՛ք երկիրը, և տիրեցե՛ք նրան, և իշխեցե՛ք ծովի ձկներին, և երկնքի բռչուններին, և երկրի վրա սողացող բոլոր կենդանիներին» (Ծննդոց 1.28):

«Աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, Արարիչ Աստծո սիրո պարզեն է, ով ստեղծել է «երկինքը, երկիրը և ծովը, և ջրերի աղբյուրները» (Հայրնություն 14.7): Այդ արարչագործության մեջ Նա տեղափորեց մարդուն և հրամայեց փոխարարելություններ պահպանել Իր, մյուս մարդկանց և շրջակա աշխարհի հետ: Այդ պատճառով մենք՝ որպես Յոթերորդ օրվա արվենտիստներ Նրան ծառայելիս պահում ենք այդ աստվածային մտադրությունները...»

Քանի որ մարդու չքավորությունը և շրջակա միջավայրի վիճակի վատքարացումը փոխկապակցված են, մենք մեզ վրա պարտավորություն ենք վերցնում՝ բարեկավելու բոլոր մարդկանց կյանքի որակը: Սեր նպատակը ռեսուրսների կայուն զարգացումն է և մարդկային կարիքներին արձագանքելը...»

Տվյալ պարտավորությունը կատարելիս մենք հաստատում ենք Աստծո արարչագործության վրա մեր կառավարումը և հավատում, որ լիակատար վերականգնումը կավարտվի միայն այն ժամանակ, երբ Աստված ամեն բան նորից կանի» (Հոգատարություն արարչագործության մասին // Յոթերորդ օրվա արվենտիստների Վեհաժողովի հայտարարությունը շրջակա միջավայրի հարցերով):

## Արարման ժամանակ լրիված իշխանությունը

Համաձայն Ծննդոց 1.26 տեքստի՝ Աղամի իշխանությունը տարածվում է բնացած ողջ արարչագործության վրա՝ ծովում, ցամաքում և օդում: Իշխանությունը ներառում է կառավարման կամ տիրապետման գաղափարը այդ արարչագործության վրա: Ասված է ոչ թե բնության ուժերի, այլ միայն արարչագործության վրա տիրակալության մասին: Եվ այդ տեքստի համաձայն՝ տվյալ կանոնը համապարփակ էր. ըստ էության, Աղամը պետք է դառնար երկրի իշխանը:

**Եվս մեկ անգամ կարդացե՛ք 8-րդ սաղմոսը: Դավիթն ինչպե՞ս է նկարագրում այն պատիվը, որ Աստված պարզել էր մարդկանց: Ի՞նչ է նշանակում, որ մենք պսակված ենք «փառքով ու պատվով», հատկապես՝ եթե դա դիտարկենք երկրի վրա մարդու տիրակալության համատեքստում:**

---

Ըստ Ծննդոց 2.15-ի՝ Աղամի ամենաառաջին խնդիրներից մեկը կենդանիներին անուններ տալն էր: Աստվածաշնյան ժամանակներում անունները հսկայական նշանակություն ունեին: Անունը ներկայացնում էր հենց մարդուն և հաճախ ցույց էր տալիս նրա կարգավիճակը: Կենդանիներին անուններ տալու իրավունքը նրա՝ որպես կենդանիների տիրակալի կարգավիճակի հաստատումն էր:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.15-ը: Այստեղ ինչպե՞ս է բացահայտվում կառավարման սկզբունքը:**

---

Աղամին հանձնարարված էր հոգ տանել այզու մասին, կառավարել և խնամել այն: Երրայերեն «շմք» արմատը, որն այստեղ բարգմանված է «պսհել», հաճախ նշանակում է «հետևել» կամ «պաշտպանել»: Այգին նվեր էր Աղամին, Աստծո սիրո արտահայտությունը, և այժմ Աղամը պատասխանատվություն էր կրում որևէ համար, ինչը իշխանության ևս մեկ օրինակ էր, որ մարդն ստացել է արարման ժամանակ:

**Աստծո՝ որպես Արարչի մեր գիտակցումը և արարման պատմության ըմբռնումը ի՞նչ կերպ պետք է ազդեն շրջակա միջավայրի հանդեպ մեր վերաբերմունքի վրա: Ինչո՞ւ պետք է այդ հարցերի ըմբռնումը պաշտպանի մեզ ինչպես շրջակա միջավայրի հանդեպ**

կատարյալ անտարբերությունից, այնպես էլ՝ դրա հանդեպ մոլեռանդ վերաբերմունքից:

## Հոգափարությունը մյուս արարածների հանդեպ

«Որովհետև իմն են անտառի բոլոր գազանները և հազարավոր սարերի անասունները» (Սաղմոս 50.10): Ինչպես է այդ տեքստը համապատասխանում երկրի մեր կառավարման թեմային: \_\_\_\_\_

---

Կարդացե՛ք Հայտնություն 4.11-ը: Այդ համարն ինչպե՞ս է արմատապես հակասում ընդհանուր արեհստական պատկերացումներին այն մասին, որ Արարիչ չկա, և ողջ արարչագործությունը պատահաբար է ի հայտ եկել:

---

Կենդանիների արարումը պատահականություն կամ ուշացած մտքի մարմնացում չէր: Աստված մտադրված էր ստեղծել նրանց: Նա ցանկանում էր, որպեսզի նրանք գոյություն ունենային, և այդ սկզբունքով պեսք է պայմանավորված լինի նրանց հանդեպ մեր վերաբերմունքը (ყրեն նաև Ելից 23.5,12, Առակաց 12.10, Ղուկաս 14.5-ը):

Կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքը և նրանց տառապանքների հանդեպ անտարբերությունը վկայում են անձնային շեղումների մասին: Մեծաքանակ հաստատություններ են հիմնվել, որոնք նպաստում են կենդանիների հանդեպ բարի վերաբերմունքի զարգացմանը, և դա ճիշտ է:

Միևնույն ժամանակ, որոշ մարդիկ այնքան հեռու են գնացել, որ սկսել են պնդել, թե մարդիկ կենդանիներից ավելի կարևոր չեն, այդ պատճառով կարիք չկա նրանց գերադասել կենդանիներից: Մտքերի այդպիսի ընթացքը մեծ չափով տրամաբանորեն բխում է մարդու ծագման էվոլյուցիայի մողելից: Ի վերջո, եթե մարդիկ և կենդանիները տարբերվում են միայն ժամանակով և դիպվածով, ապա ինչո՞վ է մարդն ավելի լավ: Մի փիլիսոփա անգամ փորձել է ապացուցել, որ հավի ճուտն ու ծովական ունեն ավելի մեծ «անհատականություն», քան մարդու ներարգանդային պտուղը կամ նորածին երեխան: Որքան էլ անհերեք հնչեն նմանօրինակ հայտարարությունները, դրանք միանգամայն տրամաբանորեն բխում են մարդու ծագման արեհստական էվոլյուցիոն մողելից:

Իհարկե, նման տեսակետները իրենց հաստատումը չեն գտնում Սուրբ Գրքում: Ի տարբերություն կենդանիների՝ մարդիկ Աստծո ծրագրերում ունեն հատուկ կարգավիճակ ու դիրք (տե՛ս Ծննդոց 3.21, Ելից 29.38, Ղևացցոց 11.3):

Փորձե՞ք դատել արեհստ - էվոլյուցիոնիստի դիրքերից և բերե՞ք պատճառներ, թե ինչու կենդանիներին ու մարդկանց պետք է նույն կերպ վերաբերվել: Դա ինչպե՞ս է վկայում մեր մտքերի արդյունքների որոշման մեջ ելակետային կանխադրույթների կարևորության մասին:

## **Շաբաթ օրը և շրջակա միջավայրը**

Ինչպես մենք արդեն նշել ենք, կառավարման հայեցակարգը մոլորակի նկատմամբ մեր հոգատարության համատեքստում ուղղակիորեն կապված է արարման հետ: Արարման պատմության վերաբերյալ մեր հայացքներն ազդում են նաև շրջակա աշխարհի հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

Ոմանք համարում են, որ արարչագործությունը կարելի է շահագործել, օգտագործել և անգամ կողրապտել, մինչև որ բավարարվեն մեր իղձերն ու ցանկությունները: Ուրիշներն, հակառակը, երկրպագում են արարչագործությանը (տե՛ս Հռոմեացիս 1.25): Եվ միայն աստվածաշնչյան տեսակետն է տանում դեպի հավասարակշռված դիրքորոշում՝ Տիրոջ կողմից մեզ համար ստեղծված աշխարհի հետ մեր փոխազդեցության հարցում:

**Կարդացե՞ք Ելից 20.8-11-ը: Կառավարման վերաբերյալ ի՞նչ տեղեկատվություն ենք մենք գտնում այդ պատվիրանում: \_\_\_\_\_**

---

«Աստված յոթերորդ օրը՝ շաբաթը, առանձնացրել է որպես Իր կողմից կատարված արարման և աշխարհի ձևավորման աշխատանքի հուշարձան և հավիտենական հիշեցում դրա մասին: Հանգստանալով այդ օրը՝ Յոթերորդ օրվա աղվենատիստները հատուկ փոխարաբերություններ են ամրապնդում Աստծո և Նրա արարածների հետ: Շաբաթ օրը սուրբ պահելն ընդգծում է ողջ շրջակա միջավայրի հետ մեր միաբանման կարևորությունը» (Հռոմատարություն արարչագործության մասին // Յոթերորդ օրվա աղվենատիստների Վեհաժողովի հայտարարությունը շրջակա միջավայրի հարցով):

Նշելով այն փաստը, որ Աստված արարել է մեզ և աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, շաբարը մեզ մշտապես հիշեցնում է այն մասին, որ մենք չենք կարող մեզ համարել կատարելապես անկախ էակներ, ովքեր իրավունք ունեն շրջապատռղների և հենց աշխարհի հանդեպ վարվել այնպես, ինչպես կցանկանան: Շաբարը պետք է սովորեցնի մեզ, որ մենք իրականում կառավարիչներ ենք, և դա մեզ վրա որոշակի պատասխանատվություն է դնում: Եվ, ինչպես մենք տեսնում ենք քուն պատվիրանում, պատասխանատվությունը տարածվում է նաև նրանց հանդեպ մեր վերաբերմունքի վրա, ովքեր մեզանից «ցածր» են:

Մտորե՞ք, թե դուք ինչպես եք վերաբերվում մյուս մարդկանց, հատկապես՝ ձեր ենթականերին: Դուք նրանց վերաբերվո՞ւմ եք հարգալից, արդարացիորեն և ողորմածաբար: Թե՞ դուք ձեր առավելության շնորհիվ այդ մարդկանց օգտագործում եք սեփական շահերի համար: Յիշե՞ք. մի անգամ դուք ստիպված կլինեք պատասխան տալ ձեր արարքների համար:

## **ՍԵՓԱԿԱՆ Առողջության կառավարիչները**

Ինչպես մենք նախորդ դասերում բազմից ընդգծել ենք, Աստծո նախասկզբնական արարչագործությունը «բարի» էր և անգամ՝ «շատ բարի»: Բոլոր արարածներն Աստծո ձեռքերից կատարյալ են դուրս եկել: Չեն եղել իհվանդությունները, տառապանքներն ու մահը՝ ի տարբերություն էվոլյուցիայի մոդելի, որում իհվանդությունները, տառապանքներն ու մահը արարման բուն գործընթացի մի մասն են: Իրականում այդ ամենը եկել է միայն մեղանչումից *հեկո*, այն բանից *հեկո*, եթք աշխարհ մտավ մեղքը: Այդ պատճառով միայն արարման պատմության լույսի ներք մենք կարող ենք ավելի լավ հասկանալ առողջության և պարագինման մասին աստվածաշնչյան ուսմունքը:

**Կարդացե՞ք Ա Կորնթացիս 6.19,20-ը: Ո՞րն է Աստծո առջև մեր պատասխանատվությունը մեր մարմնի հանդեպ հոգ տանելու հարցում:**

Մեր ուղեղն անմիջականորեն կապված է մեր մարմնի հետ, և հենց ուղեղի միջոցով է, որ Սուրբ Հոգին հաղորդակցվում է մեզ հետ: Եթե մենք ցանկանում ենք հաղորդակցություն ունենալ Աստծո հետ, ապա պետք է հոգ տանենք մեր մարմնի և ուղեղի մասին: Ωξ խելամտորեն

օգտագործելով մեր մարմինը՝ մենք քայրայում ենք մեզ ինչպես ֆիզիկապես, այնպես էլ՝ հոգևորապես: Այս տեքստերի համաձայն՝ առողջության հարցն ընդհանրապես, և մեր մարմին՝ Աստծո տաճարի հանդեպ, մեր վերաբերմունքը քարոյականության հարցեր են, որոնք ունեն հավիտենական հետևանքներ:

Առողջության մասին հոգածությունը Աստծո հետ մեր փոխարքաբերությունների կարևոր մասն է: Իհարկե, առողջության որոշ տեսանկյուններ գտնվում են մեր իշխանությունից դուրս: Մենք ունենք անկատար ժառանգականություն, կարող ենք տուժել անհայտ քիմիկատներից կամ այլ վնասակար նյութերից, ստանալ վնասվածքներ, որոնք կվնասեն մեր առողջությունը: Աստված դա գիտի: Բայց մեր կողմից մենք պետք է անենք ամեն բան, որպեսզի պահպանենք Աստծո պատկերով ստեղծված մեր մարմինները:

«Թող ոչ մի բարեպաշտ որ անտարբեր չինի մարմնի առողջության հանդեպ և չմխիթարի ինքն իրեն նրանով, որ անժումկալությունը մեղք չէ և չի արտացոլվի իր հոգևորության վրա: Ֆիզիկական և բարոյական երթյան միջև սերտ կապ գոյություն ունի: Առաքինության չափանիշը բարձրանում կամ իշնում է ֆիզիկական սովորությունների ազդեցությամբ... Յանկացած սովորություն, որը չի նպաստում մարդկային օրգանիզմի առողջությանը, իշեցնում է բարձր ու ազնիվ պարզեցները» (Է. Ուայթ, Ուսուցիչ ընդ Հերալդ, 1881թ. 25 հունվարի):

## Հինգշարթի

## մարդի 7

### Կառավարման սկզբունքները

«Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարզեց վերսից է իջնում՝ լույսի Շորից, որի մեջ բնավ փոփոխություն կամ դարձվածքի շուրջ չկա» (Շակորոս 1.17): Այս համարն ինչպես է դնում կառավարման աստվածաշնչյան հայեցակարգի հիմքերը: \_\_\_\_\_

---

Կառավարման մասին մենք մտածում ենք առավելապես ֆինանսների համատեքստում: Սակայն, ինչպես ցույց տրվեց այսօրվա դասում, կառավարումն առավել քան լայն հասկացություն է: Ինչ հարցի էլ մենք բախվենք՝ ֆինանսներ, շրջակա միջավայր թե առողջություն, գոյություն ունեն լավ կառավարման որոշակի սկզբունքներ, որոնք արմատներով գնում են դեպի Ծննդոց գրքում նկարագրված արարումը:

Քանի որ Աստված մեր Արարիչն է, և այն ամենը, ինչ մենք ունենք, Նրա պարզեն է, մենք պարտավոր ենք լինել մեզ Վստահված ամեն ինչի լավ կառավարիչները:

**Կարդացե՞ք Մատթեոս 25.14-30-ը: Այս առակն ինչպե՞ս է պատկերում պարզեց լավ կառավարման դիմաց: Առակի լուրն ինչպե՞ս է կապված կառավարման ընդհանուր սկզբունքների հետ:**

---

«Իր ծառաներին Քրիստոսը «հանձնեց իր ունեցվածքը», այսինքն՝ այն, ինչ պետք է օգտագործվի Նրա համար: Նա յուրաքանչյուր մարդու որոշակի աշխատանք է հանձնարարել: Յուրաքանչյուրի համար հատուկ տեղ է սահմանված հավիտենական երկնային ծրագրի մեջ: Յուրաքանչյուրի համար գործ կգտնվի հանուն հոգիների փրկության Քրիստոսի հետ համագործակցության համար: Որքան ճիշտ է այն, որ երկնային բնակարաններում մեզ համար տեղ է պատրաստված, այնքան էլ ճիշտ է այն, որ կա հատուկ տեղ, որը նախատեսված է մեզ համար այստեղ՝ երկրի վրա, որտեղ մենք պետք է աշխատենք հանուն Աստծո» (Ե. Ուայթ, Քրիստոսի առակները, 326, 327):

**Դուք ի՞նչ եք անում ձեզ Վստահված տաղանդները (իիշե՞ք.**  
«Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարզ վերևից է իշնում լուսի Յորից, Որի մեջ բնավ փոփոխություն կամ դարձվածքի շուրջ չկա»: Յակոբոս 1.17): Դուք ի՞նչ որոշումներ կարող եք ընդունել՝ ավելի շատ և ավելի լավ օգտագործելու համար այդ պարզեները Տիրոջը ծառայելու գործում:

## Յեփագա ուսումնասիրության համար

«Քրիստոսի հետևորդները փրկագնվել են ծառայության համար: Սեր Տերը սովորեցնում է, որ կյանքի ճշմարիտ նպատակը ծառայությունն է: Քրիստոսն Ինքը անխոնց աշխատավոր էր և Իր բոլոր հետևորդներին տվել է Աստծուն և մերձավորներին ծառայելու օրենքը: Այստեղ Քրիստոսը աշխարհին հայտնել է կյանքի մասին առավել բարձր պատկերացում: Ուրիշներին ծառայելու մեջ նարդը միաբանվում է Քրիստոսի հետ: Եվ այդպես, ծառայության օրենքը դառնում է կենդանի կապ, որը մեզ միավորում է Աստծոն և մյուս մարդկանց հետ» (Ե. Ուայթ, Քրիստոսի առակները, 326):

## **Հարցեր քննարկման համար**

1. Որոշ մարդիկ համարում են, որ կյանքի արժեքավորությունը չափվում է ոչ թե նրանով, թե ումն է այդ կյանքը (մարդունը, թե կենդանունը), այլ այն բանով, թե նա ունի՞ բավականության մեջ ապրելու կյանքի ներուժ։ Այդ պատճառով երիտասարդ առողջ շինպանզեի կյանքը նրանք ավելի թանկ են գնահատում, քան ծեր ու հիվանդ մարդու կյանքը։ Կարդացեք, օրինակ, ստորև բերված մեջբերումը ավստրալիացի Պիտեր Սինգերից, ով պնդում է, թե որոշ դեպքերում մարդիկ պետք է ունենան կենդանիներից ոչ ավելի իրավունքներ։ «Ընդհանուր առմանք, կյանքի հանդեպ հոգատարություն կամ կյանքի բնույթի վրա հիմնված անկողմնակալ հոգատարություն չցուցաբերողները, հղության արհեստական ընդհատման դեմ բողոքող, բայց կանոնավորապես թռչնի, խոզի ու հորթի միս ուտող մարդիկ ցուցադրում են սոսկ մեր ցեղի անդամների կյանքի հանդեպ կողմնակալ հոգածություն։ Որովհետև եթե ազնվորեն համեմատենք բարոյապես կարևոր բնութագրիները, ինչպես, օրինակ՝ խելամտությունը, ինքնագիտակցումը, տեղեկացվածությունը, անկախությունը, բավականությունը, ցավը և այլն, ապա հորթը, խոզն ու թռչունները, որոնց վրա բոլորը ծիծաղում են, շատ են գերազանցում հղության ցանկացած փուլում գտնվող մարդու պսդին։ Միևնույն ժամանակ, եթե մենք համեմատենք արգանդային պտղի հետ, որը փոքր է երեք ամսեկանից, ձուկը գիտակցության ավելի շատ նշաններ ցույց կտա, քան նա» (Peter Singer, Writings on an Ethical Life (New York, N.Y.: The Ecco Press, 2000), 156):
2. Սինգերն էվուուցիոնիստ է, այդ պատճառով հավատում է, որ իրականում մարդկանց և կենդանիների միջև գոյություն չունի ակնհայտ որակական տարրերություն։ Մարդիկ պարզապես էվուուցիոն ժանապարհով դարձել են կենդանիներից տարրերվող ինչ-որ բան, ահա և անենք։ Սրանում ի՞նչն է արմատապես սխալ։ Մենք՝ քրիստոնյաներս, ի՞նչ կարող ենք պատասխանել նման հայտարարությանը։
3. Եթե գոյություն ունի այդպիսի հնարավորություն, դասին բերեք «Ռոգատարություն արարչագործության մասին»։ Կանոնակարգ շրջակա միջավայրի մասին։ Ենութիւնը լրիվ տեքստը։ (Այն կարելի է գտնել [adventist.org/beliefs/statements/main-stat5.html](http://adventist.org/beliefs/statements/main-stat5.html) կայքում։) Կամ էլ օգտագործեք շաբաթ օրվա դասի համար բերված մեջբերումները։ Կենտրոնացեք Ծննդոց գրքում նկարագրված արարման պատմության և շրջակա միջավայրի միջև եղած փոխադարձ կապի վրա։ Խորհեք այն մասին, թե ինչպես կարող է արարման վերաբերյալ ճիշտ տեսակետը մեզ պաշտպանել ծայրահեղություններից։

## ՃԱԲԱԹԸ ԵԴԵՄԻՑ ԵԿԱԾ ՊԱՐԳԵՎ Է

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 2.1-3, Երրայիցիս 4.3,4, Երկրորդ Օրինաց 5.12-15, Եղելիիլ 20.12, Մարկոս 2.27,28, Բ Պետրոս 3.3-7:

**Հիշելու համարը.**

«Որովհելու մարդու Որդին շաբաթի էլ Տիրն է» (Մատթեոս 12.8):

Վեցերորդ օրվա ավարտի վերջում գործերն ավարտվեցին (Ծննդոց 2.1,2): Աշխարհի դարձավ բնակեցված վայր՝ ի կենդանի էակներով: Աղամն ու Եվան ստեղծվեցին Աստծո պատկերով և նվեր ստացան հիասքանչ, օրինություններով լի այգի, որտեղ պետք է ապրեին: Նրանք կնքեցին երկրի առաջին ամուսնությունը, ստեղծվեցին առաջին ընտանիքը: Աստված գոհ էր Իր աշխատանքից: Սակայն դա դեռ ամենը չէր արարում լրացվեց յոթերորդ օրով՝ շաբաթով (իրեն Ծննդոց 2.1-3):

Ծննդոց երկրորդ գլուխը հերքում է համընդիանուր պատկերացումն այն մասին, որ յոթերորդ օրը «հրեական շաբաթն» է: Ինչո՞ւ: Որովհետև «Աստված օրինեց յոթերորդ օրը և սրբեց նրան» դեռևս Եղեմում՝ նախքան մեղանչումը և, իհարկե, նախքան հրեաների գոյությունը:

Ավելին, շաբաթ օրը *ամբողջ* մարդկության (ոչ թե միայն հրեաների) արարման հուշարձանն է, այդ պատճառով ողջ մարդկությունը պետք է վայելի շաբաթ օրվա օրինությունները:

Այս շաբաթ մենք կղիտարկենք շաբաթ օրվա՝ Եղեմում ստացված ևս մեկ պարզեցի մասին աստվածաշնչան ուսմունքը:

**Միաշաբթի**

**մարդի 10**

### Արարումը և շաբաթը

Ելից 20.8-11 տեքստերում չորրորդ պատվիրանը անմիջականորեն վերաբերում է արարման շաբաթվան: Դա կարևոր է, քանի որ շաբաթ օրը ցույց է տալիս Եղեմը, աշխարհն առանց մեղքի, կատարյալ աշխարհը, որ դուրս էր եկել Արարչի ձեռքից: «Շաբաթն այստեղ ներկայացված է

ոչ թե որպես նոր հրաման, այլ որպես օր, որը հաստատվել էր արարման ժամանակ: Մենք պետք է հիշենք այդ օրվա մասին և պահենք այն՝ ի հիշատակ Արարջի գործերի» (Ե. Ուայր, Նահապետներ և մարգարեներ, 307):

**Կարդացե՛ք Ծննդոց 2.1-3-ը: Ինչպե՞ս է յոթերորդ օրը՝ շաբաթը, անմիջականորեն կապված արարման հետ: Այս համարներն ինչպե՞ս են ևս մեկ անգամ հաստատում, որ Աստված մեր աշխարհն ստեղծել է յոթ տառացի օրերի, և ոչ թե դարերի ընթացքում, ինչպես պնդում է թեհստական էվոլյուցիան:** \_\_\_\_\_

---

Բերված համարներում հինգ անգամ հիշատակվում է յոթերորդ օրը. երեք անգամ շաբաթ օրվա մասին խոսկում է որպես յոթերորդ օրվա մասին, և երկու անգամ այդ օրը նշանակված է «նրան» դերանվաճք: Տվյալ համարներում ոչ մի երկիմաստություն չկա օրվա կամ այն բանի հարցում, թե ինչ է այն ցույց տալիս, ինչպես նաև՝ այն հարցում, որ յոթերորդ օրվան նախորդում են արարման վեց օրերը:

**Կարդացե՛ք Եբրայեցիս 4.3-4-ը: Խոսելով հանգստի մասին՝ ի՞նչ իրադարձություն է նատնացույց անում Եբրայեցիներին հղված ուղերձի հեղինակը, և ինչո՞ւ է դա կարևոր:** \_\_\_\_\_

Սա Նոր Կտակարանի ուղղակի հղումն է Ծննդոց գրքում գրի առնը-ված արարման պատմությանը, որը վեց օրերի ընթացքում ավարտված արարման մասին պատմական ճշմարտության վկայությունն է, որոնց հաջորդել է հանգստի օրը:

Այսօր շատերը հանաձայն չեն այն մտքի հետ, որ արարումն ավարտվել է վեց օրվա ընթացքում: Նրանք տվյալ պնդման ճշմարտացիության գիտական պացույցներ են պահանջում: Բայց գիտությունն ինքը գործ ունի պատահականությունների, անորոշության և ենթադրությունների հետ: Բացի այդ, ինչպե՞ս կարելի է ապացուցել, որ արարումն ավարտվել է վեց տառացի օրերի ընթացքում:

**Աստված «չի վերացրել կասկածի հնարավորությունները. հավատը հիմնվում է ապացույցների վրա, և ով ցանկանում է կասկածել, նա ունի այդպիսի հնարավորություն, իսկ ով ծգտում է ճշմարտությանը, նա բավարար հիմքեր կգտնի իր հավատի համար»** (Ե. Ուայր, Դաստիարակություն, 169): Դուք ի՞նչ հիմքեր ունեք հավատալու համար: Ինչո՞ւ են դրանք առավել զորեղ, քան կասկածներ առաջ բերող գործոնները:

## Շաբաթօրյա հանգստի հարուստ նշանակությունը

**Կարդացե՞ք Երկրորդ Օրինաց 5.12-15-ը: Շաբաթ օրվա մասին այդ պատվիրանն ինչո՞վ է տարբերվում Ելից 20.8-11-ում գրի առնվածից:**

---

Բերված համարներում Սովետար իրեաներին հիշեցնում է այն մասին, որ նրանք պետք է պահեն շաբաթը, քանի որ Աստված նրանց ազատել է Եգիպտոսից: Տեքստերը ոչինչ չեն ասում արարման վեց օրերի կամ այդ օրը Աստծո հանգստի մասին: Այսեղ շեշտը դրված է փրկության, ազատագրման, փրկագննան, տվյալ դեպքում՝ Եգիպտոսից ազատագրման վրա, ինչը ցույց է տալիս ճշմարիտ փրկագնումը, որ մենք ունենք Հիսուսում (ყեն Ա Կորնիքացի 10.1-4-ը):

Այլ խոսքերով՝ այս երկու տեքստերի միջև չկա հակասություն, դրանք չի կարելի հակադրել: Սովետար ցույց տվեց ժողովրդին, որ նրանք Տիրոջն են պատկանում և՝ արարման, և՝ փրկագննան պատճառով:

**Կարդացե՞ք Եզեկիել 20.12-ը և Ելից 31.13-ը: Բերե՞ք շաբաթը սուրբ պահելու ևս մեկ պատճառ:**

---

Հատվածները, որոնցում խոսվում է սրբազործման մասին, մեզ հիշեցնում են այն մասին, որ միայն Աստված կարող է մեզ սուրբ դարձնել: Միայն Արարիչը կարող է մեր ներսում նոր սիրտ ստեղծել:

Այժմ դիտարկենք շաբաթը սուրբ պահելու երեք թվարկված պատճառները և դրանց փոխադարձ կապը: Մենք սուրբ ենք պահում յոթերորդ օրը, քանի որ ընդունում ենք այն փաստը, որ Աստված աշխարհն ստեղծել է վեց օրվա լուրացքում, իսկ յոթերորդ օրը հանգստացել է: Մենք յոթերորդ օրն ենք սուրբ պահում նաև այն պատճառով, որ Աստված Քրիստոսում փրկագնել ու փրկել է մեզ: Երբորդ պատճառն այն է, որ Աստված սրբազործում է մեզ: Այդ սրբազործումը հնարավոր է միայն Նրա ստեղծագործ զորության շնորհիվ (ყեն Սաղմոն 51.10, Բ Կորնիքացի 5.17):

Այդ պատճառով վեցօրյա արարումը ժիստող տեսությունները ոչիշացնում են Աստծո շնորհը՝ մեծացնելով փրկությունն ստանալու համար մարդկային ջանքերի արժեստությունը: Արարման պատմությու-

Նը մեզ հիշեցնում է շնորհից և հանուն մեզ Քրիստոսի քավշարար գոհից մեր լիակատար կախվածության մասին:

Խորհե՛ք այս փաստի մասին, որ մենք կախված ենք Աստծուց և Նրա փրկագնումից նույն կերպ, ինչպես Նրանից ենք կախված մեր գոյության հարցում (ի վերջո, դուք կարո՞ղ էք որևէ ընտրություն կատարել ծեր ծնվելու հարցում): Շաբաթ օրն ինչպե՞ս է օգնում մեզ՝ ավելի լավ գիտակցել Աստծո շնորհի մեր բացարձակ կարիքը, որը դրսենորվում է մեր կյանքի բոլոր ոլորտներում: Այդ իմացությունն ինչպե՞ս պետք է ազդի մեր կյանքի վրա:

## **Երեքաբթի**

***մարդի 12***

### **Յիսուսը և շաբաթը**

Կարդացե՛ք Մարկոս 2.27,28-ը: Շաբաթ օրվա վերաբերյալ ի՞նչ կարևոր ծշմարտություն է Յիսուսը բացահայտում այդ տեքստերում: Մենք ինչպե՞ս կարող ենք այդ սկզբունքը կիրառել շաբաթ օրը սուրբ պահելու մեր փորձառության մեջ: \_\_\_\_\_

Հիսուսն ու իր աշակերտները անցնում էին ցանված արտի կողքով: Քաղցած աշակերտները սկսեցին հասկեր քաղել, տրորել դրանք ձեռքերի մեջ և ուտել հատիկները: Նրանց գործողությունները ամօրինական չէին, քանի որ Մովսեսի օրենքը դա քույլ էր տալիս (*γηն Երկրորդ Օրինաց 23.25*): Սնունդն անհրաժեշտություն է, և աշակերտների կողմից ճանապարհին քաղած հասկերից հանած հատիկներով քաղցը բավարարելը միանգամայն կիրառելի ու քույլատրելի էր: Խնդիրն այն էր, որ կրոնական առաջնորդները շաբաթը սուրբ պահելու սեփական կանոնները վեր էին դասում մարդկային կարիքից: Ահա թե որն էր Քրիստոսի և փարիսեցիների միջև պայքարի հիմնական պատճառը: Հիսուսի պատասխանը ցույց տվեց, որ նրանց առաջնահերթությունները սխալ են: Շաբաթ օրը պետք է օրինություն լիներ մարդու համար, և ոչ թե որևէ մեկի տառապանքները երկարաձգելու պատրվակ:

Յիսուսն է՞լ ինչ էր անում շաբաթ օրը՝ չնայելով առաջ եկած դիմադրությանը: Մատթեոս 21.9-13, Ղուկաս 13.10-17, Յովհաննես 5.1-17: \_\_\_\_\_

Ավետարաններում շաբաթ օրվա հետ կապված ճշմարտությունները նկարագրելիս հարցականի տակ չի դրվում դրա օրինական լինելը: Հարցը յոթերորդ օրը պահելու կանոնների, ոչ թե դրա վերացման կամ ինչ-որ այլ բանով փոխարինելու մեջ է:

Հիսուսի օրինակը ոչ միայն ապացուցում է, որ շաբաթ օրը նախկինի նման անհրաժեշտ է սուրբ պահել, այլ նաև ցույց է տալիս, թե ինչպես պետք է այն սուրբ պահել: Նրա օրինակով մենք կարող ենք պարզորոշ տեսնել, որ շաբաթ օրը կատարվող աշխատանքը, որն ուղղված է տառապանքների թերևացմանը, շաբաթի խախտում չէ: Ընդհակառակը, Փրկչի օրինակը վկայում է, որ բարի գործերը կարելի է կատարել շաբաթ օրը:

Շաբաթ օրը ձեր կողմից սուրբ պահելն ինչպե՞ս կարող էր էլ ավելի լիարժեքորեն արտացոլել այն սկզբունքները, որոնք մեզ հայտնվել են Հիսուսի օրինակով:

## **Շաբաթը և Վերջին օրերը**

Կարդացե՛ք Բ Պետրոս 3.3-7-ը: Պետրոսի պատկերած վերջին օրերի ծաղր անողներին համեմատե՛ք ժամանակակից հասարակության հետ: Ի՞նչն են ժխտում այդ ծաղրանքները և ինչո՞ւ:

---

---

---

Ծաղրողները հայտարարում են, որ բնությունը հիանալի կերպով գոյություն ունի առանց կողմնակի միջամտության: Այդ հասկացությունը գիտական շրջանակներում հայտնի է որպես «ունիֆորմիզմ»\*: Ծաղրողները նաև ժխտում են հրաշքները, այդ թվում նաև՝ Տիրոջ երկրորդ գալուստը՝ շնայելով Նրա խոստմանը:

Սակայն նկատե՛ք, թե ինչպես է Պետրոսը Քրիստոսի երկրորդ գալստյան ժխտումը կապում արարման մասին պատումը ժխտելու և շրնդունելու հետ՝ ներառյալ նաև ջրհեղեղի պատմությունը: Մեկը շրնդունելը տանում է մյուսի շրնդունմանը:

\* Ունիֆորմիզմը ենթադրություն է, որի համաձայն ժամանակակից երկրաբանական երևույթների գիտությունը հնարավոր է առանց ուղղուների տարածել ցանկացած վաղեմության երկրաբանական անցյալի մեկնաբանության վրա:

**Կարդացե՛ք Հայտնություն 14.6,7-ը: Երկնային ուժով ի՞նչ լուր  
է հռչակելու կասկածանքների ու դիմադրության մեջ:** \_\_\_\_\_

Ծաղրողները սխալվում են: Վրա է հասնում դատը, և երեք հրեշտակների պատգամը կոչ է անում. «Երկրպագեցե՛ք երկինքը և երկիրը և ծովը և ջրերի աղբյուրները Ստեղծողին»: Սա արարման լեզուն է: Տեքստը հղում է կատարում Ելից 20.11-ին՝ ընդգծելով արարման ու շաբաթ օրվա նշանակությունը վերջին ժամանակներում: Քանի որ շաբաթ օրը խորհրդանշում է արարման և փրկագննան աստվածաշնչյան պատմությունը, արարման ժխտումը հանգեցնում է յոթերորդ օրվա՝ շաբաթի ժխտմանը, և մարդու կողմից հորինված փոխարինումն ընդունելուն՝ ի դեմս էվոլյուցիայի տեսության: Արյունքը ցույց է տրված Հայտնություն 14.8-10-ում՝ հոգևոր շնորհյուն և Աստծուց բաժանում:

Աստված մարդկանց կոչ է անում երկրպագել Իրեն՝ որպես Արարչի, և Աստվածաշնչում ոչ մի տեղ մենք Նրան որպես Արարիչ մատնացույց անող առավել լիակատար ու հստակ ցուցում չենք գտնում, քան յոթերորդ օրվա՝ շաբաթի մեջ: Այդ պատճառով զարմանալի չէ, որ շաբաթը՝ Արարիչ Աստծո մասին սկզբնական վկայությունը, հայտնվում է վերջին օրերի իրադարձությունների կենտրոնում:

**Խորիե՛ք, թե ինչպես է արարման տառացի վեց օրերի ժիստումը փոքրացնում յոթերորդ օրվա՝ շաբաթի նշանակությունը: Եթե մենք նսեմացնում ենք յոթերորդ օրվա կարևորությունը, էլ ինչի՞ համար պաշտպանել այն, եթե սկսվի հալածանքը:** \_\_\_\_\_

## **Հինգշաբթի**

**մարդի 14**

### **Ճաբաթօրյա սաղմոս**

**Կարդացե՛ք Սաղմոս 92-ը: Ի՞նչ է այն մեզ ասում շաբաթ օրը պահելու փորձառության մասին: Ստորելով Տիրոջ մասին՝ ինչո՞ւ մենք պետք է նույնպիսի ցնծություն գգանք, ինչպիսին նկարագրված է սաղմոսում:** \_\_\_\_\_

Սաղմոսերգուն, անկասկած, ճանաչում էր Տիրոջը, Նրա բնավորությունն ու գործերը, ինչպես նաև գիտեր այն մասին, ինչ Նա մի անգամ անելու է: Այդ պատճառով նա արտահայտում է իր ուրախությունը:

Վերլուծե՛ք այդ «շաբաթօրյա սաղմոսի» կարևոր թեմաները: Ամենից առաջ, հնչում է փառաբանություն և երախտագիտություն Աստծուն՝ Իր սիրո, բարության և հավատարմության համար: Բացի դրանից, ինչպես այս, այնպես էլ ցանկացած այլ շաբաթօրյա սաղմոս, իհարկե, ներառում է Աստծ՝ որպես Արարշի ճանաչումը: Նաև ուշադրություն դարձե՛ք այստեղ իհշատակված դատաստանի թեմային: Աստվածաշնչում Աստծ դատաստանն ուղղված է ոչ թե պարզապես անօրենների դեմ, այլ նաև արդարների օգտին (տես՝ Դանիել 7.20-28): Դատաստանի այս երկու տեսանկյունները բացահայտված են նաև 92-րդ սաղմոսում: Եթե մենք այսօր ամհամ չենք տեսնում այդ խստումների կատարումը, մեզ խոստացված է, որ դատաստանն անպայման վրա կիասնի ժամանակի վերջում, և Աստված ամեն բան նոր կանի (Հայտնություն 21.5):

92-րդ սաղմոսն ընդգծում է, որ սուրբ շաբաթը Տերում ուրախանալու, Նրանում ցնծալու և ամեն բանի մասին հոչակելու ժամանակ է, ինչ Նա արել և խոստացել է անել մեզ համար: Սաղմոսը փոխանցում է այն ուրախությունը, ցնծությունն ու երջանկությունը, որոնց պատճառը ոչ թե սաղմոսներուի գործերն են, այլ Տիրոջ՝ և՝ արդեն կատարված, և՝ ապագայում խոստացված գործերը:

Ինչիսի՝ իհասրամազ պարզեն է՝ մեր կյանքի մեկ յոթերորդը յուրաքանչյուր շաբաթ առանձնացվում է հանգստի և ուրախության համար: Ազատ լինելով երկրային գոյուրյան գրադաժանությունից և սրբեսից՝ մենք կարող ենք վայելել Տիրոջ գործերը, որ կատարվում են մեզ համար:

**Դուք ինչպե՞ս կարող եք սովորել շաբաթ օրվա համար ցնծալ այնպես, ինչպես ուրախանում եք 92-րդ սաղմոսի հեղինակը: Եթե դուք նման ոչինչ չեք զգացել, ի՞նչն է պատճառը:**

## **Յեփագա ուսումնասիրության համար**

Աստված մարդուն արարել է Իր պատկերով: Դրանում անըմբռնելի ոչինչ չկա: Ոչ մի իհմք չկա ենթարրելու, որ մարդը էվոյսուցիայի արդյունք է, կենդանական կամ բուսական աշխարհի աստիճանական զարգացման պատուի: Այդպիսի տեսությունը Արարշի հսկայական աշխատանքը նստմացնում է մարդկային սահմանափակ պատկերացումների մակարդակին: Մարդիկ այնքան համար են Աստծուն տիեզերքի վրա գերազույն իշխանությունից զրկելու իրենց ձգտման մեջ, որ սոս-

բացրել են մարդուն՝ զրկելով նրան իր ծագման ազնվաբարոյությունից: Նա, ով վերևում արարել է աստեղային աշխարհները, դաշտերը սքանչելիորեն զարդարել ծաղիկներով, ով երկինքն ու երկիրը լցոնել է Իր ամենազորության հրաշալի նշաններով, որոշել է պսակել Իր փառավոր գործերը և իշխան կարգել երկրի վրա, ստեղծել է մի էակ, ով արժանի էր իրեն կյանք պարզեսող ձեռքերին: Մարդկային ցեղի տոհմաբանությունը, ինչպես ցույց է տալիս Աստծո Խոսքը, սկիզբ է առնում ոչ քեզ զարգացող սաղմերից, կակդամորքներից ու չորբուտանիներից, այլ մեծ Արարչից» (Ե. Ուայր, Նահապետներ և մարգարեներ, 45):

## **Հարցեր քննարկման համար**

1. Ինչո՞ւ է շաբաթ օրվա և արարման փոխադարձ կապն այդպիսի նշանակություն ծեռք բերում այս վերջին օրերին: Այդ ճշմարտությունն ինչպե՞ս է արտահայտված Հայտնություն 14.6.7-ում: Քննարկե՛ք ձեր պատասխանները, վերադարձե՛ք չորեքշաբթի օրվա դասի վերջի հարցերին:
2. Սուտավորապես այն նույն ժամանակ, երբ Զարլզ Դարվինն սկսեց զարգացնել էվոլյուցիայի տեսությունը, Աստված հիմնեց մի եկեղեցի, որը պաշտպանում է յոթերորդ օրվա՝ շաբաթվա սուրբ պահելը որպես հատուկ դավանանք: Աստված այդ եկեղեցին կանգնեցրեց, որպեսզի այն հոչակի Հայտնություն 14-ի երեք հրեշտակների լուրը, որը հատուկ կերպով կոչ է անում երկրպագել երկնքի ու երկրի Արարչին: Այդ դեպքում ի՞նչը կարող է առավել ողբերգական լինել, կամ ի՞նչ անկում կարող է առավել խորը լինել, քան երբ այդ եկեղեցու որոշ անդամներ սկսում են պաշտպանել էվոլյուցիայի տեսությունը:
3. Ժամանակակից գիտնականները, ուսումնասիրելով կենդանի օրգանիզմների կառուցվածքը, ապշում են նրանց բարդությունից: Ակնհայտորեն, Զարլզ Դարվինը չէր գիտակցում, թե որքա՞ն բարդ է անգամ այսպես կոչված պարզ բջիջը: Այսօր մենք գիտենք, որ անգամ «ամենապարզունակ» բջիջը կառուցված է անհամենատ ավելի բարդ ձևով, քան, ըստ ամենայնի, Դարվինը պատկերացնում էր: Շատ գիտնականներ հավատում են, որ կյանքը միանգամայն պատահաբար է ծագել: Բայց որքան գիտությունն ավելի խորն է ներթափանցում կենդանի օրգանիզմների կառուցվածքի մեջ, այնքան ավելի շատ կասկածներ են ի հայտ գալիս կյանքի պատահական ծագման հարցում: Որքան ավելի շատ է գիտությունը հասկանում կյանքի բարդությունը, այնքան պակաս հավանական է դառնում կյանքի ծագման նրա գլխավոր տեսությունը՝ աթեխստական էվոլյուցիան: Քննարկե՛ք սա:

## ԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԸ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Ծննդոց 3.21, Սաղմու 104.29,30, Հովհաննես 1.4, Հռոմեացի 5.6-11,  
Գաղափացի 3.13, Մատթեոս 27.46:

### **Հիշելու համարը**

«Քանզի ինչպես Աղամով ամենը մեռնում էն, այնպես էլ Քրիստոսով  
ամենը կենանանում էն» (Ա Կորնիքացի 15.22):

Աստվածաշնչում մենք կարդում ենք, որ Աղամն ու Եվան արարվել էին Աստծո պատկերով՝ առանց որևէ բարոյական թերության: Նրանք ունեին ազատ կամք, ինչը նրանց սիրելու հնարավորություն էր տալիս: Ապստամբելով Աստծո դեմ՝ Աղամն ու Եվան հայտնվեցին սատանայի իշխանության ներքո (լրեն Եքրայեցի 2.14), ինչի պատճառով ամբողջ աշխարհը նույնապես հայտնվեց նրա իշխանության ներքո: Բայց Հիսուսը եկավ, որ քանդի սատանայի գործերը (Ա Հովհաննես 3.8) և մեզ ազատի նրա ձեռքերից: Փրկիչը դա արեց՝ մահանալով մեր փոխարեն և մեզ կյանք պարզեցելով: Խաչի վրա Հիսուսը հանուն մեզ մեղք դարձավ (Բ Կորնիքացի 5.27) և ապրեց բաժանումը Հորից, որ բերում է մեղքը: Իր մահով Հիսուսը վերականգնեց փոխհարաբերությունները Աստծո և մարդկանց միջև, որոնք խզվել էին Աղամի ու Եվայի մեղքի պատճառով:

Այս բոլոր հարցերը տրամաբանորեն կապված են արարման պատմության հետ: Այն կրկին հայտնվում է մեր հայացքի առջև՝ որպես Արարի Աստծո գորության վկայություն: Տիրոջ ստեղծագործ գորությունը դրսնորվում է նաև Իր զավակների մեջ նոր սիրու ստեղծելու մեջ (Բ Կորնիքացի 5.17), այն Նրա կերպարը նորոգում է մեր մեջ և վերականգնում է Նրա հետ մեր փոխհարաբերությունները:

**Միաշաբթի**

**մարդի 17**

## ՃՆԹԻՆ ԱՅԳՈՒՄ

Ինչպես բոլորիս հայտնի է, առաջին մարդիկ՝ Աստծո պատկերով ստեղծված կատարյալ արարածները, ընկան մեղքի մեջ, որը մահ բե-

թեց: Մարդիկ նախազգուշացված էին վտանգի մասին և հասկանում էին ասվածը: Եվան նոյնիսկ օձի համար կրկնեց Աստծո խոսքերը: Բայց նրանք, միևնույնն է, մեղանչեցին: Պատահում է, որ մենք էլ, խարված Եվայի նման, ընկնում ենք մեղքի բակարդը, բայց լինում է նաև, որ, Ադամի նման, մենք մտադրված ենք մեղանչում: Բոլոր դեպքերում, մենք մեղավորներ ենք՝ մեղավոր Աստծո օրենքի խախտման մեջ:

**Կարդացե՛ք Ծննդոց 3.9-15-ը: Ի՞նչ պատասխանեց Աստված Ադամի ու Եվայի մեղքին:** \_\_\_\_\_

---

Աստված դատավարություն, անգամ՝ «դատաքննություն» սկսեց: Այդ քննության նպատակը այն չէ, որ Աստված իմանա այն փաստերը, որոնք Նրան առանց այդ էլ հայտնի էին: Նպատակն այն էր, որ զույգը հնարավորություն ունենա ընդունել պատասխանատվությունն իր արարքների համար, ինչը քայլ է դեպի ապաշխարություն և վերականգնում: Աստված հարցրեց նրանց, թե ինչ է տեղի ունեցել, և նրանք, թեկուզ դժկամորեն, խոտովանեցին իրենց արածը: Թեև նրանք մեղավոր էին, թեև նրանց մեղքը անմիջապես ունեցավ իր հետևանքները, առաջին ավետարանական խոստումը նրանց տրվեց դեռևս Եղեմում (տե՛ս Դաս 6-ը):

**Կարդացե՛ք Ծննդոց 3.21-ը: Է՞լ ինչում դրսևորվեց Աստծո շնորհը:** \_\_\_\_\_

---

Մահը եկավ ամենաանսպասելի ձևով: Ադամի ու Եվայի անհապաղ մահվան փոխարեն մահացավ մի, հնարավոր է՝ անգամ մի քանի անմեղ կենդանի: Առաջին անգամ Ադամը տեսավ մահը, և դա, իհարկե, նրան հսկայական ցավ պատճառեց: Հետո կենդանուց հանեցին կաշին, դրանից հազուս պատրաստեցին Ադամի ու Եվայի համար և ծածկեցին նրանց մերկությունը: Ամեն անգամ նայելով այդ հազուսաթին կամ զգալով այն սեփական մարմնի վրա՝ նրանք հիշում էին կատարվածի ու կորպածի մասին: Բայց ամենից ավելի դա ծառայում էր իբրև Աստծո շնորհի հիշեցում:

**Անկասկած, մենք պետք է շատ երախտապարտ լինենք մեր հանդեպ Աստծո շնորհի համար: Ննարավո՞ր է ավելի լավ դրսևորել այդ շնորհակալությունը, քան գթասրտություն ցուցաբերելով շրջապատողների հանդեպ: Ո՞ւմ հանդեպ (անգամ դրան ոչ արժանի) դուք կարող էիք գթասրտություն դրսևորել հենց հիմա:**

## Մեղքն ու մահը

Աղամին ասված էր. երբ նա մահանա, կվերապառնա այն հողին, որից վերցվել էր (*Կոնսուլուց 3.19*): Սիևնոյնը տեղի է ունենում նաև մեզ հետ: Ուշադրություն դարձրենք՝ մենք չենք վերածվում կապիկների, քանի որ նրանցից չենք ստեղծվել: Մենք ստեղծվել ենք հողից, և մահանալով՝ վերադառնում ենք հողին:

**Կարդացե՛ք Ծննդոց 2.7-ը, Սաղմոս 104.29,30-ը, Հովհաննես 1.4-ը, Գործը առաքելոց 17.24,25-ը: Մեզ համար ի՞նչ նշանակություն ունեն այս տեքստերը: Ի՞նչ ծշմարտություն պետք է արտացոլվի մեր կյանքում:**

Կյանքը զարմանահրաշ բացառիկություն է: Մեզ թվում է, թե մենք ամեն ինչ զիտենք կյանքի մասին, սակայն նրանում առեղծվածային դեռ շատ բան կա: Կենդանի օրգանիզմը բաժանելով բաղկացուցիչ մասերի՝ մենք միայն տարատեսակ աստոմներ ու մոլեկուլներ ի հայտ կրերենք: Բայց եթե նույնականի մոլեկուլները հավաքենք մի անորի մեջ ու տարացնենք, նրանց միջով էլեկտրական հոսանք բաց բռնենք կամ ցանկացած այլ փորձ ու հնարք կատարենք, մենք, միևնույն է, կյանք չենք ստանա: Չկա «կյանք» անունով առանձին տարր, որը գոյություն ունի կենդանի մարմնի կամ կենդանի բջջի մեջ: Կյանքը պատկանում է ողջ կենդանի համակարգին, ոչ թե բջիջներից կտրված մի տարրի:

Մյուս կողմից, մենք շատ բան զիտենք այն մասին, թե ինչպես առաջացնել մահ: Մարդի անհաշիկ եղանակներ ու միջոցներ է հայտնագործել սպանելու համար: Այդ մեթոդներից մի քանիսը ցնցում են՝ ի հայտ բերելով մեր մեղավոր սրտերի բռնությունն ու դաժանությունը: Մենք կարող ենք սպանել, բայց չենք կարող կյանք ստեղծել: Միայն Աստված կարող է կենդանի օրգանիզմներ ստեղծել: Գիտնականները փորձել են կյանք ստեղծել՝ համարելով, որ եթե իրենք կարողանան դա անել, կլարողանան նաև բացատրել, թե ինչու չեն հավատում Աստծուն: Սինչև այժմ ոչ մի փորձ հաջողությամբ չի պատկանի:

**Կարդացե՛ք Եսայիա 59.2-ը: Մեղքն ինչպե՞ս է ազդում կենսատուի հետ մեր փոխհարաբերությունների վրա:**

Եթե կյանքը բխում է միայն Աստծուց, ապա Նրանից անջատումը կտրում է մեզ կյանքի աղբյուրից: Աստծուց այդպիսի բաժանման ան-

Խուսափելի արդյունքը մահն է: Անգամ եթե որևէ մեկն ապրի 969 տարի՝ Մաքուսաղայի ննան, նրա կյանքի պատմությունը, միևնույնն է, կավարտվի «Եվ նա մահացավ» բառերով: Սեղքն իր եռթյամբ հանգեցնում է կյանքից բաժանման, ինչի հետևանքը մահն է:

## **Երբ մենք դեռ մեղավորներ էինք...**

Աստվածաշունչը վկայում է, որ մարդկային մեղսավորությանը Աստծո պատասխանը թելադրված է ճշմարիտ անշահախնդիր սիրուց, և այդպիսի պատասխան է փրկազնումը: Աստված կարող էր միանգամայն արդարացիորեն Ադամին ու Եվային բռնել սատանայի կործանարար ուժի իշխանության տակ. չէ՞ որ նրանք կատարել էին իրենց ընտրությունը: Բայց Աստված գիտեր՝ Ադամն ու Եվան մինչև վերջ չին հասկանում, թե ինչ են անում, այդ պատճառով որոշեց նրանց հնարավորություն տալ՝ ստանալ ավելի շատ տեղեկատվություն և ևս մեկ անգամ ընտրություն կատարել:

**Կարդացե՛ք Յոռմեացիս 5.6-11-ը: Այս համարներն ինչպես են օգնում մեզ՝ հասկանալու Աստծո շնորհի եռթյունը:** \_\_\_\_\_

---

Երբ մեզ հետ անարդար եմ վարվում, մենք սպասում ենք, որ նախքան մեր փոխհարաբերությունները նեղացնողի հետ կվերականգնվեն, նա պետք է ներողություն խնդրի: Իհարկե, նման հանգամանքներում ներողությունը միանգամայն տեղին է: Խախտված փոխհարաբերությունների կատարյալ վերականգնումը ներառում է ներողություն խնդրելն ու զանցանքի համար պատասխանատվությունն ընդունելը: Բայց Աստված շապասեց, որ մենք ներողություն խնդրենք: Նա նախաձեռնությունն Իր ձեռքը վերցրեց: Երբ մենք դեռ մեղավորներ էինք, Նա Իրեն մահվան մատնեց համուն մեզ: Սա Աստծո սիրո հրաշալի արտահայտություն է: Որքա՞ն տարբեր է մեր վարքն Աստծո վարքից: Չէ՞ որ հաճախ վիրավորված լինելով՝ մենք չարություն ենք զգում և ավելի շուտ ձգտում ենք վրեժ լուծել, քան կարգավորել փոխհարաբերությունները, այնպես չէ՞: Մենք պետք է անփոփոխ կերպով շնորհակալ լինենք Աստծոն այն բանի համար, որ Նա մեզ հետ այդպես չի վարվում:

Մեղավորների հանդեպ Աստծո վերաբերունքն ի հայտ է թերում սիրո ճշմարիտ նշանակությունը: Դա ոչ թե պարզապես զգացմունք է,

այլ սկզբունքային վարք, որում յուրաքանչյուր ջանք ուղղված է նեղացնողին վիրավորվածի հետ հաշտեցնելուն և փոխհարաբերությունների վերականգնմանը: Աղամի ու Եվայի հանդեպ Աստծո վերաբերմունքը մեր հանդեպ Նրա վերաբերմունքի լուսաբանումն է:

«Գողգոթայում տեղի ունեցած իրադարձությունները պետք է խորունկ և ուժեղ զգացմունքներ արթնացնեն: Միանգամայն տեղին և արդարացված կլինի, եթե այս թեման որ մեջ հզոր վերելք ու ոգևորություն առաջացնի: Մենք երբեք չենք կարողանա լիովին հասկանալ ու ընդունել այն փաստը, որ Քրիստոսը, ով հավասարը չունի իր բարոյական որակներով ու բացարձակապես անմեղ է, պետք է ճաշակեր այդօրինակ տառապագին մահ և իր վրա կրեր այս աշխարհի բոլոր մեղքերի ողջ ծանրությունը: Մենք ի զորու չենք ընթանել այդպիսի սիրո ողջ լայնությունը, երկայնությունը, խորությունն ու բարձրությունը» (Ե. Ուայթ, Վկայություններ Եկեղեցու համար, հու. 2, 213): Մենք չենք կարող ընթանել Աստծո սերը, բայց ինչո՞ւ է այդքան կարևոր դրան ձգտելը:

## Նա, ով կրեց մեր մեղքերը

«Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք դառնալով. (Քանզի գրված է, թե՝ Անիծյալ լինի ամեն փայտից կախվածը)» (Գաղատացիս 3.13): Խորիե՛ք այս համարի զարմանալի նշանակության մասին՝ Քրիստոսի Աստվածայնության համատեքստում: Սա ի՞նչ է մեզ ասում այն մասին, թե Աստված ինչ որոշեց անել հանուն մեր փրկության: Ավելին, ի՞նչ է դա մեզ ասում Քրիստոսի զոհը չընդունելու ողջ ողբերգականության մասին: \_\_\_\_\_

---

Իր վրա վերցնելով մեր մեղքերի պատիմը և մահանալով Աստծուց բաժանված՝ Հշտուր կատարեց Եղեմի այգում ի սկզբանե տրված խոստումն այն մասին, որ կնոջ սերունդը կշախչախի օձի գլուխը: Նրա զոհը հնարավոր դարձեց Աստծո և մարդկության հաշտեցումը և ի վերջո կհանգեցնի տիեզերքում չարի վերջնական ոչնչացմանը (Եբրայեցիս 2.14,15, Հայտնություն 20.14):

**Կարդացե՛ք Մատթեոս 27.46-ը՝ Գաղատացիս 3.13-ի համատեքսում: Յիսուսի խոսքերն ի՞նչ են բացահայտում այն մասին, ինչի միջով Նա անցավ խաչի վրա:**

---

Խաչի վրա Քրիստոսը հանուն մեզ Իր վրա կրեց մեղքի անեծքը: Նա Նրա դիրքի փոփոխությունն էր Հոր առջև: Չոհի գառը, բերվելով գոհասեղանի վրա, մահն իր վրա վերցրեց մեղափորի փոխարեն: Նոյն կերպ, երբ Քրիստոսը խաչ բարձրացավ, Նրա կարգավիճակն Աստծո առջև փոխվեց: Զրկված Հոր մերկայությունից՝ նա ճաշակեց մեր մեղքից առաջ եկած անեծքը: Այլ խոսքերով՝ Հիսուսը, ով միշտ մեկ էր Աստծո հետ, վերապրեց բաժանումը Նրանից, ինչը Էլեն Ուայրը նկարագրել է որպես «Աստվածային գորությունների բաժանում» (Ե. Ուայր, Զեռազիր 93, 1899): Որքան էլ բարդ լինի մինչև վերջ այդ ճշմարտությունն ըմբռնելը, մենք բավականաշափ գիտություն ունենք՝ հասկանալու, որ մեր փրկազննան համար աննախադեպ գին է վճարվել:

## **Նոր արարումը**

Ավետարանյան մեծ լուրջ կենտրոնացած է մեր տեղը գրաված Հիսուսի մահվան վրա: Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերը, կրեց պատիժը, որը արդարացիորեն մերն էր: Ինչպես մենք արդեն տեսանք, Քրիստոսի փոխարինական զոհն անխօնիորեն կապված է արարման պատմության հետ: Քրիստոսը եկավ, որպեսզի ոչնչացնի մահը՝ Աստծո արարչագործությանը խորք այդ տարրը: Եթե, ինչպես պնդում են ոմանք, Աստված մարդկանց արարեր՝ օգտագործելով էվոլյուցիան, ապա մահն ամենին էլ անկանոնություն ու քննամի չէր լինի, այլ կհանարվեր Աստծո սկզբնական ծրագրի մի մասը: Այդ ժամանակ մահը կարևոր դեր կխաղար Աստծո կողմից մեր արարման մեջ: Զարմանալի չէ, որ քրիստոնյաները պետք է հերքեն թեխատական էվոլյուցիան, որն առաջարկում է արարման պատմության նոր ըմբռնում:

Ծննդոց գրքում գրի առնված արարման պատմությունը շատ կարևոր է հանուն մեզ Քրիստոսի մահն ըմբռնելու համար: Բացի դրանից, այդ պատումը նաև օգնում է հասկանալ փրկության ծրագրի մեկ այլ տեսանկյունը՝ Աստծո ստեղծարար աշխատանքը մեզանում, երբ մենք դառնում ենք Նրա սրբության մասնակիցները:

**Կարդացե՛ք Սաղմոս 51.10-ը, Եգեկիել 36.26,27-ը, Կողոսացիս 3.10-ը, Բ Կորնթացիս 5.17-ը: Այստեղ ի՞նչ խոստումներ են տըրված, որոնք կապված են Արարիչ Աստծուն ըմբռնելու հետ, ինչպես ցույց է տրված Ծննդոց գրքի առաջին ու Երկրորդ գլուխներում:**

---

Միայն Աստված կարող է նոր սիրտ ստեղծել: Մենք ինքններս չենք կարող դա անել, բայց պետք է հուսանք այն Նույն Արարչին, ով ստեղծել է աշխարհը և արարել մեր նախածնողներին: Դավիթը զիտակցում էր իր կարիքը և խնդրում էր Աստծուն այդ խնդիրը լուծել արարման միջոցով:

«Քրիստոսում մարդը» նոր արարած է: Հին մտածողությունը պետք է հեռացվի և փոխարինվի նոր զիտակցությամբ: Համաձայն Աստծո կամքի՝ մեր նոր զիտակցությունը ստեղծված է բարի գործերի համար: Այդպիսի արարումը գերբնական գործընթաց է, որը կատարվում է Սուրբ Հոգու գորությամբ: Աստծո ստեղծարար գորությունը, ինչպես ցույց է տրված սկզբնական արարման մեջ, մեզ վստահություն է տալիս, որ այդ նույն գորությունն ի վիճակի է փոխել մեր կյանքը և վերադարձնել Նրա հետ մեր կորսված փոխարարքերությունները:

**Դուք սեփական փորձով գացե՞լ եք, թե ինչ է նշանակում նոր արարած լինել Քրիստոսում: Դա ինչպե՞ս է ամեն օր դրսևորվում գործնական կյանքում: Ի՞նչ է փոխվում այդպիսի փորձառություն վերապրած մարդու կյանքում:**

## **Յեփագա ուսումնասիրության համար**

«Ծածով բաները մեր Եհովա Աստծո համար են, իսկ հայտնված բաները՝ մեր և մեր որդիների համար հավիտյան» (Երկրորդ Օրինաց 29.29): Աստված մարդկանց չի բացել, թե հատկապես ինչ ճանապարհով է իրականացվել արարման աշխատանքը: Մարդկային զիտությունը չի կարող ներքափանցել Ամենաբարձրյալի գաղտնիքների մեջ: Նրա ստեղծագործ գորությունը նույնական անընդունելի է, ոդքան և Նրա սերը» (Ե. Ուայթ, Նահապետներ և մարգարեներ, 113):

«Այդ անթափանցելի խավարով, ասես ծածկոցով, Տերը բաքցրեց Իր ներկայությունն ու Իր փառքը մարդկային աչքերից: Սուրբ հրեշտակների հետ միասին Նա իշավ խաչի մոտ: Հայրը չլքեց Իր Որդուն, բայց Նրա ներկայությունն անտեսանելի էր: Եթե Նրա փառքը շողար ամպի

միջից, այդ լույսը տեսած բոլոր մարդիկ կոչնչանային: Այն սոսկալի պահին Քրիստոսը չպետք է միխթարություն ստանար Հորից: Նա հնձանը միայնակ տրորեց, և մարդկանցից ոչ ոք Նրա կողքին չկար» (Ե. Ուայթ, «Դարերի փափազը, 753, 754):

## **Հարցեր քննարկման համար**

1. Ավետարանն ինչպե՞ս է կապված արարման պատմության հետ: Ծննդոց 1-3-ի ո՞ր առանձնահատուկ տեսանկյուններն են Ավետարանի հիմքը: Յիսուսի մասին լուրն ի՞նչ կերպ է հիմնվում Ծննդոց գրքի պատմական ճշնարտության վրա: Մարդն ինչպե՞ս կվարողանար պատմել Յիսուսի մասին պատմությունը, եթե չլինեին Աղամն ու Եվան:
2. Աստվածաշնչը ցույց է տալիս, որ արարումն ավարտվեց գերբնական գործընթացների շնորհիվ, որոնք անմատչելի են գիտությանը, բայց կարող են հասկանալի լինել միայն հասողության միջոցով: Այդ պատճառով զարմանալի չէ, որ Աստվածաշնչի և այսպես կոչված գիտության միջև գոյություն ունի դիմակայություն: Ինչո՞ւ չարժե ակնկալել, որ գիտությունը կբացատրի Աստծո ողջ ստեղծագործ աշխատանքը:
3. Ի՞նչ փոխադարձ կապեր գոյություն ունեն Ավետարանի, արարման և դատաստանի միջև, ինչպես ցույց է տրված Յայտնություն 14.6,7-ում:
4. Քրիստոնեության քննադատները հայտարարում են. Յիսուսը կանխավ գիտեր, որ, թեկուզ և հնքը կմահանա, միւնույն է, երեք օր անց հարություն կառնի: Այդ պատճառով, ասում են նրանք, ի՞նչ առանձնահատուկ բան կա Նրա մահվան մեջ, եթե Նա գիտեր, որ դա հավիտենական չէ: Մատքեռս 20.19 տեքստն ինչպե՞ս է «Դարերի փափագից» վերը բերված հատվածի հետ մեկտեղ օգնում պատասխանել այդ հայտարարությանը:

## ԵՎ ԿՐԿԻՆ՝ ԱՐԱՐՈՒՄ

**Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.**

Հայոցնություն 21.1-5, Ծննդոց 3.19, Ա Կորնթացի 15.52-58, Ծննդոց 6.11-13, Եսայիս 11.6-9, Հովհաննես 14.1-3:

**Հիշելու համարը.**

«Բայց Նրա խոսքումի պես նոր երկնքի ու նոր երկրի ենք սպասում, որոնցում արդարություն է բնակվում» (Բ Պետրոս 3.13):

Բ Պետրոս 3.10-13 հատվածում Պետրոսը նկարագրում է երկնքի ու երկրի ճակատագիրը: Ե'վ երկիրը, և՛ երկինքը՝ այն ամենի հետ միասին, ինչ գտնվում է նրանցում, կոչնչանան: Բայց դա պատմության ավարտը չէ, քանի որ կստեղծվեն նոր երկինքն ու նոր երկիրը:

Նայե՛ք հնի և նորի միջև եղած հակադրությանը: Առաջինում գերիշխում է մեղքը, իսկ երկրորդում բնակվում է արդարությունը: Հակադրությունը չէր կարող լինել առավել վառ կամ բացարձակ:

Այդ խոսումները նաև հստակ կերպով ցույց են տալիս, որ իբրև Արարիչ՝ Աստծո դերը չի ավարտվել երկրի առաջին արարման ժամանակ: Այն չի ավարտվի նաև այն աշխատանքով, որը Նա կկատարի մեզանում՝ վերատեղծելով մեզ Քրիստոսում: Աշխատանքը շարունակվում է: Այն նույն Տերը, Ով մի ժամանակ ստեղծել է աշխարհը իր Խոսքի գերբնական գորությամբ, այն կրկին կստեղծի՝ նոյնպես գերբնական ճանապարհով:

Փաստորեն, առանց արարման այդ վերջին գործողության՝ բոլոր նախորդները կավարտվեին ոչնչով: Նոր երկինքն ու նոր երկիրը մեզ տրված Աստծո խոսումների գագաթնակետն են:

**Միաշաբթի**

**Մարդի 24**

## Նոր սկիզբ

Եթե մի հարցում Աստվածաշունչն ու գիտությունն ունեն ընդհանուր տեսակետ, ապա դա այն է, որ մեր երկիրը հավիտյան գոյություն

Հի ունենալու: Գիտնականները համարում են (գոնե, այդպես են վկայում նրանց որոշ ենթադրություններ), որ պատահականության այն նույն անտարբեր ու անհմաստ ուժերը, որոնք գոյության են կոչել երկիրն ու կյանքը նրա վրա, ի վերջո կոչնչացնեն այն: Աստվածաշունչը նաև սովորեցնում է, որ երկիրը հավիտյան գոյություն չի ունենալու և իսկապես ոչնչանալու է: Սակայն գիտության առաջարկած սցենարում երկրի ոչնչացումը ամեն բանի անդառնալի ավարտն է: Ի տարրերություն սրա՝ աստվածաշնչյան սցենարը ցույց է տալիս, որ աշխարհի վերջը կդառնա կատարելապես նոր, հիասքանչ, հավիտենական դարաշրջանի սկիզբը:

**Կարդացե՛ք Հայտնություն 21.1-5-ը: Ապագայի ի՞նչ պատկեր է ներկայացված տեքստերում: Ի՞նչ հրաշալի խոստումներ են սպասում իրենց կատարմանը: Ինչո՞ւ Աստված կարող է այդ անել մեզ համար:** \_\_\_\_\_

Նոր կյանքի լավագույն խոստումներից մեկն այն է, որ տառապանքներն ու մասիր ընդդիշտ կվերանան: Միանգամայն ակնհայտ է, որ Աստված մեր երկրային կյանքը չի դիտարկում որպես ինչ-որ դրական բան: Մահն ու տառապանքները չեն եղել արարման մեջ, որի մասին Աստված ասաց. «շատ բարի է» (Ծննդոց 1.31): Դրանք օտարածին, անկող հյուրեր են: Նրանք երբեք չպետք է դառնային սկզբնական արարչագործության մասը, և նոր արարման մեջ նույնական նրանց համար տեղ չի լինելու: Հիսուսն եկավ, որպեսզի ոչնչացնի դրանք, և մենք այլևս երբեք ստիպված չենք լինի ապրել դրանց առկայությամբ:

Նոր արարումը նոր սկիզբ է կրում: Մեղքի ճակատագրական փորձառողջուններ կավարտվի: Այդ փորձառողջան բոլոր արդյունքներն առկա են, դրանք ակներն են՝ մեղքը բերում է մաս ու տառապանք, իսկ Աստծո օրենքը կյանքի օրենքն է:

Ինչպես Աստված նոր երկինք ու նոր երկիր էր ստեղծում սկզբում, այնպես Նա կրկին նոր երկինք ու նոր երկիր կստեղծի, իսկ դրանց հետ միասին մեզ նոր սկիզբ է առաջարկվում: Միայն Աստված, միայն Արարիչը կարող է այդ անել մեզ համար: Եվ այդ ամենը մենք ձեռք ենք բերում Հիսուսի սիրանքի շնորհիվ, որ կատարվել է հանուն մեզ: Առանց փրկության ծրագրի մենք ոչ մի բանի հույս չինք ունենք՝ այն ամենից ավելի, ինչ առաջարկում է ժամանակավոր կյանքը, իսկ դա բավականին նույլ հեռանկար է:

**Ինչո՞ւ են մեզ համար այդքան կարևոր նոր կյանքի խոստումները:**  
**Ինչպիսի՞ն կլիներ մեր կյանքն առանց դրանց:**

## Յողից դեպի կյանք

**Կարդացե՞ք Ծննդոց 2.7-ը և 3.19-ը: Ինչի՞ց ստեղծվեց Ադամը, և ինչի՞ց հանգեցրեց նրա մեղքը:** \_\_\_\_\_

---

Աստված Ադամին արարեց հողից, և նա կենդանի հոգի դարձավ: Ադամի կյանքը կշարունակվեր այնքան ժամանակ, քանի դեռ նա փոխսհարաբերությունները կպահպաներ Աստծո հետ: Մեղանչելով՝ նա բաժանվեց կյանքի Աղբյուրից, ինչի արդյունքում մահացավ և կրկին հող դարձավ:

**Կարդացե՞ք Եսայիհ 26.19-ը և Դանիել 12.2-ը: Ի՞նչ է տեղի ունենում հողում ննջածների հետ:** \_\_\_\_\_

---

Հարության մասին խոստումը քրիստոնյաներին հույս է պարզեւում: Հորն այդ հույսն արտահայտեց՝ ասելով. «Նա վերջը պիտի կանգնի հողի վրա, և իմ մորքը այսպես բափվելուց հետո. այն ժամանակ իմ մարմնից տեսնելու եմ Աստծոն» (Հոր 19.25,26): Հավատարիմների համար մահը ժամանակավոր է: Ադամին հողից արարած և նրան կյանք պարզեւած Աստված գիտի՝ ինչպես մարդկանց բարձրացնի հողից: Հարությունը լինելու է արարման նույնպիսի գործողություն, ինչպիսին եղել է Ադամի սկզբնական արարումը:

**Կարդացե՞ք Ա Կորնթացիս 15.51-58-ը: Այստեղ շարադրված ո՞ր ուսմունքն է անխօելիորեն կապված Ծննդոց գորի արարման պատմության հետ:** \_\_\_\_\_

---

Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ արդարների հարությունը տեղի է ունենալու ակնթարթորեն: Ինչպես և մարդու առաջին արարումը, դա լինելու է գերբնական իրադարձություն, որտեղ ամեն բան Աստված է անելու: Այդ ամենը բացարձակապես չի համապատասխանում թեհստական էվոլյուցիային: Ի վերջո, եթե Աստված մտադիր չէ միլիոնավոր տարիներ ծախսել էվոլյուցիայի համար, որպեսզի մեզ կրկին ստեղծի, այլ դա կատարելու է ակնթարթորեն՝ անտեսելով էվոլյուցիան, այդ դեպքում Նա, անշուշտ, առաջին անգամ էլ կարող էր

ստեղծել մեզ՝ անտեսելով էվոլյուցիան: Այդ պատճառով, ինչպես և բոլոր աստվածաշնչյան ճշնարտությունները, հարության հույսը ևս մեկ աստվածաշնչյան վկայություն է, որը հերքում է թեխստական էվոլյուցիան:

Խորհեք. Եթե այդքան կարևոր իմանարար հարցը, ինչպիսին արարումն է, գործնականում լուսաբանված չէ գիտության կողմից, դա մեզ ի՞նչ պետք է ասի այլ ոլորտներում դրա սահմանափակված լինելու մասին:

## **Երեքարթի**

## **մարդի 26**

### **Մարդու իշխանության վերականգնումը**

Յամեմատեք Շննդոց 1.28-ը Յովիաննես 12.31-ի հետ: Ի՞նչ կարգավիճակ ունեին Աղամն ու Եվան արարված աշխարհում: Ո՞վ հափշտակեց իշխանությունը և դարձավ այս աշխարհի իշխանը:

---

---

Աղամի վրա էր դրված աշխարհի տիրապետումը: Սեղանչելով՝ նա այդ իրավունքը զիջեց սատանային: Այժմ սատանան է արարչագործության վրա դրսուրում իր ուժը, այդ պատճառով ամենուրեք մենք տեսնում ենք բարոյական քայլայում և բռնություն:

Հաղթանակ տանելով խաչի վրա՝ Հիսուսը երկիրը ետ գրավեց սատանայից (լրեն *Մարդեռու 28.18, Հայրմություն 12.10, Հովհաննես 12.31*): Եվ թեև սատանան առաջվա նման գործում է երկրի վրա և կործանում է այն, մենք կարող ենք ուրախանալ՝ իմանալով, որ նրա օրերը հաշված են, քանի որ խաչի վրա Հիսուսի հաղթանակը երաշխավորում է դա:

**Կարդացեք Բ Տիմոթեոս 2.11,12-ը և Յայտնություն 5.10-ը: Ի՞նչ ճշնարտություններ են բացահայտված այս համարներում: \_\_\_\_\_**

Փրկվածներին իշխանություն է տրվելու՝ որպես թագավորների ու քահանաների: Թագավորելու գաղափարը ենթադրում է որոշակի իշխանություն, քահանայության գաղափարը նշանակում է փոխհարթերություններ պահպանել Աստծոն և մյուս արարածների, հնարավոր է՝ անգամ այլ աշխարհների բնակիչների միջև, որոնք երբեք չեն իմացել մեղքն ու նրա հետևանքները:

«Աստծո փրկագնված ժողովրդի առջև ուսումնասիրության համար կբացվեն տիեզերքի բոլոր գանձերը: Մահվան

կապանքներից ազատագրված՝ նրանք կկառավարեն անխոնջ մտքի թուչը դեպի հեռավոր աշխարհներ, որոնք խորապես ցավում էին մարդկային տառապանքների համար և ցնծագին օրիներգերով ողջունում էին յուրաքանչյուր հոգու փրկությունը։ Անարտահայտելի իհացմունքով երկրի զավակները կհաղորդակցվեն չընկած էակների հետ, ովքեր նրանց հետ կկիսեն իմաստության ու գիտելիքների այն օանձերը, որ իրենք հայտնագործել են երկար դարեր Աստծո ստեղծագործ արարքները դիտելու ընթացքում» (Ե. Ուայթ, Մեծ պայքար, 677)։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «հաղորդակցվել չընկած աշխարհների ցնծությանն ու իմաստությանը» արտահայտությունը։ Մենք ի՞նչ կարող ենք սովորել չընկած էակներից, նրանք ի՞նչ կարող էին սովորել մեզանից։

## **Վերականգնումը շարունակվում է**

Սեր աշխարհում գիշատչությունը կենդանիների սովորական կենացածն է։ «Սննան շղթա» եզրույթը կիշեցնում է մեր բնապահպանության մեջ գիշատչության դերի մասին։ Մեզ դժվար է պատկերացնել աշխարհն առանց դրա։ Բայց սկզբում բոլոր ցանքային կենդանիները սնվում էին կամաչ խոտով (*Ծննդոց*)։ Ոչ ոք որևէ այլ բանով չէր սնվում։ Ծննդոց 1.30-ում ոչինչ չի հիշատակվում ծովային կենդանիների մասին, բայց, հավանաբար, միևնույն սկզբունքը գործում էր նաև այն-տեղ, որովհետև, եթե Աստված դիտեց Իր ողջ արարչագործությունը, Նա հայտարարեց, որ այն «շատ բարի է»։

**Կարդացե՛ք Ծննդոց 6.11-13-ը, 9.2-4-ը։** Բնության մեջ ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան անդրջրիեղեղյան ժամանակ-ներում։ Բնության մեջ ի՞նչ հետագա բացասական փոփոխություններ տեղի ունեցան մարդկանց և կենդանիների փոփոխաբերություններում ջրիեղեղից հետո։

Առաջվա խաղաղ բազավորությունը լցվեց ապականությամբ, բրոնությամբ ու չարիքով։ Դրանք մեղքի հետևանքներն են։ Այն աշխարհը, որ մի ժամանակ շատ բարի էր, դարձավ այնքան վատը, որ աղաղակում էր սեփական կործանման մասին։

Մարդու մեղանչումից հետո կենդանիներն սկսեցին վախենալ մարդկանցից։ Դա կարելի է ասել բոլոր էակների մասին, որոնք ապրում

Էին ջրում, ցամաքում և օդում: Այդպիսի իրավիճակը կտրականապես տարբերվում էր սկզբնականից: Ըստ ամենայնի՝ այդ ժամանակ կենդանիների հանդեպ մարդու իշխանությունը բոլոցավ:

**Կարդացե՛ք Եսայիա 65.25-ը, 11.6-9-ը: Մեր ներկայիս աշխարհում գոյություն ունեցող փոխհարաբերություններն ինչո՞վ են տարբերվում Աստծո կողմից ապագայում խոստացված փոխհարաբերություններից:**

Գեղեցիկ բանաստեղծական լեզվով Եսայիան հայտնում է, որ նոր երկրում բռնություն չի լինելու: Արատավորությունն ու դաժանությունը՝ անդրշրիեղեղյան աշխարհի բնութագրերը, որոնք աղաղակում էին դրա կործանման մասին, տեղ չեն գտնելու նոր երկրում: Դա լինելու է ներդաշնակության ու համագործակցության աշխարհ, խաղաղ թագավորություն: Մենք այնքան ենք վարժվել բռնությանը, զիշատչությանն ու մահվանը, որ մեզ համար դժվար է ինչ-որ այլ բան պատկերացնել:

**Ավետարանն անխօթելիորեն կապված է վերականգնման հետ: Թեև միայն Աստված կարող է կատարել վերջնական վերականգնումը, մենք ի՞նչ որոշումներ կարող ենք ընդունել այսօր՝ ինչ-որ կերպ նպաստելու կյանքի բարելավմանը:**

## **Հինգամթի**

**մարդի 28**

### **Աստծո հետ փոխհարաբերությունների վերականգնումը**

«Նախքան մեղքի աշխարհ մտնելը՝ Ադամն ազատորեն հաղորդակցվում էր իր Արարշի հետ» (Ե. Ուայր, Մեծ պայքար, էջ 5):

**Կարդացե՛ք Ծննդոց 3.24-ը, Ելից 33.20-ը, Երկրորդ Օրինաց 5.24-26-ը: Մեղքն ինչպես ազդեց այն սերտ փոխհարաբերությունների վրա, որ գոյություն ունեին մարդու և Աստծո միջև:**

---

Մեղքը խզեց մարդու և Աստծո փոխհարաբերությունները: Աստված առաջին զույգին հեռացրեց Իր ներկայությունից՝ հանուն նրանց իսկ անվտանգության: Մարդիկ այլևս չեին կարող բացեիրաց տեսնել Աստծո երեսը:

Սակայն Տերը սեփական ցանկությամբ, չնայելով սուկալի գնին, որ Ինքն ստիպված էր լինելու վճարել, կյանքի կոչեց փրկության ծրագիրը՝ վերականգնելով խախտված փոխհարաբերությունները:

**Կարդացե՛ք Հովհաննես 14.1-3-ը և Յայտնություն 22.3-5-ը: Դի-  
սուսն ի՞նչ խոստում թողեց աշակերտներին իր խաչելությունից  
առաջ, և ինչպե՞ս կատարվեց այդ խոստումը:**

---

Աստված և մարդը կմիանան, բարեկամական հարաբերություններ կհաստատեն և կհանդիպեն դեմ առ դեմ: Երկրի վրա չի լինի ոչ մի անեծք, և ամեն կորսվածքը կվերադարձվի: Փրկազնվածներին նոր շրջակա մի-  
ջավայր կպարզենի, նոր կյանք, նոր տիրապետություն, նոր աշխարհ՝  
շրջական արարչագործության հետ փոխհարաբերություններում՝ և  
նոր փոխհարաբերություններ Աստծո հետ: Այժմ կիրականանա մարդ-  
կանց արարման նախասկզբնական նպատակը: Աստված, նարդկային  
ընտանիքը և ողջ արարչագործությունը գտնվում են ներդաշնակության  
մեջ, և այդ ներդաշնակությունը կտևի հավիտյան:

**Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել վայելել Աստծո հետ սերտ  
հաղորդակցությունն արդեն իհմա՝ նախքան նոր երկնքի ու նոր  
երկրի արարումը: Մենք ի՞նչ որոշումներ ենք ընդունում՝ Աստծո  
հետ մեր փոխհարաբերությունների վրա դրականապե՞ս, թե՝ բա-  
ցասաբար ազդող:**

## **Հետպագա ուսումնասիրության համար**

«Եվ հավիտենականության գիրկն անցնող տարիներն ավելի ու  
ավելի խորն ու փառավոր ճշմարտություններ են բացահայտելու Աստ-  
ծոն և Քրիստոսի մասին: Եվ գիտության ավելացմանը զուգընթաց մե-  
ծանալու են սերը, երկյուղածությունն ու երջանկությունը: Որքան մար-  
դիկ ավելի շատ ճանաչեն Աստծուն, այնքան նրանք ավելի շատ են  
հիանալու Նրանով: Եվ երբ Հիսուսը նրանց առջև բացի փրկազնման  
հարաբերությունները և սատանայի դեմ մեծ պայքարում զարմանահրաշ  
ձեռքբերումները, փրկազնվածների սրտերը բոցավառվելու են էլ ավելի  
պոռքկուն սիրով, էլ ավելի մեծ հիացմունքով են նրանք նվազելու ոսկե-  
տավիդները, և անթիվ-անհամար ձայններ միանալու են փառաբանու-  
թյան հզոր օրիներգին...»

Մեծ պայքարն ավարտված է: Մելք ու մեղավորներ այլևս չկան: Ողջ  
տիեզերքը մաքուր է: Անհամար արարածների մեջ բարախում է  
համաձայնության և ցնծության միևնույն զարկը: Անեղոյն տարածության

բոլոր անկյուններում կյանքի, լույսի և ուրախության աղբյուրներ են հոսում Նրանից, ով արարել է ամեն ինչ: Փոքրագույն ատոմից մինչև խոշորագույն գալակտիկաները՝ ամեն շնչավորն ու անշունչը իրենց անխամրելի գեղեցկությամբ ու կատարյալ զննությամբ հռչակում են «Աստված սեր Է»» (Ե. Ուայք, Մեծ պայքար, 678):

## **Յարցեր քննարկման համար**

1. Հնարավորինս շատ համարներ գտնե՞ք, հատկապես՝ Յայտնություն գրքում, որոնք նկարագրում են վերականգնված երկիրը: Դասարանում քննարկե՞ք այդ համարները: Նոր երկրի ի՞նչ բնութագրեր եք դուք համարում հատկապես հրապուրիչ, և որո՞նք՝ ավելի դժվար հասկանալի:
2. Ինչպե՞ս է Ծննդոց 1 և 2-ում շարադրված արարման դավանաբանությունը կապված նոր երկնքի ու նոր երկրի արարման դավանաբանության հետ: Մենք ինչպե՞ք կհասկանայինք այդ վերստեղծումը, եթե թեխստական էվոլյուցիան ճիշտ լիներ:
3. Կարդացե՞ք Յոռմեացիս 8.18-ը և Բ Կորնթացիս 4.16,17-ը: Ինչի՞ մասին է այստեղ խոսում Պողոսը, և մենք ինչպե՞ս կարող ենք միշտարվել այդ խոսքերով:
4. Ստորե՞ք Ավետարանի ուսմունքի մասին «Վերստեղծման» համատեքստում: Ի՞նչ է ենթադրվում վերստեղծում ասելով: Ի՞նչը պետք է վերստեղծվի: Դա ինչպե՞ս պետք է տեղի ունենա: Մենք ի՞նչ դեր ենք խաղում այդ ողջ գործընթացում:
5. Նոր երկնքի և նոր երկրի մասին խոստումն ի՞նչ է մեզ բացահայտում Աստծո բնավորության մասին:

---

## **ՀԱՍԱՑԱՆՑԻ ՅՈԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՈՐՈՇ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

ԾԴ դասերի էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել համացանցում (ինտերնետ), այցելելով Եկեղեցու կայքը՝ [www.adventist.am](http://www.adventist.am)

ԾԴ դասարաններում քննարկելու հարցերը դուք կարող եք գտնել այցելելով [www.christian7habits.blogspot.com](http://www.christian7habits.blogspot.com) հասցեում գտնվող բլոգը:

Ստորև ներկայացվող ռեսուրսներում Դուք կարող եք գտնել այլ նյութեր ևս:

[adventist.am](http://adventist.am) - ՅՈԱ Եկեղեցու Հայաստանի միության կայք

[elpidos.narod.ru](http://elpidos.narod.ru) - ԿՄ ԾԴԱԾ բաժնի կայք (այս կայքը չի թարմացվում)

[christian7habits.blogspot.com](http://christian7habits.blogspot.com) - հովիվ Պավել Սարգսյանի բլոգ, այս բլոգում կարող եք գտնել այլ գործընկերների կայքերի հասցեներ

[studymybible.blogspot.com](http://studymybible.blogspot.com) - Աստվածաշնչյան դպրոց

[eskristonyaem.ru](http://eskristonyaem.ru) - Ֆեյսբուքյան էջ

---



Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ  
2013թ. I եռամսյակ

## **ՍԿԻԶԲԸ**

Լ. Ջեյմս Գիբսոն

Գլխավոր խմբագիր՝	Պավել Սարգսյան
Թարգմանությունը և	
համակարգչային շարվածքը՝	Մերինե Աբոյան
Վերստուգող՝	Մարթա Սիմոնյան
Գրական խմբագիր՝	Ալվարդ Մադոյան
Համակարգչային ձևավորող՝	Կորյուն Կակոյան